

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԱՍՏԱ

ԵՐԵՒԱՆ 1992



9(47.925)


ՀՊ-91 ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

հշ.

# ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2985

(Ք.ա. 28-27-ըդ դարեր)



ԵՐԵՒԱՆ 1992

## Հանձին ԿԱՄԵՆ ԱՎԵՏԻՍՑԱՆԻ

աշխատությունը նվիրվում է հանուն հայրենիքի  
գոհած ազատամարտիկների պայծառ հիշատակին:

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԺՈՒՐՆԱԼ  
Խ-ԽԱՐԴԱՐԱԳՐԻ

Երևան ար-13-21-2

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ

-ԴԵՊԻ ԵՐԿԻՐ  
ՄԱՏԵՆԱՑԱՐ  
ԹԻՎ 8

## Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Ծնորմիվ հնագետների արդեն երկու դար շարումակվող աշխատանքների այսօր հայտնի են Հին աշխարհում գիր ու գրականություն ստեղծած մի քանի քաղաքակրթություն։ Դրանցից մեկը (ըստ որոշ ուսումնասիրողների՝ հնագոյնը) շումերական քաղաքակրթությունն է։ Հարավային Միջագետքում (որ շումերները կերտել են իրենց քաղաքակրթությունը) կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվեցին հազարավոր շումերագիր կավե ամրողական և բեկորներով պահպանված սալիկներ։ Դրանց վերծանումը ցոյց տվեց, որ շումերները ստեղծել են հարուստ և բազմաժամբ գրականություն, որը մեծապես ազդել է ոչ միայն հնուսագա միջագետքյան, այլև ողջ առաջավորասիրական մտքի ու գրականության ձեռավորման ու զարգացման վրա։ Այսօր հայտնի են ավելի քան հարյուր հիսում գրական հուշարձանների բնագրեր, որոնք լույս են ափում հնագոյն պատմության ուսումնասիրության շատ հարցերի վրա<sup>1</sup>։

Շումերները Հարավային Միջագետքի տարածքում ապրել են ստեղծագործել են Ք. ա. 5-րդ հազարամյակի վերջից մինչև Ք. ա. 2-րդ հազարամյակի սկիզբը։ Հնագիտության տվյալները հնավաստում են, որ հնուսագա շումերական քաղաքակրթության ստեղծողները մինչեւ Հարավային Միջագետքը յուրացնելը բնակվել են Հյուախային Միջագետքում և եղել են բարձր զարգացման հիսում Հաստումյան մշակույթի կրողները<sup>2</sup>։ Հեռանարդով Հայկական լեռնաշխարհի հարավային սահմաններից՝ հրանք երկար ժամանակ պահպանել են կապը լեռնաշխարհի հետ։ Հարավային Միջագետքը շումեր մետաղների, անտառանյութի և այլ հումքի աղբյուրներ, ինչը որ կարելի էր բերել Հայկական լեռնաշխարհից. այդ են վկայում շումերական սկզբնադրյուրները<sup>3</sup>։

1. Հարավային Միջագետքում կատարված պեղումների եւ նրանց արդյունքների մասին ընդհանրացնող ձեռով տես՝ Կրամեր Ս. Ի. История начинается в Шумере, М., 1965; Белицкий М.М. Забытый мир шумеров, М., 1980; Kramer S. N. The Sumerians, Chicago, 1963։

2. История Древнего Востока, ч.1, Месопотамия, М., 1983, с. 66-75. (բաժինը գրել է Վ. Կ. Աֆանասևան)։

3. Ք. ա. 22-րդ դարում Լազաշի 2-րդ հարստության տիրակալներից

Հետևուարար, Հայկական լեռնաշխադիմի մասին հնագոյն հիշատակությունները պետք է փնտրել շումերական գրավոր հուշարձաններում:

Ցավով պետք է նշել, որ շումերական քաղաքակրթության սունդած արժեքները մինչև օրս հայերենով չեն ներկայացվել ընթերցողին: Հայագիտության մեջ ես հավուր պատշաճի ուշադրություն չի դարձվել շումերական գրավոր հուշարձանների ուսումնասիրությանը, որոնցից մի քանիսը, ինչպես ցոյց կարվի ասորեն, Հայաստանի հնագոյն պատմության ուսումնասիրության կարևոր ակզրնադրյուրներն են:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գրքոյւկը նվազագույնը է շումերական արդյունքներու հիշատակիող Արատուա երկրի տեղադրության, պետության կառուցվածքի, տնտեսության, մշակույթի և այլ հարցերի ուսումնասիրությանը: Այն նաբառակ ունի ոչ թե վերջնական պատասխան տպան նրանում ներկայացվող հարցադրությունին, այլ հիմք դառնալու Ք.ա. 28-27-րդ դարերում Հայկական լեռնաշխադիմում հիշատակիող պետության ուսումնասիրության՝ արատուագիտության՝<sup>4</sup> համար: Սույն աշխատությունը, հավանաբար, զերծ չի լինի թերություններից ու բացրողություններից, եւ մենք շնորհակարգությամբ կը դումներ աշխատությանը վերաբերող բոլոր դիսուլությունները:

---

Գուշեան արծանագրություններում հիշատակում է այն երկրամասերի անունները, որոնցից փայտի, բարի ու մետաղի հոսք է բերել էնիմու տանարի կառուցման համար, որոնց բվում հիշվում նաև Հայկական լեռնաշխադիմ մարգերը (История Древнего Востока, ч.1, Месопотамия, с. 262-263; բաժինը գրել է Ի. Մ. Դյակոնավը):

Ծումերները Արատուայում երկրագործական ապրանքները փոխանակել են մետաղների եւ բանկարծերի բարերի հետ (տե՛ս սույն ուսումնասիրության «Արատուայի տնտեսությունը եւ ապրանքափոխանակային հարաբերությունները» վերնագիրի տակ):

4. Արատուայի վերաբերյալ գրվել են տասնյակ ուսումնասիրություններ, որոնց հեղինակները (քացի Մ. Գավուբնյանից եւ տողերիս հեղինակից) Արատուան տեղադրել են Աֆղանստանի, Իրանի տարրեր շրջաններում: Մեր խօրին համոզմամբ, Արատուան գտնվել է Հայաստանի տարածքում, եւ արատուագիտություն ասելով հասկանում ենք հայագիտության մի ճյուղ, որը զրադվում է Հայաստանի հնագույն պատմության մի շրջանի (Ք.ա. 28-27-րդ դդ) ուսումնասիրությամբ (հմնտ. հայասպիտություն, բիայնազիտություն եւ այլն):

# ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շումերական գրականության մեջ առանձնահատող տեղ է գրավում շումերական դյուցազնավեպը, որն իր ժամրում առաջինն է հնամաշխարհային գրականության մեջ և կարեսորվում է իրեն պատմական սկզբնաղբյուր։ Դյուցազնավեպն այսօր հայտնի է ինը վիպերգով, որոնցից հինգը տեղիկություններ են պարունակում Արասուայի և շումերա-արասուական հարաբերությունների մասին։ Դրանց բնագրերը գտնվել են շումերների պաշտանմունքային կենտրոն Նիպոլում (այնտեղ պաշտվում էր շումերների աստվածաբանայր Էնիլը)։

Դյուցազնավեպի առաջին պատումը «Էնմերքարը և Արասուայի գերազույն քողմը» վիպերգն է՝ մեզ հայտնի հնագույն վիպերգը։ Այն շուրջ 20 լրիկ ու բեկորներով պահպանված սալիկներից վերականգնել եւ վերծանել է ամերիկացի Չշանավոր շումերագետ Ս. Ն. Քրամերը, 1952 թվական<sup>1</sup>։ Վիպերգի ուսումնասիրությամբ գրադվել են բազմաթիվ հայտնի շումերագետներ, որոնց ուսումնասիրություններն ի մի բնրելով՝ Ի. Տ. Կանեվան 1964 թվականին հրատարակել է լրացված բնագիրը<sup>2</sup>։ Վիպերգը բաղկացած է 637 տողից։

Երկրորդ՝ «Էնմերքարը և Էնսուպշահիրամնան» (հնուազա ճռչագրումամբ՝ «Էնմերքարը և Էնսուփեշդամնան») վիպերգի բնագիրն ամրոցությամբ շի հրատարակելիք Զեռքի տակ տնեցել ենք վիպերգի բովանդակության շարադրամքը՝ որու բնագրային մեջքերումներով՝ կատարված Ս. Ն. Քրամերի կողմից<sup>3</sup>։

«Լոգայրանդան եւ Խոլոռում լեռը» կամ «Լոգայրանդան լեռների խավարում» վիպերգը մեզ է հասել առանց վերջին հասովածի և կազմում է 500 տողից ավելի։ Վիպերգի ուսումնասիրությամբ գրադվել են Մ. Լամբերը և Ք. Վիլքեն (որոնք, համապատասխանաբար, վիպերգին տվել են վերոնիշյապ անվանումները), սակայն երկուսն էլ բնագիրը հրատարակել են հասովածաբարը<sup>4</sup>։ Զեռքի տակ շոմենալով հիշյալ գիտնական-

1. Kramer S.N. Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia. 1952.

2 "Энмеркар и верховный жрец Аратты", транскрипции, перевод, комментарий и вводные статьи И. Т. Каневой. - ВДИ, 1964, N4, с. 190-225.

3. Kramer S.N. From the Tablets of Sumer, Indian Hills, Falcon, 1956, p. 232-234; Kramer S.N. History begins at Sumer, New York, 1959, p. 204-207.

4 Афанасьевна В. К. Гильгамеш и Энкиду, М., 1979, с. 98.

Ընդի ուստմասախրոբյունները, մենք օգտվել ենք Ա. Ն. Քրամերի աշխատություններից, որոնցում նողինակը բովանդակության շարադրանքի ներ տալիս է վիպերգի առանձին հատվածների բարզմանությունը<sup>5</sup>:

«Լոգալրանդան և Էնմերգարը» կամ «Լոգալրանդա» վիպերգի բնագիրը հրատարակել է Զ. Վիլքեն, որի կարծիքով այս վիպերգը նախորդի ներ կարող է կազմել միամական կոմպոզիցիա՝ բաղկացած շուրջ 900 տողից<sup>6</sup>: Այս վիպերգի համար ես մեզ իրքու սկզբանալրյուր են ծառայել Ա. Ն. Քրամերի աշխատությունները<sup>7</sup>:

«Գիգամեշը և անմահների երկիրը» Գիգամեշին ձուված հինգ վիպերգից միակն է, որում հիշատակվում է Արատուս երկիրը: Վիպերգի առաջին մասն ըստ 14 ապիկների վերականգնել և վերծանել է Ա. Ն. Քրամերը<sup>8</sup>: Այնունակա նորագյուտ հատվածների ու հրատարակված բնագրի ուսումնասիրությամբ գրադվել են շումերագետներ Ա. Ֆալքենշտայնը, Զ. Ռեյը, Լ. Մաքոուը, որոնց հնուազություններն ի մի բնիկով՝ Վ. Կ. Աֆանասյան հրատարակել է վիպերգի համահավաք բնագիրը, որը կազմում է 233 տող<sup>9</sup>:

Դրացագնավեպի բնագրերը բվագրվում են Ք. ա. 20-18-րդ դարերից շատերն սկսվում են «այն ժամանակներում, երբ բաժանվեցին ճակատագրերը մարդկանց», «այն ժամանակներում, երբ բաժանվեցին երկինք ու երկիր» արտահայտություններով, ինչը մտածել է տալիս, որ վիպերգում պատվիրող իրադարձությունները տեղի են ունեցել Ք. ա. 20-րդ դարից շատ ավելի վաղ: Վիպերգերի և շումերագիր այլ հուշարձանների (Լիպիտ-Խշապրի օրենքներ, Սամսուլումի, Ալ-Շիդինամի, Գիլղիմի արձանագրություններ) համեմատությունը, ինչպես նաև վիպերգերի լեզվի ու ոճի առանձնահատկությունների ըննությունը ցուց է տալիս, որ վիպերգերը գրի են առնվել սկսած Ք. ա. 22-րդ դարից (Ք. ա. 22-20-րդ դարերում նոր շումերական ժամանա-

5. Kramer S.N. From the Tablets of Sumer, p. 237-238; Kramer S.N. History begins at Sumer, p. 209-211.

6 Афанасьев В. К. Гильгамеш и Энкиду, с. 98-99.

7. Kramer S.N. From the Tablets of Sumer, p. 235-237; Kramer S.N. History begins at Sumer, p. 207-209.

Տես նաև Աֆանասьев В. К., Առաջն տեղում:

8. Kramer S.N. Gilgamesh and the Land of Living. JCSJ, 1947, p. 1-46

9. Поэзия и проза Древнего Востока, М., 1973, с. 130-135.

կաշրջանում են գրվել և գրի առնվել մեզ հասած շումերական գրական տուղթագործությունների մեջ մասը):

Վիպերգերում պատմվող դեպքերի ժամանակաշրջանը որոշվում է նրանցում Շիրագրվող հասարակության բնույթի ըննույթամբ: Ըստ վիպերգերի, այդ ժամանակներում շումերական քաղաք-պետությունները կազմում էին առանձին քաղաքական միավորներ, որոնց գրուստ կանգնած էին «էն» («գերազում քում») տիտղոսը կրող կառավարիչները: Գոյություն ունեին ավագներից կազմված խորհրդներ, որոնց ներ պեսոք է հաշվի նատեին կառավարիչները: Կառավարիչների իշխանությունը քավականին թույլ էր: Վիպերգերում Շիրագրվող հասարակությունը չէր կարող գոյություն ունենալ աքադական ժամանակաշրջանում (Ք.ա. 2316-2176թթ), երբ ամբողջ Միջագետքը միավորված էր Աքադի իշխանության ներք, և տիրում էին կենտրոնացված միասնական կարգերը: Վիպերգի դեպքերը չէին կարող տեսի ունենալ նաև Միջագետքի պատմության վաղինասությական շրջանի երրորդ փուլում (Ք.ա. 2500-2315թթ), քանզի այդ ժամանակ կառավարիչների իշխանությունը յե՛ քաղաքական, յե՛ տնտեսական առումով ավելի ուժեղ էր, քան վիպերգերի պատմած ժամանակաշրջանում: Վիպերգերում ներկայացվող հասարակության բնույթը համապատասխանում է վաղինասությական ժամանակաշրջանի առաջին (Ք.ա. 2750-2615թթ) և երկրորդ (Ք.ա. 2625-2500թթ) փուլերին<sup>10</sup>:

Վիպերգերում հիշատակվող դեպքերի ժամանակագրությունները ելավելի մեծ ճշությամբ կարելի են որոշել «Շումերական արքայացանկի» օգնությամբ: Այն գրվել է Ուրի 3-րդ հարաստության տիրապետության ժամանակաշրջանում Ք.ա. 2112-2003 թթ: Նրանում տես են գտել շումերական գահակալների անունները, գահակալման ժամկետները, նշանավոր գործերն ու այլ տեղեկությունները<sup>11</sup>: Ըստ արքայացան-

10. Վերօդրյալ ժամանակագրական վերլուծությունը վերցրել եմ Ի. Տ. Կանեվայի ուսումնասիրությունից (Канева И. Т. Шумерский героический эпос как исторический источник. - ВДИ, 1964, №3, с. 245 - 247)՝ այն լրացնելով Վ. Ա. Ցակորտնի կազմած ժամանակագրական աղյուսակի տվյալներով (История древнего Востока с. 486 - 491):

11. Jacobsen Th. The Sumerian King List, Assyriological Studies, N 11, Chicago, 1939.

Կի դյուցազնավեպի հերոսներ Էնմերքարը, Լուգալբանդան և Գիգամենցը, համապատականաբարը, Ուրուկի (Ծումերի գլխավոր քաղաքներից, Աստվածաշնչում Արեք) առաջին հարաստության երկրորդ, երրորդ և հինգերրորդ արքաներն են: Ուրուկի առաջին հարաստությունն ունեցել է 12 արքա:

1.	Մեռինգաշեր	-325 տարի
2.	Էնմերքար	-420 տարի
3.	Լուգալբանդան	-1200 տարի
4.	Դումոզի	-100 տարի
5.	Գիգամենց	-126 տարի
6.	Ուրումնազ	-30 տարի
7.	Ռեգուլուզանան	-15 տարի
8.	Լարաշեր	-9 տարի
9.	Էննանադանան	-8 տարի
10.	Ուրգանեն	-36 տարի
11.	Մելամանան	-6 տարի
12.	Լուգալիգուր	-36 տարի <sup>12</sup>

Չնայած հարաստության առաջին հինգ արքաների գահակալման ժամկետների ակնհայտ շափազանցմանը, որը, հավանաբար, շումերների մեջ նրանց առավել հայտնի ու սիրված լինելու արգասիք է,<sup>13</sup> կան

12. Նույն տեղում, էջ 84-ից: Հմմտ. Դյակոնов И.М. Общественный и государственный строй древнего Двуречья. Шумер, М., 1959, с. 169-170.

13. Զի բացառվում, որ առաջին հինգ արքայի գահաժամկետները հաշված լինեն լուսնային ամիսներով, իսկ հետագայում սխալմամբ համարվեին տարիներ: Ծումերները լուսնա-արեգակնային օրացույց կիրառել են Ք.ա. 25-րդ դարից (Բնիքրման Յ. Хронология древнего мира, М. 1975, с. 19):

Լուսնա-արեգակնայինից ավելի վաղ հաշվումները կատարվել են լուսնային օրացույցով: Մեկ լուսնային ամիսը հավասար է 28,5 օրվա (Բադայան Հ., Օրացույցի պատմություն, Ե., 1970, էջ 12-14) եւ տարիները լուսնային ամիսներ համարելով՝ կստանանք, որ Ուրուկի առաջին հարաստության առաջին հինգ արքաները, հավանաբար, իշխել են 28, 34, 97, 8 եւ 11 տարի (Լուգալբանդայի 97 տարին գուցե վերաբերվում է նրա կյանքի, այլ ոչ թե իշխանության տարիներին. Վիպերգերը պատմում են նրա սիրամբների մասին մինչեւ իր գահակալելը՝ Էնմերքարի գահակալման օրով): Հարկ է նշել, սակայն, որ նույն սկզբումնով չի կարելի բացատրել «Ծումերական արքա-

բազմաթիվ փաստեր, որոնք հավաստում են այդ հարստության պատմականությունը<sup>14</sup>: Վերջին յոթ արքաների գահակալության ժամկետները կասկածի տեղիք չեն տալիս և միասին կազմում են 140 տարի: Միաժամանակ հայտնի է Ուրուկի առաջին հարստության անմիջապես հաջորդած Ուրի առաջին հարստության ժամանակաշրջանը (Ք.ա. 2500-2425 թթ)<sup>15</sup>: Ուրի առաջին հարստության տիրապետության սկզբից հետ գնալով 140 տարի՝ կտտանանք Գիղամեշի իշխանության ավարտի տարեթիվը՝ 2640 թիվը: Նշանակում է Ուրուկի առաջին հարստության հինգ արքան (որոնց մեջ են վիշտերգերի հերոսներ Էնմերգարը, Լուգարանդան և Գիղամեշը) իշխել են Ք.ա. 2750-2640 թվերի միջև, այսինքն՝ Ք.ա. 28-27-րդ դարերում:

Իրեն սկզբնաղբյուր կարենոր է նաև աքադական «Գիգամեշ» դյուցազնավեպը, որի համար գաղափարայուժեւոյին հիմք են հանդիսացել Գիգամեշի մասին շումերական վիպերգերը (հատկապես «Գիգամեշը և անմահների երկիրը» վիպերգը): Աքադական դյուցազնավեպը մնա է հասել մի քանի տարրերակով, որոնցից ամենաամբողջականը Նինվեինն է: Այն գրի է առնվել 12 պետակի վրա<sup>16</sup>: Դյուցազնավեպը երկու անգամ թարգմանվել է հայերեն<sup>17</sup>:

Սրանք են այն հիմնական սկզբնադրյուրները, որոնց ուսումնասիրությունը լուս է պիոռմ Հայաստանի Ք.ա. 28-27-րդ դարերի պատմության վրա: Նշենք նաև, որ մենք հնարավորություն չունեցանք ծանոթանայու Արատուային վերաբերող որոշ նորագյուտ սկզբանդրյուրների<sup>18</sup>, որոնց ուսումնասիրությունը մնում է ապագայի խնդիր:

յացանկում» հիշվող բոլոր չափազանցված գահաժամկետները:

14. Дьяконов И. М., Ծվ. աշխ. էջ 168-169:
  - 15.Միջազնութիւն հնագույն պատմությանը վերաբերող ժամանակագրական տվյալները տեսն Բիկերման Է., Եշվ. աշխ. էջ 175-185:
  16. Դյուցազնակեպը, Օրա Մասին մանրամասն տեղեկությունները եւ գրականության ցանկը տեսն Էպօս օ Գիլլագամեշե, перевод с аккадского, статья и комментарии И.М. Дьяконова, М.-Л., 1961:
  17. Ն. Մարտիրոսյանի թարգմանությամբ՝ Գիլզամեշ (Հին Արեւելի դյուցազնակեպ), Ե., 1963, էդ. Մարոյանի թարգմանությամբ՝ Հին Արեւելի պոեզիա (ՀԱՊ), Ե., 1982, էջ 101-169:
  18. Այդպիսի սկզբանալրյութերից է էրայի (Հյուսիսային Սիրիա) պեղումներից զտնված վիպերգի մի հատված, որում հիշվում են Գիլզամեշը

## ԱՐԱՏՏԱՆ ԵՐԿՐԻ ՏԵՂԱՀՐՈՒԹՅՈՒՆԸ

Շումերական վիպերգերն արժեքավոր տեղեկություններ են հադրդում Շումերի և Արատտայի միջև գոյություն ունեցած առևտրափոխանակային, դիվանագիտական, ռազմական հարաբերությունների, այդ երկրները կապող ճանապարհների մասին։ Վերջիններիս վերաբերող տեղեկությունների վերլուծությունն է հնարավորություն և տալիս գտնելու Արատտա երկրի տեղը։

Արատտայից Շումեր գնում էին գետով։

Արատտա երկրի տեղադրության հարցում կարենոր ծառայություն է մատուցում «Էնմերքարը և Էնսովքեշդաննան» վիպերգը։ Նրա բովանդակությունը հնատեյաբն է։

Արատտայի արքա Էնսովքեշդաննան ցանկանում էր, որ Շումերը և Եբրարկի Արատտային։ Նա ժողով է գումարում, որի ընթացքում արատտացի մի քորմ նրան առաջարկում է իր օգնությունը։ Քորմը խոստանում է նավարկել «Ռորովի գետով», հպատակեցնել քորոր երկրները «վերենից ներքեւ, ծովից մինչեւ մայրինների լեռները» և վերադառնալ հայրանակած ու հարուստ ավարով։ Արքան ընդունում է առաջարկը, իսկ քորմը հասնում է Ռորով, բայց անհաջողության է մատնվում և սպանվում։<sup>1</sup>

Այս վիպերգից ակնհայտ երեսում է, որ Արատտայից Շումեր գոյություն է ունեցել շրային ճանապարհ։ Զրային ճանապարհի գոյության մասին է խոտամ նաև «Էնմերքարը և Արատտայի գերազույն քորմը» վիպերգի առաջին հաստվածը, ըստ որի Ռորովի<sup>2</sup> տաճարները հնացել ու ճարճքել էին, որովհետեւ

ու Արատտա երկիրը (ոնս ՃՐԵՎԻԱ Ֆ. 1985, ս.334)։ Ըստ մի չստուգված բանավոր տեղեկության Արատտային վերաբերող տեղեկություններ են պարունակում նաև Միջազգետի միջին շրջանում գտնվող Մարի Բաղաֆ-պետության արլիիվերը։

1. Kramer S.N. From the Tablets of Sumer, p. 232-234; Kramer S. N. History begins at Sumer, p. 204-207.

2. Ռորովը շումերական Բաղաֆ-պետություն է։ Այն գտնվել է Միջազգետի

16. — Հավարկություն չեն կատարում,

17. — քարեր, բրոնզ, կապար, լաշվարդի կոտրներ

18. — միասին չեն բերում իրենց լեռներից...<sup>3</sup>

Դրանից հետո Էնմերքարը դիմում է պատերազմի աստվածութուն, որպեսզի վերջինս օգնի իրեն հնագանեցնելու արատուացիներին և ստիպի ըրանց շինանյութ և յանկարժեք քարեր բերելու և կառողելու տաճարներ Ռուբում, ինչից էլ պարզ է դառնում, որ նախկինում արատուացիները են շինանյութ ու բանկարժեք քարեր արտահանել Ծովմեր (բերված հատվածը հավարկության մասին նոյնպես վերաբերում է ըրանց, տե՛ս նաև տող 31-32).<sup>4</sup>

«Էնմերքարը և Էնուխբեշդաննան» վիպերգը տալիս է նաև այդ շրային ճանապարհի անունը՝ «Ուրուկի գետ»: Ուրուկով հոսել է միայն Եփրատ գետը, հետեւաբար, շրային ճանապարհը երկու երկրների միջև պետք է եղած լիներ հենց Եփրատը, ուստի և Արատուան պետք է փնտրել Եփրատի ավագանում: Ուրուկից հարավ՝ մինչեւ Պարսից ծոց, շումերական հողեր էին: Արատուայից հավարկությունը չէր կարող կատարված լինել ծոցով, այլապես բնագրում «Ուրուկի գետի» փոխարեն կիհշատավեր Պարսից ծոցը, որը շումերական առբյուրներում սովորաբար կրում է «Արեւածագի ծով» կամ «Հավերծ աղմկող ծով» անունը: Ուրեմն Արատուան պետք է որոնել Ուրուկից հյուսիս:

Վիպերգերում բազմից եշվում է, որ Արատուան բարձր լեռնային երկիր է: Ուրուկից մինչեւ Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանը (Հայկական Տավրոսի լեռները) Եփրատի ավագանում որեւէ լեռ նային շրջան չկա. ամենաբարձր կետը չի գերազանցում 1000 մետրը: Ուստի և այդ տարածքում չէր կարող գտնված լինել Արատուա երկիրը: Ավելի հյուսիսում ակտոնքներից մինչեւ Հայկական Տավրոսի լեռները Եփրատը հոսում է Հայկական լեռնաշխարհով, որից էլ հետեւում է, որ Արատուան եւս, մասամբ կամ ամբողջովին, գտնվել է Հայկական լեռ նաշխարհի տարածքում:

Հայաստանից Եփրատով Միջագետք հավարկության մասին տե-

հարավում Եփրատի ափին, եւ եղել է Ուրուկի հինգ հարստությունների բաղաբական միավորումների կենտրոնը:

3. "Энмеркар и верховный жрец Аратты", с. 205.

4. Նույն տեղում:

դեկտյուններ են պահպանվել անտիկ հնայինակների նրկերում, որոնք ավելի արժանահավատ են դարձնում Հայկական լեռնաշխարհից դեպի հարավ՝ ապրանքներ փոխադրելու և ուղմական արշավաճք կատարելու վիճակների տեղեկությունները:

«Այժմ ես կպատմում այն մասին, ինչը ինձ այս քաղաքից հետո թվում է ամենազբարձրագույնը: Նավերը, որոնցով (ասորեստանցիները) նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կոր են և ամբողջովին կաշեապատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, Երանք կը ըրում են ուղենիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավեն ծածկով, նավի հաստակի նման... Այդ նավերը պատրաստում են ե՛ շատ մեծ, ե՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարրողություն»<sup>5</sup>:

Մեկ հնայինական (ասոտիլյան) տաղանդը հավասար է 26,2 կիլոգրամի<sup>6</sup>: Չափի ժամանակակից միավորով արտահայտված՝ ստացվում է, որ Հայաստանից Բաբելոն նավարկած ամենամեծ նավերն ունեցել են շուրջ 130 տոննա տարրողություն: Եթե անգամ շափազանցված է այս թիվը, վկայությունն այնուամենայնիվ, խոսում է հօգուտ Եփրատով Հայաստանից նավարկություն կատարելու վիաստի:

Մեկ այլ հետաքրքրիր տեղեկություն է հաղորդում Դիոդորոս Սիկիլիացին. «Սեմիրամիսը (Ծամիրամը) Հայկական լեռներից մի քար կը ընեց, երկարությունը 130 տոննաշափի, իսկ լայնը եւ հաստությունը՝ քանի եւ հինգ. նա ջորիների և եզների բազմաթիվ լծերով (այդ քարը) իշեցրեց դեպի գետը և այնտեղից բարձեց լաստի վրա և դրանով հոսանքն ի վար բերելով մինչեւ Բաբելոնիա, այն կանգնեցրեց ամենաերեսերի ճանապարհի կողքին, որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ունանք այն, իր ձեռի պատճառով, անվանում էին կոթող, որը և համարում են, այսպես կոչված, յոթ հրաշալիքներից մեկը»<sup>7</sup>:

5. Հերոդոտոս, Պատմություն ինը գրից, թարգ. Սիմոն Կրկյաշարյանի, Ե., 1986, էջ 79-80:

6. Գերոդոտ, История в 9-и книгах, Л. 1972, с. 546, /раз. Аентичные миры/.

7. Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, առաջարանը, ծանօթագր. Եւ թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի Ե., 1985, էջ 27:

Շումերից Արատուա տանող ճանապարհն  
ամցնում էր խոտիմերի երկրով.

Դյուցազնավեպում հիշատակվում է Շումերն ու Արատուան կապող երեք ճանապարհ, որոնցից մեկը ջրային, երկուար՝ ցամաքային: Հատկանշական է, որ Արատուայից Շումեր գնում էին ջրային ուղիով, իսկ Շումերից Արատուա տանող երկու ճանապարհն ել ցամաքային էին: Սա եւս մի լրացոցիշ փաստարկ է, որը խոտում է Արատուան Հայկական լեռ ճաշխարհում տեղադրելու օգտին. եթէ Արատուա-Շումեր ջրային ուղին անցներ Պարսից ծոցով, ապա այն կը հնարին երկրողմանի, և Շումերից Արատուա նոյնպես կը ճնային ճավով: Սակայն հիշատակված ջրային ուղին միակողմանի է, որի պատճառը Եփրատի հոսանքի ուժգնությունն է<sup>8</sup>:

Երկրորդ ճանապարհը հիշվում է «Լոգալրանդան և Խոտում լեռ» (կամ «Լոգալրանդան լումերի խավարում») վիպերգում: Վիպերգը պատմում է հետևյալը:

Շումերական գործի գյոխ անցած՝ Էնմերքարն արշավում է դեպի Արատուա: Արշավանքի մասնակիցների մեջ էր Լոգալրանդան: Ճանապարհին, երբ գործը հանում է Խոտում երկիր («զեռ» և «Երկիր» բառերը շումերերենում գրվում են նոյն կերպ), Լոգալրանդան հիշվանդանում է: Թողնելով հրան տեղում, գործը շարունակում է արշավանքը՝ պայմանով, որ վերադարձին վերցնեն Լոգալրանդայի մարմինը և տանեն հայրենի երկիր: Այնոնքուն պատմվում է, թե ինչպես է աստվածների (հատկապես արեւի աստված Ռիտու) բարեհանության շնորհիվ առողջանում Լոգալրանդան և ինչ արկածներ է ունենում<sup>9</sup>:

8. Շարունակելով պատմել Հայաստան-Բարելոն նավարկության մասին՝ Հերոդոտոսը գրում է. «Նավելով Բարելոն հասնելուց եւ բեռք վաճառելուց հետո նրանք վաճառքի են հանում նաեւ նավերի կմախը եւ ամրող ծղոտը, իսկ կաշիները բարձում են զրաստմերի վրա եւ վերադառնում արմենների մոտ: Բանզի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել՝ գետի արագության պատճառով»: (Պատմություն ինը զրից, էջ 80):

9. Kramer S.N. From the Tablets of Sumer, p. 237 - 238; Kramer S.N. History begins at Sumer, p. 209 - 211.

Խոտումը ըստ վիպերգի գտնվել է Շումերի և Արատուայի միջև: «Ենմերքարը և Ենտկրեշդաննան» վիպերգի քննուրումից պարզվեց, որ Արատուան գտնվել է Շումերից հյուսի՝ Հայկական լեռնաշխարհում: Ըստ «Ենմերքարը և Արատուայի գերագոյն քորմը» վիպերգի, Շումերի հյուսիսային հարեւանը Ուրի երկիրը էր (հետագայում Աքաղի բազավորություն):<sup>10</sup> Ուրին գտնվել է Կենտրոնական Միջազգետքում: Հետեւաբար, Խոտումը պետք է փնտրել Կենտրոնական Միջազգետքի և Հայկական լեռնաշխարհի միջև: Մեր այս կարծիքը հիմնավորվում է այլ փաստերով եւս:

Խոտում տեղանոնը կազմված է խոտի ցեղանոնից և -ում մասնիկից<sup>11</sup> (հնմտ. Լուղորում, Կոտորում և այլն): Խոտում երկիրը տեղադրություն է Զագրոսի հյուսիսային լեռնաճյուղերին, Վանա լճից հարավ-արևելքը<sup>12</sup> (հետագայում խոտիների հիմնական կենտրոնը դառնում է Հյուսիսային Միջազգետքը):<sup>13</sup> Շարումակեղով Շումեր-Խոտում ճանա-

10. «Էնմերկար և ...», с. 208.

11. Kramer S.N. The Sumerians, p. 275.

Ըստ Ա. Կիֆիշինի հալորդման, նույն

կարծիքին է նաև շումերազիստուքյան հիմնադիրներից Ա. Ֆալբենշթայնը (Կիփին Ա. Географические воззрения древних шумеров при патеси Гудеа

(2162-2137гг. до н.э.). - Палестинский сборник, вып. 13(76), М.-Л., 1965, с.71):

12. Hrouda B. Die Churrer als Problem archäologischer Forshungen, Archaeologia Geographica, August, 1958, S. 14.

Խոտին խոտիների իմբնանվամումն է: Այդ անվամբ են նրանք հիշվում խերական, եղիպտական և հին երրայական աղբյուրներում: Շումերները խուռիների երկիրը Հյուսիսային Միջազգետքում կըչել են Սուրբիր: Աբարենում այդ երկրը հանդիս է եվիլ Սուրբարու (կամ Շուրբարու) անունով, իսկ նրա բնակիչները կըչվում են սուրբարեցիներ: Սուրբարուի տարածքը շարունակվում է կօչվել նույն անունով նաև այն ժամանակ, երբ այդ տարածքում այլեւս խոտիներ չկային, իսկ Ք.ա. 7-6-րդ դարերում Սուրբարուն հանդիս է զալիս որպես «Աստրեստան» անվան համանիշ: Ամենայն հավանականությամբ, այդ անվանումը ոչ թե խոտիներին, այլ մինչխոտիական ժամանակներից Հյուսիսային Միջազգետքին տրված տեղանուն է (Дьяконов И.М. Языки древней Передней Азии, М., 1967, с.114 - 120; Дьяконов И. М. Предыстория армян

Հյուսիսային Միջագետքը)<sup>13</sup>: Տարումակելով Շոմեր-Խոտոռ ճանապարհը (Խոտոռը գտնվում էր Շոմերի և Արատուայի միջև), կրկին դուրս կցանք Հայկական լեռնաշխարհ, այս անգամ Վանս յնի ավազան:

Այսպիսով, Արատուա երկրի տեղադրության հարցի քննությունը ցույց է տալիս, որ այդ երկրի կազմի մեջ են մտել առնվազն Եփրատի Հայկական Տավրոսով անցման շրջանը և Վանա լին ավագանը:

## Դեպի «անմահների երկիր» Արատուս

Միջազներյան գրականության մեջ մեծ տեղ է գրավում անմահության գաղափարը և նրա փնտրութիւնը: Այդ պահեան է ընկած «Գիգամեշը» և անմահների երկիրը» վիպերգի հիմքում, որն էլ իր հերթին դարձել է աքադական «Գիգամեշ» դյուցազնավեպի գաղափարապահութեային սկզբնադրյութը:

Վիպերգի սկզբում Գիգամնչը որոշում է գնազ «անմահների երկիր», այնտեղ փառաքանել իր անունը ու անմահանապ: Նա իր մտադրության մասին հայտնում է Էնկիդովն շումերական վիպերգում Գիգամնչի ստրումին է, իսկ ավելի ուշ աքադական դյուցազնավեպում նրա ընկերը), որն էլ խորհուրդ է տալիս դիմել արեւի աստված Ռու

ского народа, Е., 1968, с.113-119):

Մինչեւ խոտիմերի Հյուսիսային Միջազգեսթ գալը շումերները նրանց կոչել են ըստ նրանց ինքնանվանման, որտեղից էլ խոռում տեղանունը: 13. Խոտիմերի մեջ հասած առաջին գրավոր հուշարձանները թվարկվում են Ք.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսավ եւ Վկայում են, որ այդ ժամանակաշրջանում նրանք գրադեցրել են Հյուսիսային Միջազգեսթի եւ նույն ուղղությամբ Տիգրիսի արեւելափերի տարածքը, իսկ նրանց վերաբերյալ այլ աղբյուրներում եղած տեղեկությունները խոսում են այդ ժամանակաշրջանում եւ Ք.ա. 2-րդ հազարամյակի սկզբին առաջավոր Ասիայում խոտիմերի լայն տարածման մասին (Дьяконов И.М. Языки древней Передней Азии, с. 114-120):

Հյուսիսային Միջազգեարքում խուսիները Ք.ա. 16-13-րդ դարերում

բոլին: Ուրուս համաձայնում է օգնել Գիլգամեշին և նրան է տալիս «մի մորից ծնված» յոթ մողական էակներ, որոնք կօգնեն Գիլգամեշին հասնելու «անմահների երկիր»։

44. Յորեն են նրանք,
- 44ա. Նրանք երկնային աստղեր են՝
- 44բ. Երկրի ճանապարհներն իմացող,
- 44գ. Երկինքներում աստղերի մեջ փայլող,
- 44դ. Դեպի Արատու ճանապարհը ցույց տվող,
- 44ե. Առեւտրականներին ճանապարհին ողենկցող,
- 44գ. Թշնամի երկրները զննող,
- 44է. Երկրի վրա աղավնու պես թռչող,
- 44ը. Լեռնային երկրները ճանաչող...<sup>14</sup>

Գիլգամեշին և Էնկիդուին միանում են հիսուն շամուսնացած երիտասարդներ, որոնց հետ նրանք հայրահարում են յոր լեռ, օգտագործում բոլոր մողական հնարասվորությունները, բայց չեն հասնում նախտակին: Գիլգամեշը քոմ է մտնում (հավանաբար լրացուցիչ օգնություն կամ խորհուրդ առանալող համար), ապա արթնանալով՝ երդվում է հայրեկ մայրիների լեռների տիրակապ Խովավային (աքաղականում խոսրաբար): Վիպերգերի որոշ տարրերակներում Գիլգամեշին ողղված խոսրում Խովավան Խոսում լեռով կոչում է հայր<sup>15</sup>:

Այնոնեւու պատմվում է Խովավայի դեմ Գիլգամեշի և Էնկիդուի տարած հաղթանակի մասին: Վիպերգն ավարտվում է Գիլգամեշին փառարանող տողերով<sup>16</sup>:

Վիպերգում հատկանշական է այն, որ «անմահների երկրի» ճանապարհին Գիլգամեշին օգնելու համար արեւի աստվածը նրան է տալիս «դեպի Արատու ճանապարհը ցույց տվող» մողական էակներ: Դրանից հետեւում է, որ «անմահների երկիրը» հենց Արատուան է կամ «անմահների երկիր» և Արատու գնում են նոյն ճանապարհով: Խակ երես ավելացնենք նաև, որ «Էնմերքարը և Արատուայի գերագույն քուրմը» վի-

ստեղծեցին իրենց նշանավոր Միտանի պետությունը (Ավետիսյան Գ. Շահագործություններ, Ե. 1984):

14. Поэзия и проза Древнего Востока, с. 131.

15.Kramer S.N. Gilgamesh and the Land of Living p. 45

16. Kramer S.N., Սշվ. աշխ., էջ 1-46: Поэзия и проза Древнего Востока, с. 130-135.

պերգում, շնայած Շումերի ու Արատտայի թշնամական հարաբերություններին, Արատտային բազմից տրվում է «սուրբ օրենքների երկիր» պատվանուն-մակդիրը<sup>17</sup>, կասկած չի մնա, որ Արատտան նոյն «անմահների երկիրն» է (տե՛ս նաև «Արատտան շումերների աշքերով» վերնագրի տակ):

Այս վիպերգում եւս կարեւոր տեղեկություններ կան Արատտա երկրի տեղադրության պարզաբանման համար: Ի՞շպես նշվեց, «անմահների երկիր» (Արատտայի) նախաբարին Գիլգամեշը պարտվելուն է մատնում մայրիների լեռների տիրակալ Խովավային, որն իրեն համարում է Խոտում լեռան որդի: Շումերական վիպերգում մայրիների լեռները որեւէ անոն չեն կրում, բայց հրանց կապը Խոտումի հետ մտածել է տալիս, որ մայրիների լեռները նույնպես գտնվել են Վանա լճից հարավ-արեւելք տարածվող լեռների (Կորդվաց, այժմ Հարյարի) շրջանում<sup>18</sup>: Աքադականում մայրիների լեռները Լիրանանի լեռներն են<sup>19</sup>, որն, ամենայն հասկանականությամբ, արտահայտություն է Սարգոն Աքադացու (Ք.ա. 24-23-րդ դդ.) ժամանակներից դեպի Լիրանան կատարված արշավանքների<sup>20</sup>:


Կարենի է թերեւ մայրիների լեռների մեր տեղադրությունը հիմնավորող մի անուղղակի փաստարկ եւս: «Էներքարը եւ Էնսոխքեշդան-Շահ» վիպերգում արատտացի քորմը խոստանում է արշավել Շումերի վրա եւ հպատակեցնել բոլոր երկրները «Ճովից մինչեւ մայրիների լեռ

17. " Թնմերկար և ... ", с. 208, 210, 218, 219.

18. Վ. Ա. Ցակորսոնը վերլուծելով Միջազգային սկզբնաղբյուրների տվյալները՝ ցույց է տալիս, որ Շումերները մայրի էին թերում ոչ թե Լիրանանից, այլ Շումերից արեւելք եւ հյուսիս-արեւելք ընկած լեռներից: Նա միաժամանակ նշում է մայրու մի բանի տեսակ՝ հիշատակված շումերական արյուրներում, որոնք առ այսօր անում են Հայկական լեռնաշխարհում եւ Զագրոսի լեռներում: Հեղինակը, սակայն, հիմք է ընդունել Արատտայի Շումերից արեւելք տեղադրման տեսակետը եւ, առանց կոնկրետացմենելու, հավանական է համարում մայրիների լեռների արեւելքում գտնվելը (Якобсон В.А. Куда Гильгамеш ходил за кедрами?. - Кавказско - близкневосточ-ный сборник. VIII, Тбилиси, 1988, с. 128-132):

19. ՀԱՊ, էջ 112:

20. Յակобсон В.А., նշվ. աշխ., էջ 131-132.



**Անդը»** (տե՛ս վերը): Մովս այստեղ Պարսից ծոցն է, իսկ մայրիների լու-  
ները՝ Կորդվաց լուների շրջանը. քուրմը խոստանում է հապատակնեցնել  
Ծովարից (Ծովառյալ) մինչև Արատուայի հարավային սահմանն ընկած  
տարածքը<sup>21</sup>.

Արատուայի Հայկական լեռնաշխարհում գտնվելը հավաստվում է  
այլ փաստերով ևս, որոնք կներկայացվեն «Արատուան շումերների  
աշքերով» բաժնում:

Նախորդ տեսակետների մասին.

Ինչպես տեսանք՝ Էնմերքարին, Լոգալրանդային և Գիլգամեշին  
ձևաված վլուպերգերի քննությունը թույլ է տալիս Արատուան տեղադրությունը  
Հայկական լեռնաշխարհում: Այժմ անդրադառնանք Արատուայի տեղա-  
դրությանը վերաբերող նախորդ ուսումնասիրություններին:

Արատուան նախկինում տեղադրվել է Աֆրանատանում<sup>22</sup>, Իրանի

---

Մայրու մասին շումերական աղբյուրներում հիշատակություններ կան  
Սարգսն Աբադացու (Ք.ա. 24-23-րդ դդ) արշավանդներից ավելի վաղ  
(Աֆանասьева В.К. Шумерская эпическая песнь "Гильгамеш и гора бессмертного",  
ВДИ, 1964, N1, с. 88-90):

21. Արատուայի սահմանների մասին որոշակի բիշ բան կարելի է ասել: Եփրա-  
տով նավարկության փաստը խոսում է հօգուտ Արատուայի սահմաններում  
Հայկական Տավրոսից կամ զոնե նրամով եփրատի գետանցից հարավ ընկած  
շրջանի ընդդրկման. Եփրատը Տավրոսի անցման շրջանում կազմում է շուրջ  
300 փորիկ շրվեծ (Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհա-  
գոտիքուն, Ե. 1984, էջ 41): Ենավարկելի է միայն Տավրոսի հարավային եւ  
նրանց հարավ ընկած շրջաններում: Խուռումից (Կորդվաց լեռների շրջան)  
հյուսիսի գոլմելու փաստը խոսում է Արատուայի Վանա լճի ավազանում գտնը-  
վելու օգտին: Զի բացառվում, որ Արատուայի մեջ ընդդրկված լինի նաև Ուր-  
միա լճի ավազանը, ուր Ք.ա. 8-րդ դարում հիշատակվում է Արատուա ամունով  
գետ (տե՛ս հաջորդ ենթավերնագիրը): Վերոհիշյալ երեք շրջանն էլ Ք.ա. 3-րդ  
հազարամյակում ընդդրկվել են Հայկական լեռնաշխարհի մշակութային գո-  
տուն մեջ (տե՛ս «Հայկական լեռնաշխարհը Ք. ա. 3-րդ հազարամյակում ըստ  
հնագիտության տվյալների» բաժինը):

22. Сарканиди В.Д. Бактрия сквозь века, М., 1984, с. 88;

Hansman J. F. The Question of Aratta-JNES, 1979, v. 37, N4, p. 336

տարբեր շրջաններում<sup>23</sup> և Հայկական լեռնաշխարհում<sup>24</sup>. Ավելորդ համարելով բոլոր տեսակետների մեկ առ մեկ քննարկումը, ստորև կանդրադառնանք այն երեք հիմնական կովաններին, որոնց հիմամբ կատարվել են այդ տեղադրությունները:

Առաջին փաստարկը «Ենթարքը և Արատուայի գերազույն քորմը» վիպերգում «Շոմեր-Արատուա ճանապարհի (Երկրորդ ցամաքային ճանապարհը) հիշատակումն է, որով դեսպանները հասնում են Արատու.

165. Նա բարձրանում է փայլող/<sup>25</sup> լեռը,

---

23. Այժմյան Լուրիստանի տարածքում / Kramer S. N. Enmerkar and the Lord of Anzu, p. 37f.; Կրամեր Ս.Ն. История начинается, в Шумере, с. 32., Белицкий С.Н. Забытый мир шумеров, с. 80-81, 91). Կասպից ծովի եւ Ուրմիա լճի ջզմում / Kramer S. N. The Sumerians, p. 37, 42, 45, 28-29, 257, 25/,

Էլամից արեւելք՝ Հնդկաստանի ճանապարհին (Կանева И.Т. Шумерский героический эпос, ВДИ, №3, с. 247 - 248), Կենտրոնական Իրանում (Массон В.М. Средняя Азия и Древний Восток, М. - Л., 1964, с. 233-235), Դիալա գետի վերին հոսանքում / Gordon E. J. The Meaning of the Ideogram KASKAL KUR - 'underground Water - course' and its Significance for Bronze Age Historical Geography. - JCS, 1967, 21, p. 72, n. 9, Քերմանի և Զարսի տարածքում / Majidzadeh J. The Land of Aratta. - JNES, 1976, v. 36, N 2, p. 105 - 107, 111f./, Ուրմիա լինց հարավ-արեւելք ընկած տարածքում Խօսիք Յ.Բ. Ранние контакты Месопотамии с северо-восточными странами, ВДИ, 1987;

24. Մեզանից առաջ Արատուայի Հայաստանում գտնված լիմելու վերաբերյալ տեսակետն էր առաջ բաշել Մ. Գավուբեյանը, որը, սակայն, բավականաչափ հիմնավոր չէր: «Հայ ժողովրդի ծագումը» (Մոնթրեալ, 1982) աշխատության մեջ, վկայակոչելով Ս. Ն. Քրամերի "The Sumerians" աշխատությանը, որում հեղինակն Արատուան տեղադրում է Կասպից ծովի եւ Ուրմիա լճի շրջանում, գտնում է, որ «անհավանական չէ, որ այս Արատուան գտնված լինի Ուրուատրի-Արարադ լեռներում» (էջ 28, ծանոթ.8): Ավելի ուշ՝ անզերեն մենագրության մեջ, դարձյալ հեղեղով նույն աշխատությանը, Արատուան առանց որեւէ լուրջ հիմնավորման նույնացնում է Մեծամորի հետ (որովհետեւ Մեծամորն այդ ժամանակաշրջանում ունեցել է աստղադիտարան եւ հարուստ մշակույթ), իսկ «Արատուա» անունը մեկնում իբրև Արա աստծո կամ ար (հետագայում հար-հայ) ժողովրդի երկիր (Armenia, Subartu and Sumer, Montreal, 1987, թ. 6-7).

Սուզալին և Անշան երկրին<sup>25</sup>

#### **168. Նախնարիվեց կրտսեր երգչի ճման:**

Մեծ լեռների վրայով.....

ու փոշով միջով նրա (Արատտայի գերազույն քրիմ) մոլոր զնաց:

171. Հինգ լեռ, վեց լեռ, յոր լեռ նա անցավ,  
բարձրացրեց աշքերը, մոտեցավ Արատստային,  
ոդրախ մտնելով Արատստավի արքունիքը՝ 26

174. իր տիրոց մեծության մասին հաղորդեց<sup>26</sup>:

Դեսպանը նախ կտապրում է փայլուն լեռան հնատ կապված, հավաքարար, ծիսական արարողություն, ապա «փոխարժնվում» կամական երկրամասերին, որից հնատ միայն հիշատակվում է «մեծ լեռների վրայով» և «փոշու միջով», անցնող նամապարբ դեպի Արատոս։ Պետք է ըկատել, որ Սուզային և Անշան երկրին «փոխարինվելը» կատարվում է մինչև նամապարբ ընկերը և կապ չունի նամապարբի ուղղության հետ (ինչպես որ կարծվել է)։ Սուզան և Անշանը գտնվում են Շումերից արեւոցը։ Ուրուկի հովանավոր աստվածութին, որի խորհրդով է նամապարբ և ընկեռում դեսպանը, Ինամնան էր՝ Լուսարեր (Վեմերա) մորորակի աստվածութին, «աստղն արեանձագի»<sup>27</sup>։ Արեներին (տվյալ դեսպոս Սուզային և Անշանին) խոնարհվելը կապված է Ինամնա աստվածություն պաշտամունքի հետ Մեր այս կարծիքը համբաւավում է վիաթերգի առաջին մասով, ըստ որի Ուրուկում գտնվող Ինամնա աստվածությունը պաշտամունքի տաճարներից մենք կոչվել են «Անշանի տուն»<sup>28</sup>։ Հարկ է հիշել նաև, որ վիաթերգերի մեզ հասած բնագրերի գրի առնվելոյ ժամանակաշրջանում (Ք.ա. 20-18-րդ դդ.) Շումերը գտնվել է կամական արքաների տիրապետության տակ<sup>29</sup> և կամական երկրամասերին (կամ նորանց աստ-

25. Սուլամ էլամի (հարավ-արեւմտյան Իրան) մայրաքաղաքն է, Աբենեն-յանների ժամանակաշրջանի ճմեռային արքայանիստ Շոշ Քաղաքը: Անշան Քաղաքը գտնվում է այժմյան Շիրազից 46 կիլոմետր հյուսիս: Էլամի պատմության վաղ փուլերում Սուլամ եւ Անշան երկիրը կազմու են էլամի ամբողջ տարածքը (Հինգ Ե. Գույդարտ Քամ, Մ., 1977, ս. 83):

26. "Энмеркар и ...", с. 209.

27. ՀԱՊ, էջ 89 (ժողովածուի միջազգետիյան գրական հուշարձանները քարգմանը է էդ. Սարոյանը):

28. "Энмеркар и...", с. 205.

29. История Древнего Востока, ч.1, Месопотамия, с. 340-341 (հոդվածը գրել է Ի. Ս. Դյանիսովը). История древнего мира, т.1. М., 1982, с. 125.

վածներին) «խոնարհվելը» կարող էր եւ լինել այդ տիրապետության արտամայտություն: Երկու դեպքում էլ Սուզայի եւ Աճշան երկրի հիշատակությունը կապ չունի ճանապարհի ուղղության հետ եւ չի կարող կը վան հանդիսանալ Արատուայի տեղադրության հարցում:

Երկրորդ փաստարկը լաջվարդ (լազորիտ) թանկարժեք քարի հիշատակումն է, որի հիմնան վրա Արատուան տեղադրվել է լաջվարդի հանքերով հարուստ կամ հրա տարածման ուղիներին մերձակա երկրամասերում: Արատուայի տեղորշման հարցին նվիրված մեր մի աշխատանքում հշել ենք, որ «մետադների ու թանկարժեք քարերի պահանջը հապատակեցման պահանջ է. լաջվարդ է պահանջում ե՛ւ շումերացի արքան Արատուայից, ե՛ւ, մի այլ տեղում, Արատուայի արքան՝ Շումերից: Հետեւաբար, լաջվարդի հիշատակությունը եւս տեղորշման առումով արժեքը չի ներկայացնում... Մետադների եւ թանկարժեք քարերի պահանջը կովան չէ նաև այն պատճառով, որ պահանջի մեջ կարող էին նշվել ոչ թե այն մատադներն ու թանկարժեք քարերը, որոնցով հարուստ էր Արատուան Ք.ա. 28-27-րդ դարերում, այլ՝ վիպերգի գրի առնվելու ժամանակ Շումերում առավել հայտնի ները»<sup>30</sup>: Այնոհանդերձ, պետք է հշել, որ լաջվարդի հիշատակությունը չի հակասում Արատուայի մեր տեղադրմանը: Բերենք մի քանի փաստ:

Ք.ա. 714 թվին Ասորեստանի արքա Սարգոն Բ-ը գրավեց ու թալանեց Մուծածիրի տաճարը, որտեղից ի թիվս բազմաքանակ այլ թանկարժեք քարերի ու մետադների, հափշտակեց մեծ քանակությամբ լաջվարդ<sup>31</sup>: Ասորեստանի լրտեսները պարբերաբար տեղեկություններ էին հաղորդում Վասի թագավորության մասին: Նրանցից մեկի «զեկուցագրում» հիշատակություն կա լաջվարդի հանքի մասին<sup>32</sup>:

Որոշ եվրոպական աղբյուրներում լաջվարդը կոչվում է «հայկա-

(հոդվածի հեղինակն է Ն. Վ. Կոզիրեւան):

30. Մովսիսյան Ա. Ե., Շումերական էպոսի Արատուա երկրի տեղադրության հարցի շուրջ.-ԼՀԳ, 1990, թիվ 7, էջ 71:

31. Дьяконов И.М. Ассиро-аввилонские источники по истории Урарту. - ВДИ, 1951, N2-4 /ніже АВИИУ, N49(6)., Հայ ժողովրդի պատմության բրեստումատիա (ՀԺՊԲ), Ե., 1981, էջ 24-26 (բաժինը կազմել է Հ. Կարազյանը):

32. АВИИУ, N 50(41).

**կան քար»<sup>33</sup>:** Բացի այլ լազվարդը կարող էր շփորվել նոյնատեսք այլ բանկարծեր քարի հետ<sup>34</sup>: «Աշխարհնացույց»-ը պահպանել է տեղեկություններ «Աևն բիբլոն» կոչվող թանկարծեր քարի մասին, որի արտաքինի և կարագրությունը համապատասխանում է լազվարդի տեսքին: Ըստ «Աշխարհնացույց»-ի և 13-րդ դարի մի վկայության այդ թանկարծեր քարի հանքերը գտնվել են Հայկական Տավուսի շրջանում<sup>35</sup>:

Եվ վերջին փաստարկը՝ օգտագործված նախորդ տառմասիրություններում, Սարգոս Բ-ի 714 բվի արշավանքի ընթացքում Արատուս անոնով գետի հիշատակումն է: Գետն այդ հիշատակիում է Ուրմիա լճի ավագանում<sup>36</sup>: Գետի և երկրի անոնների նոյնությունը, հավանաբար, պատահական է. երկիրը հիշատակվել է Ք. ա. 3-րդ հազարամյակում, իսկ գետը՝ Ք. ա. 8-րդ դարում:

Եթե այդ նոյնությունը պատահական չէ, ապա, հնարավոր է, որ Ուրմիա լճի ավագանը մտած լինի Արատուս երկրի տարածքի մեջ. հնագիտական նյութը Ք. ա. 3-րդ հազարամյակում նոյնատիպ է ոչ միայն Հայկական Տավուսի և Վանա լճի ավագանի շրջաններում, այլև ողջ Հայկական լեռնաշխարհի և Ուրմիա լճի ավագանի տարածքում (տե՛ս «Հայկական լեռնաշխարհը Ք. ա. 3-րդ հազարամյակում ըստ հնագիտության տվյալների» բաժնում): Իսկ եթե նոյնությունը պատահական չէ և Ուրմիա լճի ավագանը չի մտել Արատուսի սահմանների մեջ, ապա «Արատուս» անվան հայտնվելը Ուրմիա լճի ավագանում կարող է լինել Արատուսի տարածքից դեպի Ուրմիայի ավագան բնակչության մի հատվածի արտագոյի հետեւանք:

Այսպիսով, նախորդ տառմասիրություններում բերված հիմնական փաստարկներից և ոչ մենք չի կարող Արատուս երկրի տեղորոշման հարցի լուծման հիմք ծառայել:

---

### 33. Փերսման Ա. Ե. Օչերքի ու պատմությունների մասին, տ. 1, Մ., 1954, ս. 270.


Հեղինակը ենթադրում է, որ «հայկական» անվանումն արտահայտությունն է հայ առեւտրականների գործունեության: Այս ենթադրությունը մեզ խիստ անհավանական է բվում, այլապես Եվրոպայում «հայկական» պետք է համարվեր արեւելից բերվող թանկարծեր բարերի մեծ մասը:

34. Լազվարդը շփոթել են շափյուղայի (սապֆիր), պղնձի կապտագույն միացուրյունների հետ ( Փերսման Ա. Ե., Եշվ. աշխ. էջ 270-279):

35. Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհնացույց»-ի, Ե., 1963, էջ 91:

36. ԱՅԻՆԿ, N49(6); ՀՃՊԲ, էջ 24-25:

**ԱՐԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՆ Ք.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսում  
(ըստ շումերական դյուցազնավեպի)**



**Հայկական լեռնաշխարհի Ք.ա. 3-րդ հազարամյակի  
մշակութային գտտին** (առամց ազդեցության ոլորտների)

**ՈՒՐԻ - հնագույն երկիր Ք.ա. 3-րդ հազարամյակում**  
**Նիպուր - հնագույն բաղադրատու**  
**(Ծփրատ) - ժամանակակից աշխարհագրական անուններ**

## Քարտեղի հեղինակ՝ ԱՐՏԱԿ ՄԻԿԱՒՄՅԱՆ

## ԱՐԱՏՏԱՆ՝ ՇՈՒՄԵՐՆԵՐԻ ԱԳՔԵՐՈՎ

Նախորդ էջերում ասվեց, որ շնայած Շումեր-Արատուա հարաբեկությունների թշնամական լինելուն, «Հնմուքարը և Արատուայի գերագույն քորմը» վիպերգում Արատուան բազմից շումերների կողմից կոչվում է «սուրբ օրենքների երկիր»<sup>1</sup>. Նշանակում է՝ շումերների համար սուրբ երկիր էր այն տարածքը, որում այդ ժամանակաշրջանում բարձրացել էր Արատուա պետությունը (այսինքն՝ Հայկական լեռնաշխարհը): Բացի այդ, ըստ «Գիլգամեշը և անմահների երկիրը» վիպերգի, դեպի Արատուա էին ուղեւորվում անմահություն որոնող շումերական հերոսները<sup>2</sup>: Շումերական երգերում, սակայն, հերոսները չեն հասնում «անմահների երկիր», այլ բավարարվում են նրա ճանապարհին մայրիների լեռների տիրակալ Խուվավային՝ Խոտումի որդուն պարտության մատնելով<sup>3</sup>:

Աքադական «Գիլգամեշ» դյուցագնավենապը տեղեկություններ է պահպանել այն երկրի մասին, որ ապրում են ջրիներից հետո անմահություն ստացածները, որն էլ, ամենայն հավանականությամբ, շումերական վիպերգերում Գիլգամեշն էնկիդուի ընկերակցությամբ գնում էր «անմահների երկիր», փառաբանելու իր անոնն ու անմահանարու, ապա աքադական դյուցագնավեպում նրանք ուղեւորվում են դեպի մայրիների լեռներ՝ «ամենն ինչ չար է, քշենք աշխարհից» հշանաբանով<sup>4</sup>: Բազում փառավոր գործերից հետո մահանում է էնկիդուն, նեխում է նրա դին, և Գիլգամեշը մսորելով՝ «ես ինքս կմտնեմ, և չե՞մ դառնա արդյոք ինչպես

1. "Էհմերկար և ...", с. 208, 210, 218, 219.

2. Տես «Դեպի «անմահների երկիր» Արատուա» ենթաքածնում:

3. Տես «Շումերից Արատուա ճանապարհն անցնում է խուիների երկրով» ենթաքերնազրի տակ: Աքադական դյուցագնավեպում Գիլգամեշը նախ հասնում է «անմահների երկիր», որից հետո միայն Ուտնափիշտիմը նրան պատմում է ջրիների մասին: Ջրիների մասին շումերական երգի բնագիրը խիստ վնասված է եւ չի բացառվում, որ նախապես նրանում եւս եղած լիներ «անմահների երկիր» նկարագրությունը:

4. ՀԱՊ, էջ 112:

ԷՇԿԻՒԴՈՒՄ»<sup>5</sup>, որոշում է գնալ անմահություն փնտրելու.

Նա լսել էր լեռների մասին, որոնց անունը է Մաշտ,

20. Հենց որ այդ լեռներին նա մոտեցավ,

Որ այգալուան ու մայրամուան են ամեն օր

պահպանում,

Վերեւում հասնում են երկնային ձուլվածքին,

Ներքեւում նրանց կուրծքը սանդարամնուին է

հասնում,-

24. Մարդակարիճներն են պահպանում նրանց

դարպասները...<sup>6</sup>

Անցնելով Մաշտ լեռներով՝ Գիլգամեշը երկար դեզերտամներից հետո հանդիպում է Ռունափիշտիմին՝ շրինեղեղից փրկված հերոսին<sup>7</sup>, որին կնոջ հետ անմահություն շնորհվեց աստվածներից: Ռունափիշտիմը նրան պատմում է շրինեղեղի պատմությունը, որը բազմաթիվ աղերսներ ունի ավելի ուշ գրի առնված Աստվածաշնչի շրինեղեղի պատմության հետ<sup>8</sup>: Այսուհետեւ Ռունափիշտիմը հայտնում է Գիլգամեշին անմահության ծաղկի զաղտնիքը: Գիլգամեշը շրիրի հաստակից հանում է այդ ծաղկիը, բայց իր երկիրը վերադառնալիս օձը նրանից գողանում է անմահության ծաղկիը<sup>9</sup>:

5. ՀԱՊ, էջ 142

6. ՀԱՊ, էջ 143:

7. Աշխարհի շատ ժողովուրդներ ունեն շրիեղեղի մասին հիշողություն պահպանած ավանդություններ, որոնց թիվը հաշվվում է տասնյակներով (դրանցից մի քանիսի մասին տես՝ Գորբովսկի Ա., Հնագույն պատմության առեղծվածները, ե., 1969, էջ 27-32, 105-111): Որոշ ժողովուրդներ պահպանել են նաև իրենց սեփական «Նոյ»-երի անունները. Մեխիկայի ացտեկներինը կոչվում է «Նատա, Բորնեոյի դայակներինը՝ Տրոու, հույներինը՝ Դեւկալիոն, հնդիկներինը՝ Մանու, աֆադներինը՝ Ռունափիշտիմ, շումերներինը՝ Զիուսուդրա (Քսիսութրոս) եւ այն. Զիուսուդրայի եւ Ռունափիշտիմի անունները շումերներնում եւ աֆադներնում ունեցել են միեւնույն նշանակությունը՝ «Երկար կյամբ զտած»:

8. Զրիեղեղի մասին աֆադական պատումը տես՝ «Գիլգամեշ» դյուցազնավեպի տասնմեկերրորդ պմակիտում, իսկ հին երրայականը՝ Աստվածաշունչ, Գիրք Ծննդոց, 6-8:

9. ՀԱՊ, էջ 163-165:

Չումերական գրավոր հողարձանների վերծանումից հետո պարզ վեց, որ Հին Կոտակարանի մի քանի պատումի համար զաղափարայլուժնետային սկզբնադրյուր են համերիսացել շումերական բնագրերը: Դրանց բային է պատկանում նաև համաշխարհային ջրհեղեղի պատությունը<sup>10</sup>: Ջրհեղեղի մասին շումերական բնագրում<sup>11</sup>, հավանաբար, վեհափած լինելու պատճառով, պակասում է այն վայրի անունը, որ համացրփանել է ջրհեղեղից փրկվածների նավը. Եշվում է միայն, որ աստվածներն անմահություն շնորհեցին շրմեղեղից փրկված հերոսին՝ Զիուտուրային և բնակեցրին նրան Դիմուն երկրում «ուր մայր է մտնում արեւը»<sup>12</sup>: Աքադական տարրերակում նավը հանգրվանում է Նիցիր (Նիսիր) լեռան վրա, որի տեղադրությունը վերջնականապես պարզված չէ: Իսկ երրայականում Հին Կոտակարանի ՄԱՆՈՒ գրքում, նոյան տապանը կանգ է առնում Արարադ լեռների վրա<sup>13</sup>: Արարադ անոնք երրայական ալրյուդներում տրվել է Հայկական լեռնաշխարհի տարածքին<sup>14</sup>: Պետք է ենթադրել, որ աքադական դյուցագնավեպի Նիցիր լեռը և շումերական վիպերգում փրկվածներին ապահով տված լեռը (կամ լեռները), որի անոնք պակասում է վեհավելու պատճառով, նոյնպես

10. Kramer S. N. Sumerian Literature and the Bible.-Anastasia Biblio, Roma, 1939, 12, p. 184-204.

11. Դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է երրայեցիների միջնեւ միջերկրածովյան ափ տեղափոխվելը Շումերի տարածքում բնակվելու հանգամանքով. ըստ Հին Կոտակարանի, Աքրահամբ հայր Թարան նրանց դուրս բերեց շումերական (Աստվածաշնչում՝ բաղդացիների) Ուր բաղադրից (Գիրք ՄԱՆՈՒ, 11, 31):

12. Մեզ է հասել միայն մեկ օրինակ, որը վերծանել եւ 1914 թվին հրատարակել է Ա. Փերելը (Կրամեր C.H. История начинается..., с. 175-180):

13. Դիմուն երկիրը, առվորաքար, տեղադրվում է այժմյան Բահրենյան կղզիների եւ Արևելյան Արարիայի հարակից ափերի տարածքում: Մեր մի գրույցի ժամանակ Գետրգ Զանյանը հայտնեց իր տեսակետը, որի համաձայն Դիլմունը պետք է տեղադրել Հայկական լեռնաշխարհում: Ելեղով որոշ փաստերի գոյությունից՝ մենք հավանական ենք համարում սույն տեսակետը:

14. Արարադը հիշատակվում է նաև Աստվածաշնչի երեմիայի (51, 27), Դթազգագորաց (19, 37) գրմերում, Կումրանյան ձեռագրերում եւ վերաբերում է Հայաստանին (Պուտրովսкий Բ.Б. Ванское царство(Урарту), М., 1959, с.33):

գտնվել են Հայկական լեռնաշխարհի տարածքում: Մեր այս ենթադրությունը հաստատվում է շումերա-աքաղական սկզբնադրյութների հաղորդումներով:

Աքաղական դյուցազնավեպի տասնմեկերրորդ պահիստում պատմվում է, որ երր նավը կամ առավ Նիցիր լեռան վրա, Ռումափիշտիմը գոն մասուցեց աստվածներին և խնկարկեց, որի բուրմունքն առան աստվածները, հավաքվեցին գոհաբերողի մոտ, ապա ժողով անեղով՝ որոշեցին անմահություն շնորհել փրկվածներին<sup>15</sup>: Մեզ է հասել առյօնաի վրա փորագրված աշխարհագրական մի քարտեզ, որը թվագրվում է Սարգսն Աքաղացու Ժամանակաշրջանով (Ք.ա. 24-23-րդ դդ.): Այդ քարտեզի վրա Եփրատի և Տիգրիսի ակունքներում գտնվող լեռնային երկիրը կոչվում է «Աստվածների ժողովի լեռ»<sup>16</sup> («լեռ» բառի հշանքը շումերերնեում կարող է կարդացվել նաև «երկիր»): Նշանակում է՝ Եփրատի և Տիգրիսի ակունքների շրջանում է գտնվել նաև Նիցիր լեռը, որի վրա Էլ տեղի է ունեցել աստվածների ժողովը<sup>17</sup>:

Վերադարձանք Մաշտու լեռներին, որոնք հիշվում են իբրև լեռնային դարբաս այն երկրի, որը ապրում են անմահություն ստացածները: Մարդակարիճ-պահապահի խոսքից ակնհայտ է, որ Գիլգամեշը պետք է անցներ Մաշտու լեռները և Էլի լեռները ու անտառներ, որից հետո միայն հանդիպեր անմահություն ստացած Ռումափիշտիմին:

88. «Գնա, Գիլգամեշ, քո դժվարին ոսիով,  
Թո՞ղ անցնես դու լեռները Մաշտու,
90. Անտառներն ու լեռները թո՞ղ խիզախորնեն անցնես,  
Թո՞ղ բարեհաջող եստ վերադարձաս:
92. Լեռների դարբասները բաց են քեզ համար»<sup>18</sup>:

15. ՀԱՊ, էջ 160-161:

16. Քասունի Ե., Նախահայկական Հայաստան, Պեյրութ, 1850, էջ 30:

17. Աստվածների ժողովը Նիցիր լեռան վրա եղել է եզակի երեւուց: Դրա վկայությունն է Գիլգամեշին ուղղված Ռումափիշտիմի խոսքը: «Իսկ ո՞վ ֆեզ համար այժմ աստվածներին կհավաքի» (ՀԱՊ, էջ 161): Ուստի եւ կասկածից վեր է, որ Քարտեզի «Աստվածների ժողովի լեռ» տեղանունը եւ Նիցիր լեռը միշագետքան աղբյուրներում հիշատակվում են միեւնույն առիրով:

18. ՀԱՊ, էջ 145:

Կարծիք է հայտնվել, որ Մաշու լեռները Մեծ ու Փոքր Մասիններն (Արարատներն) են <sup>19</sup>: Սև շատ ավելի հավանական է թվում Մաշու լեռ Շերի համադրումը Մասին լեռների հետ <sup>20</sup>, որոնք տեղադրվում են Հայկական Տավուսից անմիջապես հարավ (այժմ Մարտինի լեռները) և աստրա-բարելական աղյուսներում կրչվում են Քաշխարի, իսկ հովնական աղյուսներում ու «Աշխարհացոյց»-ում Մասիս և Մասին <sup>21</sup>: Գաղու Հարավային Միջագետքից և անցնելով Մաշու (Մասիս կամ Մասին) լեռները, դուրս ենք զայիս Հայկական լեռնաշխարհի հարավային և արեւմտյան շրջաններ, որ գտնվել են «Աստվածների ժողովի լեռը (Երկիրը)», «անմահների երկիրը» և «սուրբ օրենքների երկիր» Արատուս:

Իսկ ինչո՞ւ բացատրել այն մեծ հշանակությունը, որ Հայկական լեռնաշխարհն ունեցել է Հարավային Միջագետքի բնակիչների համար: Նախ և առաջ այն հանգամանքով, որ Հայկական լեռնաշխարհից էին ծնններ առնում Միջագետքի համար կենսատու Եփրատ և Տիգրիս գետերը: Տեղին է նշել, որ ըստ Հին Կոստանդնուպոլիսի, այդ երկու գետերը սկիզբ էին առնում դրախտից <sup>22</sup>: Բացի այդ, կարեւոր դեր պետք է խաղացած լինի շումերական քաղաքակրթության կրողների հայսմիների հյուսիսից զայլած լինելը (կապված հայտաբարերի պաշտամունքի հետ): Եվ վերջապես, շրմենելով ավանդությունը, որի համաձայն շրմենելով փորկվածներից մարդկությունը վերածնվեց շնորհիվ Հայկական լեռնաշխարհի, որ աստվածներն են ժողովի հավաքվել և անմահություն շնորհել շրմենելով փորկվածներին:

#### 18. ՀԱՊ, էջ 145:

19. Վարպետնամ Ա., Ովքե՞ր են ի վերջոյ արիացիները, Ե., 1990, էջ 101, 131:

20. Քատունի Ե., Նախահայկական Հայաստան, էջ 31:

21. Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 65:

22. Գիրք Ծննդոց, 2, 14:

# ԱՐԱՏՏԱ, ՈՒՐԱՐՏՈՒ, ԱՐԱՄԱՏ/Դ ԵՎ ԱՅԼ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդեն Գիլգամեշի ժամանակներում Արատուան շումերների համար դարձավ առեղծվածային ու խորհրդավոր մի երկիր, որի ճանապարհը կարևոր էր գտնել արեսի աստծոց շնորհված մոգական էակների օգնությամբ<sup>1</sup>: Ավելի ուշ Արատուան երկրի անունը վերածվեց հասարակ անվան, և շումերական դպրոցներում այն սկսեցին օգտագործել իրեն «վեռ» հշանակող տերմին<sup>2</sup>: Անցան էլի ժամանակներ և մարդկանց հիշողությունից չնշվեց այդ երկիրը, իսկ նրա գոյության մասին պատմող գրավոր հուշարձանները թաղվեցին հողի ու մոխրի հաստ շերտի տակ: Եվ միայն մեր դարի կեսերին, շնորհիվ հնագետների ու շումերագետների տքնաջան աշխատանքի, լուս աշխարհ եկան ու կրկին խոսեցին այդ երկրի մասին պատմող բնագրերը: Շումերական բնագրերի հայտնաբերումից ու վերծանումից հետո ուսումնասիրողների առջև ծառացակ նրանցում հիշատակվող Արատուան երկրի տեղադրության պրոբլեմը, որին անդրադարձանք վերևում: Այդ պրոբլեմի լուծմանն ուղղված փորձերը երբեմն ուղեկցվում էին նաև Արատուան մնացած մեկնարանման առաջարկներով<sup>3</sup>: Ստորև նպատակ շունենալով բններու և վերլուծելու մեկնության բոլոր փորձերը, կիսուննք մեզ հավանական թվացող երկու տեսակների մասին:

Օր-օրի նոր փաստերով էլ ավելի է հիմնավորվում հնդկության հայսահյունիքի մասին տեսությունը, համաձայն որի այն գտնվել է

1. Поззия и проза Древнего Востока, с. 130-131.

2. Textes scolaires du Temple de nabu sa Harr. v. 1, Baghdad, 1981.

р. 112f

3. Բազմաթիվ այլ չլուծված հարցերի նման Արատուայի խնդիրը չխուսափեց պատմության կեղծարարների աշխից: Արատուայի անունը փորձ արվեց մեկնարաններ բյուրմական լեզվահիմքի վրա, եւ դրա հիման վրա ենթադրել բյուրմական ցեղերի գոյություն Ք.ա. 3-րդ հազարամյակում Ուրմիա լճից հարավ եւ հարավ-արեւելք (Խոսիֆ Յ.Բ. Բանական կառավարություն, ս. 19-40):

Փոքր Ասիայի կենտրոնից մինչև Խրանական տարահարթ ընկած տարածքաշրջանում, որ և մենք տեղադրեցինք Արատուա երկիրը: Արատուա անոնքը չի բացատրվում շումարնեն և, ամենայն հավանականությամբ, այդ երկրի բնակիչների իրենց երկրին տրված անոնքն է: Հավանաբար, այն պետք է մեկնարաններ հնդեւրոպական հիմքի վրա: Թ. Գամկրելյանի և Վ. Խվանովի բացատրության համաձայն Արատուա անոնքը ծագում է հնդեւրոպական «ջրեր, գետ» արմատից<sup>4</sup>: Օգտագործելով այս բացատրությունը՝ մեր մի հոդվածում համեմատություն էինք անցկացրել Նախի երկրանվան հետ, որը, հավանաբար, ծագում է աստրա-բարեկան «գետ» արմատից<sup>5</sup>: Վերջերս մենք ծանոթացանք երիտասարդ լեզվաբան Հրաչյա Մարտիրոսյանի Արատուա անվան մեկնակերպին, որը մեզ ավելի համոզի բվաց: Ենթավ այն հանգամանքից, որ Արատուան «սուրբ օրենքների երկիր» են կոչում թե՛ արատուացիները և թե՛ շումերները, Հ. Մարտիրոսյանն այդ երկրի անոնքը ծագած է համարում հնդեւրոպական «սուրբ օրենք» արմատից<sup>6</sup>:

Որևէ պետքիրյուն ինչ-որ ժամանակահատվածում գոյատեսելով՝ հետքեր է բողոքում այն տարածքում, որում բարձրացել էր: Այդպիսի հետքերից են աշխարհագրական անվանումները, եւ արատուագիտությունը շատ հարցեր ունի լոծելու տեղանվանագիտության բնագավառում: Ստորեւ կանդրադառնանք դրանցից երկուսին:

4. Гамкрелидзе Т.В., Иванов В.В. Индоевропейский язык и индоевропеицы, ч.2, Тбилиси, 1984, с. 1325.
5. Մովսիսյան Ա. Ե., Հայոց լեռնաշխարհի հնագույն պետությունը, Գարուն, 1980, թիվ., էջ 78-80:
6. Մեր խնդամենով Հ. Մարտիրոսյանն իր տեսակետը տրամադրեց այս աշխատության մեջ զետեղելու համար, որն էլ շնորհակալությամբ ներկայացնում ենք ստորեւ:

«Արատուան եւ արատուացիների, եւ շումերների կողմից անվանվում է «սուրբ ծեսերի/օրենքների երկիր»: Հետեւաբար կարծում եմ, որ Արատուա տեղանունը ծագում է հնդեւրոպական \*άστο- արմատից, հմմտ. հին հնդկ. ցտά- «սուրբ օրենք, կարգ», ավեստ. **առաժա-**«օրենք, սուրբ իրավունք», հուն. **άρρειον**«արդար, բարեպաշտ», հայ. արդ-ար - «արդար, ուղիղ, ճշմարիտ, շիտակ»:

Եթե այս մեկնությունը նիշտ է, ապա Հայկական լեռնաշխարհի

Հայագիտության առ այսօր շունչած հարցերից է՝ Ամսի բազավորությանը աքաղակամ (ասուրա-բարեկալամ) արձանագրություններում տրված անվան՝ Ուրարտուի մեկնությունը։ Արվել են մեկնաբանման բազմաթիվ փորձեր։ Աննպատակ համարելով հարցի պատմագրությանն անդրադառնալը՝ առորեւ կերպայացնենք միայն Ուրարտու անվան մեր մեկնակերպը։

Ասուրա-բարեկալամ աղբյուղների Ուրարտուն նոյն Աստվածաշնչի Արարատ/դն է։ Աստվածաշնչի հին ասորական «Պեշշոտո» կոչվող թարգմանության մեջ Արարատ/դը փոխարինվել է Կարդու տեղանվամբ<sup>7</sup>։ Այս անոնքը բաղկացած է երկու մասից՝ կև արծու։ Կև-ս սեպագրության մեջ Եշանակել է «սուե, երկիր»։ Նոյն Եշանակությունն ունի նաև Ուրարտուի սր- սկզբնավանկը։ Բուն տեղանունն է արտ կամ արծու, որն էլ այլ բան չէ, բայց Արարտու տեղանվան ժամանակի ընթացքում փոփոխված տարրերակը։ Արարտան Եշված ոչ շումերա-աքաղական դպրոցական բնագրերում համովապում է Arata և Aratu տարրերակներու։ Դրանց ավելացնելով «սուե, երկիր» Եշանակող սր- սկզբնավանկը՝ կստանանք Urarata և Uraratu։ Uraratu-ն երկրորդ ա-ի սողումով վեր է ածվել Ուրարտուի, իսկ Եսայի մարգարեղության Կումրանյան ձեռագրերում Արարատ/դը հիշատակված է Ուրարտ /hwrrt/ ձեռով<sup>8</sup>։ Ս - ա անցման շնորհիվ (հնմուտ օրինակ Ուրուկ - Արեք) Urarata-ն դառնում է Ararata եւ (բառավերջի ձայնավորի անկումով) Ararat։ Աստվածաշնչային ձեռագրերը մեր երկրի անոնքը պահպանվել է ոչ միայն վերջին երկու, այլև Ararad ձեռով։ Վաստահորեն կարեղի է ասել, որ Ararad և Kardu անոնների հիմքում են ընկած է միւնչոյն հնդեվրոպական արմատը, իսկ է - ծ անցումը կատարվել է հայերենի օրինաշափությամբ (\*εռτօ - արդ-ար)։ Ավելացնենք նաև, որ

հարավում Ք.ա. 3-րդ հազարամյակում առկա է հնդեւրոպական որեւէ լեզվով կամ ավելի նիշտ, բարբառախմբով (հնդարիական կամ հնդիրանական կամ հայ-հունա-արիական) ներկայացող էրմիկ տարր։

Անհնար չէ նաև նույն արմատից բխեցնել Վանի բազավորության պաշտամունքային զլսավոր կենտրոն Ardini-ի անունը։

7. Մելքոնյան Հ. Գ., Հայ-ասուրական հարաբերությունների պատմությունց, Ե., 1970, էջ 77-82։

8. Пиотровский Б.Б. Ванское царство(Урарту), с. 33.

Հոգին արմատից է ծագում Վաճի թագավորության հոգեսոր կենտրոնի՝ Ardinil-ի ամոնը (Հ. Մարտիրոսյան), մի հանգամանք, որն ավելի համզիշ է դարձնում մեր մեկնակերպը:

Եղբահանգում Արատու, Ռուարտո, Արարատ/ն եւ Կարդու տեղանուններն իրենց տարբերակներով տրվել են միեւնույն երկրամասին, այն է՝ Հայաստան լեռնաշխարհին: Այդ երկրանունները հիմքում ունեն հնդեւկրտապական միեւնույն արմատը եւ նշանակել են «սուրբ օրենքների երկիր»:

Միջագետքը սնուցող երկու հզորագույն գետերից մեկը՝ Եփրատը, աջադական (ասուղա-քաքակական) աղբյուրներում կոչվում է Purattu: Գետի անոնն, ամենայն հսկանականությամբ, հրանց է անցել հյուսիսային համայնքներից՝ սուրարևոցիներից, որոնք այն կոչել են Urattu կամ Uruttu<sup>9</sup>:

Միանգամայն պարզ է, որ այս պարագայում գործ ունենք ա - ս անցման հետ, ինչն ակնհայտ է հենց երկու տարբերակների բաղյասութից: Այսինքն՝ երկիրն ու հրանց դուրս հոսող գետը կրել են միեւնույն անոնք՝ Արատու: Ուշագրավ է, որ Արատու անունով գետ է հիշատակվում Ուրմիա լճի ավազանում (Ք.ա. 8-րդ դար), որի անունը չի բացառվում, որ կապ ունեցած լինի Արատու երկիրի հետ:

Կարելի է ցույց տալ այլ աշխարհագրական անուններ եւս, որոնք կարող են կապվել Արատուայի հետ: Դա եւս թողնելով հետազային՝ անցմենք դիցարանության ողորտից:

---

#### 9. Аветисян Г. Государство Митанни, с. 25.

# ՇՈՒՄԵՐ-ԱՐԱՏՏԱ ԱԴՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ.

Միշագետքի և Հայոց լեռնաշխարհի հազարամյակներ տեսած փոխարաբերություններն իրենց արտացղումն են գտել հայկական դիցարանության մեջ: Առանձնապես հիշատակության են արժանի Հայկի և Բելլի<sup>1</sup>, Արամի և Բարշամի<sup>2</sup>, Արա Գեղեցիկի և Չամիրամի<sup>3</sup>, Վահագնի և Բարշամի<sup>4</sup> մասին պատմող գրուցները: Խոկ Շումեր-Արատտա հարաբերություններն ունեցե՞լ են որևէ արտահայտություն շումարների դիցարանության մեջ և արտացղվե՞լ են հրանց գրական հուշարձաններում: Առաջ ընկնելով ասենք, որ այսօր միշագետքյան գրականության մեջ կարելի է մատնանշել առնվազն երկու դիցապատման վիրված Միշագետք-Հայաստան առնչություններին, որոնցից մեկում արտացղված են Շումեր-Արատտա փոխարաբերությունները<sup>5</sup>:

Շումեր-Արատտա հարաբերությունները, մեր կարծիքով, արտահայտված են շումերական Դումուզի և Խնաննա աստվածազույզի պատմության մեջ, որն ավելի ուշ գրի առնված հայկական Արա Գեղեցիկ և Չամիրամ դիցավեպի հետ բխում է միեւնույն սկզբնադրյութից: Ասվածը հիմնավորելու համար նախ համառոտակի վերիիշենք Արա Գեղեցիկ և Չամիրամ դիցավեպը:

Արա Գեղեցիկ և Չամիրամ վեպն առավել ամբողջական պահպանվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Վեպի բովանդակությունը հետևյալն է:

- 
1. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմ. ներածությունը եւ ծանոթ. Ստ. Մալյասյանցի, Ե., 1968, էջ 86-89:
  2. Նույն տեղում էջ 83-87:
  3. Նույն տեղում էջ 87-103:
  4. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմ. առաջարանը եւ ծանոթ. Ա. Գ. Աբրահամյանի եւ Գ. Բ. Պետրոսյանի, Ե., 1979, էջ 95-96:
  5. Առաջինը Դումուզի եւ Խնաննա աստվածազույզի պատմությունն է, որի մասին կխոսվի հանգամանորեն: Երկրորդը «Ակիտու տոնահանդես» կոչվող բարելոնյան բնագիրն է, որն անմիշական կապ չունի Արատտայի հետ (տե՛ս ծանոթ. 39):

Երբ Հայաստանում իշխում էր Հայկի յորերորդ սերունդ Արան, որին հոված զեղեցկության շնորհիվ Գեղեցիկ էին կոչում, Ասորեստանում իր ամուսնու՝ Նինոսի մահից հետո գաճ է բարձրանում Շամիրամը (հունական աղյոյուներում Սեմիրամիս): «Ալյասիրու ու վավաշու» Շամիրամը, որ տարիներ ի վեր բռուն զգացմոնքներ էր տածում Արայի նկատմամբ, պատօպամախուսների միջոցով փորձում է համոզել Արային՝ կոտրյան առնել իրեն, փոխարենը խոստանալով Ասորեստանի գահը: Արան, սակայն, մերժում է: Շամիրամը դիմում է պատերազմի, բայց այդ պատերազմում զրիվում է նաև Արան: Շամիրամն իր աստվածների միջոցով փորձում է վերակենդանացնել Արային<sup>6</sup>, բայց նրա դին նեխում է: Այդտան Շամիրամն իր հոմանիներից մեկին ներկայացնում է իրեն հարույոյն առած Արա, և հայերը խաղաղվում են: «Պատերազմին հետևում են բազում շինարարական աշխատանքներ, Հայաստանի իշխանությունը հանձնվում է Արայի որդուն՝ Արայան Արային, որն Արայի մահվան ժամանակ տասներկու տարեկան էր: Արայան Արան ունենում է արու զավակ՝ «շատ գործունյա, հանճարախոս Անոշավան Սոսանվերին», որը «պաշտամոնքի համաձայն նվիրված էր Արմենակի՝ Արմավիրում գտնըվող տոփի ծառերին»<sup>7</sup>:

Դիցավեպը գրեթե նոյն բովանդակությամբ պատմվում է նաև Սերեսուի մոտ<sup>8</sup>:

Իցշան ճիշտ նկատվել է ոսումնասիրութների կողմից, վեալը ենթարկվել է քրիստոնեական միջավայրի ազդեցությանը, իսկ նրա նախնական պատման մեջ Արան պետք է հարություն առած լիներ: Այդ է վկայում Թովմա Արծրունու տեղենկությունը Լեզզ գյուղի մասին, «որ հոված զեղեցիկ առասպեկտաբանում են Շամիրամի կորիծներից սպանված գեղեցիկ գորականների վերքերի սպիտակու մասին»<sup>9</sup>: Նոյնի վկայու-

6. Ըստ Խորենացու Շամիրամն իր աստվածների միջոցով է փորձում վերակենդանացնել Արային, իսկ ըստ Սերեսուի, Արային վերակենդանացնողների դերում հանդես են զայս արակեզմները (Պատմութիւն Սերեսուի եպիսկոպոսի ի Հերակլո (արտասպված Ք.Պատկանյանի 1879թ. հրապարակությունից), Թիֆլիս, 1912, էջ 8):

7. Մօվսես Խորենացի, Ցշվ. աշխ., էջ 105-106:

8. Պատմութիւն Սերեսուի եպիսկոպոսի ի Հերակլո, էջ 7-9:

9. Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն Արծրունյաց տան, բնագիրը

թյունն է նաև պատերազմից հետո Հայաստանի տիրակալի Արա կոչվելը: Որ արագեցները, ըստ հայոց հավատալիքների, հարություն են տալիս մարտադաշտում ընկած քաջերին, լավագույն ցուց է տալիս Մուշեղ Մամիկոնյանին արագեցների օգնությամբ հարություն տալու փորձը, որի մասին պատմում է Փավստոս Բուզանդը<sup>10</sup>: Պատահական չէ նաև, որ արագեցները ուշադրության են արժանացել Եզնիկ Կողբացու<sup>11</sup>, Դավիթ Անհաղթի<sup>12</sup> և այլոց երկերում:

Արայի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակում հոռական աղբյուրները: Պլատոնը «Հանրապետություն» աշխատության մեջ պատմում է Էրոսի՝ Արմենիոսի որդու մասին, որը ցեղով Պամիյուլայից (Փոքր Ասիա) էր: Պատերազմի դաշտում զրիվելուց տասներկու օր հետո<sup>13</sup>, երբ պատրաստում էին դին այրել, նա վերակենդանանում են պատմում է անդրշիրիմյան աշխարհի մասին<sup>14</sup>:

Բեռլինի պապակիրուաների հավաքածոյից գտնվել եւ 1893 թվին հրատարակվել է մի սիրավեպ, որի բովանդակությունը հետևյալն է (ըստ Աղոնցի):

Նինոսը, դեռևս 17 տարեկան երիտասարդ, սիրահարվում է հա-

---

հրատ. պատրաստեց, թարգ. եւ ծանոթ. Մ. Վարդանյանը, Ե., 1878, էջ 334-335: Բնագրի «զարացն զեղեցիկ» արտահայտությունը Ն. Բյուզանդացին առաջարկել է սրբագրել «զԱրայն Գեղեցիկ» (նույն տեղում, էջ 524, ծանոթ. 220):

10. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, թարգմ., Երածությունը եւ ծանոթ. Ստ. Մալյասյանցի, Ե., 1968, էջ 276:

11. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, թարգմ., Երածությունը եւ ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1970, էջ 77-78:

12. Դավիթ Անհաղթ, Փիլիսոփայության սահմանումները, Երկեր, թարգմ., առաջարանը եւ ծանոթ. Ս. Ս. Արեւշատյանի, Ե. 1980, էջ 35:

13. Ըստ Մովսես Խորենացու, Արա Գեղեցիկին փոխարինում է Արայան Արան, որն Արա Գեղեցիկի զոհվելու ժամանակ 12 տարեկան էր: Պլատոնի երկում էրոսը հարություն է առնում զոհվելուց 12 օր հետո: 12 թվի կըրկնությունը երկու տեղում, թերեւս, պատահական չէ: Ի դեպ Արան Հաբերի տոհմարանության մեջ տասներկութրորդ սերունդն է:

14. Պլատոն, Ռեспублика.-Ծովունակ, Մ., 1929, X, ս. 614.

Հայերն թարգմանությունը տես Մատիկյան Ա. Հ., Արա Գեղեցիկ,

զիվ 13 տարեկան իր գարմոհում: Նրանց մայրերն, որևէն, քույրեր են: Նինոսի մայրը կոչվում է Թամբե, իսկ երիտասարդ աղջկա մայրը՝ Ռարկեա: Նինոսը տեսակցում է իր մորաքրոջ հետ և դժգոհություն հայտնում, որ իրեն թույլ չեն տալիս ամուսնանալու իր սիրեցյալի հետ, որովհետև նրամ գտնում են շատ երիտասարդ, և ինքը պետք է դեռ երկու տարի սպասի: Երիտասարդ աղջիկն իր կողմից կարծեն ասելիք ոճի մորաքրոջը, որևէն՝ Նինոսի մորը, բայց ամորիսածարար կարմրում և շփորչած ետ է քաշվում: Երկու մայրերն ընտանեկան խորհուրդ են կազմում, որի հետեւանքը հայտնի չէ՝ այդ հատվածը վնասված լինելու պատճառով: Ապա Նինոսը պատրաստվում է արշավել Հայաստան: Նրա բանակը, բաղկացած հեղեններից, կարիացիներից և մշջագետքիներից, հաշվում է 70 հազար հետեւակ, 30 հազար հեծյազ և 150 փիդ: Նինոսը հայրահարում է ճանապահի դժվարությունները, անցնում գետերը և գալիս ճամբարում դաշտում: Տասն օր հետո պատերազմն ակտում է: Պատմության շարտենակորքունը պահպանված չէ (Ադրնոցն այն կարծիքն է հայտնում, որ պատերազմի ուղղությունը պատրահական չէր. Հայաստանում էր գտնվում այն աղջկա սերը՝ Նինոսի մրցակիցը): Զնշված տեղերում որոշակի կադացվում է օ' Երու, իսկ մի քիչ հետո՝ Արմենի<sup>15</sup>:

Այս պատմության աղջիկը, որի անունը չի նշվում (զուցեն պակասում է բնագրի աղճատվածության պատճառով) Սեմիրամիսն է (Չամիրամը), որը Դիոդորոս Սիկիլիացու հաղորդած ավանդության մեջ<sup>16</sup> համեստ է գալիս իրեւ Դերկեսոյի (այսուղեղ՝ Ռարկեա) դուստր և Նինոսի կից: Ավելացնենք նաև, որ պասիրուստ պահպանված Տրայանոս կայսեր անվան հիման վրա այն թվագրվում է Ք.ա. 1-ին դարով<sup>17</sup>:

Դիոդորոս Սիկիլիացին, պատմելով Նինոսի և Չամիրամի մասին, գրում է, որ Նինոսը բակտրիական արշավանքից առաջ արշավեց Արաբիա, որի թագավորի անունը Արայոս էր, ապա՝ Հայաստան, ուր իշխում

Վիեմա, 1930, էջ 256-257:

15. Ադրնոց Ն., Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 375-378:

16. Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, էջ 14-16:

17. Ադրնոց Ն., Հին հայոց աշխարհայացք, «Հայրենիք», Բոստոն, հոկտեմբեր, 1926, էջ 43-45:

էր Բարզանես անոնով արքաՅ<sup>18</sup>: Ն. Աղոնցը ենթադրում է, որ տեղի է ունեցել անոնների շփորություն և Արայոսը Հայաստանի արքայի առուն է<sup>19</sup>: Այս կարծիքը մեզ խիստ հավանական է թվում:

Պիտուարքոսին վերագրվող մի երկում պահպանվել է ավանդություն, ըստ որի Հայաստանում Արաքսի մոտերքում գտնվում էր մի լեռ, որն իր անոնը ստացել էր ոմն Դիովորոսից: Դիովորոսը ծնվել էր Միջրայի (Միջրի) բնելմանվորած քարից և ուզում էր շափվել Արեսի հետ: Սակայն նա սպանվում է Արեսից և աստվածների կողմից փոխակերպվում լեռան<sup>20</sup>:

Գր. Ղափանցյանը «Արա Գեղեցիկի պաշտամունքը» աշխատության մեջ մանրամասնորեն ցուց է տալիս Արա անվան տարածումը Հայաստանից հնկայական հնուավորության վրա<sup>21</sup>. Արեսը նախապես չի եղել հոնական աստված, երա պաշտամունքը հույններին է անցել փոյուղացիներից<sup>22</sup>, իսկ Արեսի պաշտամունքը (կամ գոնե անոնը) Երանց անցել է հայերից<sup>23</sup>: Թերեւս, Արա Գեղեցիկ և Շամիրամ դիցավեպի արձագանքը կամ ազդեցությունը պեսոք է համարել Արես-Ավրորիխուն-Հեփեստոս աստվածային եռյակի պատմությունը, որում Հեփեստոսը Ավրորիխունի ամուսինն է, և շնայած դրան, Ավրորիխուն Արեսի սիրեցյան է (հնմտ. Արա-Շամիրամ-Նիմոս պատմության հետ): Ավրորիխունի Արեսից ունեցած զավակներից մեկի ունոնը էրու է<sup>24</sup>: Եթե ենթադրենք, որ Պիտուանի հիշատակած էրոսը ոչ թե Արա Գեղեցիկն է, այլ Արեսի որդին, ապա կտացվի, որ Արեսը նոյն Արմենիոսն է:

Սրանք են այն հիմնական հիշատակությունները Արա Գեղեցիկ-Շամիրամ դիցավեպի մասին, որ պահպանվել են հայ և հոյն մատենագրության մեջ: Մեռնող որ հառնող աստծո և մարմնական սիրո, պատե-

18. Դիովորոս Սիկիլիացի, Աշվ. աշխ., էջ 16:

19. Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 376:

20. Աղոնց Ա., Աշվ. աշխ., էջ 371:

21. Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պատշտամունքը, Ե., 1944, էջ 69-96:

22. Միфы народов мира (МНМ), т.1, М., 1980, с. 101 (հոդվածը գրել է Ա. Ֆ. Լուսելը):

23. Մատիլյան Ա. Հ., Արա Գեղեցիկ, էջ 314-315: Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 73-74:

24. Դիցարանական բառարան, Ե., 1985, էջ 42:

բազմի ու տուփանքի աստվածութու մասին պատմության այս մոտիվն ունեն շատ ժղովուրդներ<sup>25</sup>: Սուրբ քննության կառնվի շումերական Դումոզի-Ինանա աստվածագույզի մասին հյուսված շումերական ավանդությունը, որը մեր կարծիքով, հայկական Արա Գեղեցիկ և Ծամիրամ վեսպի հետ ունի ոչ միայն թեմատիկ ու մոտիվային հմանություն, այլ նաև ազգակցություն:

Դումոզիի և Ինանայի մասին մեզ են հասել շումերական բազմաթիվ երգեր, որոնք ներկայացնում են «Դումոզի և Ինանա» դիցավեպի առանձին դրվագները: «Ինանան ամուսին է ընտրում» երգում<sup>26</sup> Ինանայի ձեռքի համար պայքարում են լոռնական հովվների աստված Դումոզին և երկրագործ աստված Էնկիմդում: Արեւի աստված Ռիտու և Դումոզին կարողանում են համոզել Ինանային, որն էլ, ի վերջ, ընտրում է Դումոզիին: Հաջորդ դրվագում Դումոզին և Էնկիմդուն վիճում են, բայց Էնկիմդուն տեղի է տալիս, իսկ Դումոզին Էնկիմդուն հրավիրում է իր հարսանիքին: Այս երգի պատմությունը համեմատելի է վերը հիշված բեղունյան պապիրուսի սիրավեպի հետ. իրենց բնորշ գծերով նոյնն են Ինանան և Ծամիրամը, Էնկիմդուն, որը միջազնության երկրագործության աստվածն է, նոյնանում է Միջազնությի արքա Նինոսի հետ (երկրան էլ ամենաջղակ են իրենց սիրո մեջ), իսկ լոռնական հովվների աստված Դումոզին՝ Էրոսի հետ, որի երկիրը Հայաստանն է: Դումոզին ես ներկայացրել է Հայկական լեռնաշխարհը (այդ մասին ստորև):

Դումոզիի և Ինանայի ամուսնության մասին պատմող մի այլ երգում<sup>27</sup> Դումոզին այլնա մրցակից շոմի: Նա իր քաղաքից գալիս է պահանջելու Ինանայի ձեռքը: Սկզբում Ինանան տատանվում է, բայց մոր խորիրով հազնվում է շքեղությամբ, լայն բացում է դոմենը փեսացով առաջ: Նրանք գրկախառնվում են և Դումոզին Ինանային տանում է «իր աստծո քաղաքը»:

Ինանան շումերների մարմնական սիրո, պատեազմի և տուփանքի:

25. Օրինակ՝ շումերական Դումոզիի եւ Ինանա, եղիպտական Օզիրիս եւ Խղիտա, բարելա-աստրական Թամուզ եւ Իշբար, փոյուզիական Ատոտիս եւ Կիրլա, հունական Աղոնիս եւ Ափրոդիտե եւ այլն:

26. Крамер С.Н. История начинается в шумере, с. 165-168.

27. Крамер С.Н., Աշխ. աշխ., էջ 182:

աստվածութին է, նրա պաշտամբքի կենորոնը Ուրուկն է, որի հովանավոր աստվածութին է ինքը: Դումուզին մեռնող ու հառնող աստված է, լեռ նական հովիվների հովանավորը և եկեղեցի էր Ինամնայի մոտ (Ուրուկ) «իր աստծո քաղաքից»: Դումուզիի և Ինամնայի երկխոսություն-վեճը Շերկայացնող «Երեւ իմ մայրը շիներ» երգու<sup>28</sup> ի պատասխան Ինամնայի, որը փորձում է հսկմացնել Դումուզիին, վերջինս ասում է.

15. Գեշտինաննան<sup>29</sup> քո քրոջից վաստ չէ:

Ինամնա, արժանապատվորեն խոր փոխանակներ:

Ես ինք Ուրուկ<sup>30</sup> առանոց վաստ չեմ

Նիմէզալլա<sup>31</sup>, խորհրդակցներ հանգիստ:

Էնկի<sup>32</sup> առաված Զուենից<sup>33</sup> վաստ չէ

20. Ինամնա, արժանավորեն խոր փոխանակներ:

Տորուուր<sup>34</sup> աստվածութին Նիմզալից<sup>35</sup> վաստ չէ:

Այս բանավեճից ակնհայտ է Դումուզիի և Ինամնայի տարրեր աստվածային ընտանիքների պատկանելը: Ծովերական դիցարանության համաձայն (որն իր մեջ էր ընդգրկում նաև տիեզերագիտական սպատկերացումները) ի սկզբանն հավերժորեն գոյություն է ունեցել նախատեղծ օվկիանոսը: Նրանից ծնվել է տիեզերական լեռը՝ կազմված միասնական երկրից ու երկնքից Երկմքի աստծո (Անի) և երկրի առողջապահութու (Կի) մերձնեցումից ծնվում է երերի (օդի) աստված Էնլիլը, որին

---

28. ՀԱՊ, էջ 63-65:

29. Գեշտինաննան Դումուզիի բույրն է: Նրա անունը նշանակում է «երկային խաղողի վազ»:

30. Ուրում շումերների արեսի աստվածն է: Նա համարվել է երկմքի աստված Անի /կամ լուսնի աստված Սինի/ որդին եւ Ինամնա աստվածութու եղբայրը:

31. Ինամնա աստվածութու անուններից մեկն է, բառացի՝ «տիրուիի»:

32. Էնկին համաշխարհային օվկիանոսի, ստորերկրյա ջրերի եւ իմաստության աստվածն է շումերների հավատալիքներում, համարվել է Դումուզիի հայրը:

33. Զուենը (Սուենը) հայտնի է նաև Սին եւ Նամնա անուններով: Լուսնի աստվածն է եւ համարվել է եթերի (օդի) աստծո՝ Էնլիլի որդին:

34. Դումուզի աստծո մայրը:

35. Ինամնա աստվածութու մայրը:

շումերները մնապում էին իրեն զիսավոր գերազոյն աստծո: Էնլիխի և մոր՝ երկրի աստվածոմնու մերձնցումից ծնունդ առան բնությունը, կենդանական և մարդկային աշխարհները: Էնլիխից և Նինլիի աստվածութուց ծնկեց լուսնի աստված Սինը (Սունն, Զունն, Նաննա): Խակ լուսնի աստծուց և Նինգալ աստվածութուց ծնկեցին արեսի աստված Ռիթոն և ճրա քույրը՝ Ինաննա աստվածութին՝<sup>36</sup>:

Այսպիսին է շումերական աստվածների ծննդաբանությունը: Դրանում բացակայում են Դ-ումոզին, ճրա քույրը, մայրը և նոյնիսկ հայրը՝ Էնլիի աստվածը, որն Աւի, Էնլիխի և Նինլիուրսազի հետ մտել է շումերական աստվածների գերազոյն քառյակի մեջ և եղել է շրերի և իմաստության աստվածը շումերական դիցարանում: Շումերների ջրի պաշտամոնքը սերտորեն աղերսվում էր Հայաստանից սկիզբ առնող Եփրատ և Տիգրիս գետերի հետ: Էնլիի աստվածը պատկերվել է ձեռքին սկիզբ ըլլո նաձ, որից հոսում է Եփրատն ու Տիգրիսը խորհրդանշող երկու ջրաշիրք:<sup>37</sup>: Շումերական բաղարակրթությունը ժառանգած արահեների գրականության մեջ Էնլիի աստվածը հանդես է գալիս Հայա անունով:<sup>38</sup>: Բարելոնյան «Ակիտու տոնահանդես» կոչող մի բնագիր պահպանել է Հայայի և Բել-Մարդուկի պատմությունը, որը փաստորեն, Մովսես Խորենացու միջոցով ավանդված Հայկի և Բնելի պատմության բարելոնյան տարրերակն է<sup>39</sup>: Նրանում Բել-Մարդուկը<sup>40</sup> նոյնանում է հայ-

36. Крамер С.Н. История начиняется в Шумере, с. 99-126.

37. Գավումբյան Մ., «Վերին ծովի» տեղադրությունը.-ԼՀԳ 1977, 2, էջ 85:

38. «Հ» հնչյունի համար սեպազիրն առանձին Ծան չի ունեցել եւ այն գրվել է «խ» կամ բաց և բողնվել: Աբաղական արբյուրներում այս աստծո անունը հանդիպում է երկու տարբերակով՝ Խայա եւ Էյա: Եթե սույն աստծո անվան սկզբնատառը «խ» էր, ապա երկրորդ ձեւը պետք է լիներ «Էյեյա», մինչդեռ այդպես չէ: Նշանակում է՝ անվան սկզբնատառը եղել է «հ», իսկ անունը հնչել է «Հայա»:

39. Զանյոյան Գ., «Բարելոնի Ակիտու տոնահանդես» սեպազիր արձանագրությունը, «Գարուն», 1990, թիվ 2, էջ 95: Հոդվածագիրն այդ բնագիրը համարում է Հայկի և Բելի իրական-պատմական անձնավորություններ լինելու փաստ: Մեր կարծիքով այն դիցապահություն է:

40. Մարդուկը Ք.ա. 22-րդ դարից ի վեր հայտնի է իրեն Բարելոն բաղադրի հովանավոր աստված, իսկ առաջին բարելոնյան հարստության ժամանակաշրջանից (Ք.ա. մոտ 1894-1595 թթ) դառնում է Շումերի և Աբաղի գըլ-

կական ավանդության Բելի հետ<sup>41</sup>, իսկ Հայան՝ Հայկի: Ելբայից (Հյուսիսային Սիրիա) գտնված գրավոր աղբյուրներում (Ք.ա. 23-րդ դար) Հայկական լեռնաշխարհի բնակիչները (Արմի և Ազի քաղաքներից) կոչվում են «Հայայի որդիներ»<sup>42</sup> (հմնտ. մեր երկրի ու ժողովրդի Հայկի անունով կոչվելու ըստ Խորենացոյ): Վերոհիշյալ փաստերը խոսում են հօգուստ Էջի-Հայա աստծո Հայկական լեռնաշխարհի հետ կապված լինելու: Հայկական լեռնաշխարհի հետ է կապված նաև նրա որդի Ռումուզին: Ըստ «Էնմերքարը և Արատտայի գերազույն քորմը» վիպերգի Ռումուզին Արատտայի հովանավորն է, արատտացիները՝ նրա ընտրյալ ժողովորդը.

### 567. Մարդիկ Արատտայի՝ գերադասվածները մյուս

մարդկանցից,

### 568. մարդիկ, որոնց Ռումուզին գատեց մյուս մարդկանցից...<sup>43</sup>

Այժմ, երբ պարզված է Խնաննայի՝ Միջազնուքը, իսկ Ռումուզին՝ Հայկական լեռնաշխարհը ներկայացնելը, դառնանք Ռումուզի և Խնաննա դիցավեպին: Շումերական երգերի մի շարք<sup>44</sup> պատմում է Խնաննայի ստորերկրյա թագավորություն՝ «անվերադարձ աշխարհ» իշնելու (որ ես ցանկանում եր հաստատել իր իշխանությունը), այնուել նրա անհաջողության ու դեմքի հետ վերադառնալու մասին: Դեմքն ուղարկված էին Խնաննայի հետ, որպեսզի որևէ աստծո նրա փոխարեն

---

խավոր աստվածը:

41. Բել դիցանունն ունի սեմական ծագում եւ նշանակում է «տեր, տիրակալ»: Արադական եւ ասուրա-քարելական դիցաբանության մեջ այն տրվել է աստվածներից մի բանիսին, հատկապես էնիլին եւ Մարդուկին (ՄԻՄ, թ.1, ս. 126 հոդվածը գրել է Վ. Կ. Աֆանասևան): Հայկական ավանդության մեջ Բելը Հայկի հակառակորդն է, միջազնության բռնատիրության մարմնավողը:

42. Иванов Вяч.Вс. Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну. ՊԲՀ, 1983, թիվ 4, էջ 30-33:

43. "Թնմերկար և ...", ս. 218.

44. Դրամբ են՝ «Մեծ երկինքներից մեծ ընդերքներին», «Փոքր դեւերը բացում են երախները, մեծ դեւերը խոսի են ասում», «Արտի զանգատներով» «Վա՝ յ մայրամուտի տիրակալին» (ՀԱՊ, էջ 86-93):

տանեին «անվերադարձ աշխարհ»։ Ասորերկրյա թագավորության ամենազոր օրնաքննիրի համաձայն, այնտեղից ելնող պետք է իր փոխարքեն ուղարկեր իրեն հավասարագոր որեւէ մեկին։ Եւ ահա Ինաննան ոմնենալով դեռևի գործոյտնը (հմմտ. Ծամիրամի դյուքանքի հետ)՝ հանդիպում է երկու աստծու։ Արանք սարսափահար ընկնում են գետին և թափավում Ինաննայի դիմաց, որն էլ շոյքած ինքնասիրությամբ կյանք է շնորհում այդ աստվածներին և ուղեսորվում Ռոբոկ, որ իշխում էր իր ամուսին Դումովին։ Ի տարրերություն նախորդ աստվածների՝ Դումովին արքայավայել հանդերձավորվում է և բազմելով գանին՝ չի խոնարհվում Ինաննայի առաջ (հմմտ. Արայի մերժողական պատասխանը Ծամիրամին)։ Կառողած նրա պահվածքից՝ Ինաննան «մահվան հայցը» է զցում Դումովին վյա և նրան հանձնում դեռերին (հմմտ. Ծամիրամի «զորքի բազմությամբ» Արայի վյա հարձակվելլ և Արայի զորքելը)։ Ծումերների արևելի աստված Ռոբոկ օգնությամբ (որն Ինաննայի եռուայրն էր) Դումովին ազատվում է դեռևի ձեռքից (հմմտ. Ծամիրամի խոսք. «Ես իմ աստվածներին հրամայեցի նրա վերքեր լիզել, և Զա կը կենդանանա») և փախչում քրոջ մոտ.

### 35. Լեռնային օձի պէտ լեռներում սողաց:

Դումովին։ Նա բազեի պէտ, արագարծու թոշնի պէտ տարսով իր հոգին,

### 37. Եւ Գեշտինաննայի մոտ քերեց իր հոգին<sup>45</sup>:

Լեռնական հովիվների աստված Դումովին փախչում և ապատուն է զտնում լեռներում քրոջ մոտ, որ և պիտի գտնվեր նրա երկիրը՝ Արատուան։ Այնունետեւ երգերը պատմում են դեռերից Դումովին հնտապնդման մասին՝ հիշատակեղով երկու տեղանուն՝ Արայի և Ծովարի (կամ Կոբարի)։ Դեռերին ի վերջո հաջողվում է բռնել Դումովին և շումերական այլ գրավոր հուշարձաններում նրան հանդիպում ենք ստորերկրյա թագավորությունում<sup>46</sup>։ Իսկ աքաղական «Գիլգամեշ» դյուցագնավեպում Խշարին (շումերական Ինաննային փոխարինողն աքաղական աղբյուրներում) ուղղված Գիլգամեշին ասում է.

45. ՀԱՊ, էջ 80։

46. Ուր-նամուկի մահվան ողբում եւ Գիլգամեշի մահվան մասին բնագրում Դումովին հանդիպում է մեռյալների աշխարհում (ՄՀՄ, թ. 1, ս. 409-410, հոդվածը գրել է Վ. Կ. Աֆանասևան)։

45. Դումովիին՝ ամուսնուն քո պատաճելության,

46. Դու տարեց-տարի տոխպել եւ հեկեկալ 47:

«Տարեց-տարի հեկեկալը», հավանաբար, արտացոլում է Դումովիի (հմմտ. հայկական Արայի հետ), իրեն բնության աստծո, ամեն տարի մեռնելու եւ հաջորդ տարի հատնելու պատկերացումը:

Ինչպես հշվեց, Դումովիի երկրում հիշատակվում է երկու տեղանուն՝ Արային և Շուրարին (Կուրարին): «Շումերական արքայացանկում» Դումովիի մասին ասվում է, որ «նրա քաղաքը եղել է Կուրարին (Շուրարին) 48»: Շուրարի (Կուրարի) անոնվ հայտնի է Երեղու 49 քաղաքի մի մասը: Երեղուի մի մասն ու Դումովիի երկրի Շուրարին (Կուրարին) չեն կարող նույնը լինել, որովհետեւ վերջինս հիշատակվում է լեռնային շրջանում, իսկ Երեղուն հարթավայրային քաղաքը է: Բացի այդ, հայտնի է, որ Դումովին Արատուայի հովանավոր աստվածն է և տրամաբանական կլիներ այս երկու տեղանունը (կամ Շրանց հետագա հիշատակումները) որոնել Արատուայի տարածքում:

Եթե ճիշտ է տեղանվան Շուրարի ընթերցումը, ապա այն կարելի է նույնացնել աստրա-բարեկական աղբյուրների Շուրարի (ավելի ուշ՝ Շուրիի կամ Շուրք) երկրանվան հետ, որը տեղադրվում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արեւմտյան շրջանում 50: Եթե տեղանունը պեսոք է ընթերցել Կուրարի, ապա այն կարելի է նույնացնել Աշուրնասիրապալի Թ.Ա. 866 թվին հիշատակած Կուրքու երկրանվան հետ, որն ըստ Ն. Աղոնցի, պահապանվել է հետազայի Գիրքու, ապա Կոպ-Նալ տեղանուններում: Կուրքուն տեղադրվում է հարակից տարածքում Եփրատի ոլորանում 51:

Արայի տեղանունը համեմատելի է ասորեստանյան աղբյուրների

#### 47. ՀԱՊ, էջ 128:

48. Jacobson Th. The Sumerian King List, p. 88. Այս տեղանունը սովորաբար ընթերցվում է Շուրարի (Дьяконов И.М. Общественный и государственный строй древнего Двуречья, Шумер, с. 170):

49. Երեղուն կմկի աստծո (տես ծանոթ. 32) պաշտամունքի կենտրոնն էր: Քաղաքի անունը նշանակել է «քարի քաղաք»: Քաղաքը գտնվել է Եփրատի ափին, Շումերի հարավում եւ համարվել է շումերների հնագույն քաղաքը:

50. Շուրիի երկրի մասին մանրամասն տես Սարկисյան Դ.Н. Страна Шубрия, Е., 1989:

51. Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 73:

Արանի (Արան, Արանե) երկրամասի (տեղադրվում է Եփրատի միջին հոսանքում Դիաբրեքիրից արևոտությ) և Պողոսոսի Մելիտենի մոտակայքում հիշատակված Արանե կայանի անվան հետ՝<sup>52</sup>: Մինչեւ 1915 թվի հայերի ցեղասպանությունը Հայկական Տավրոսով Եփրատի անցման շրջանում պահպանվել էր երկու բնակավայր՝ Արև և Օրով անոնց երրորդ՝<sup>53</sup>: Ռիշագրավ է, որ գյուղերի մոտ գտնվող սուրբ համարվող մի աղյուսի հետ կապված հավատալիքները հիշեցնում են բնության զարթոնքի և մեռնող ու հառնող աստծո պաշտամունքին բնորոշ գծեր՝<sup>54</sup>: Չի բացառվում նաև, որ հայկական հավատալիքներում հարություն տվող արակների անվան հիմքում ընկած լինի Արալի տեղանունը: Դեռևս Ս. Հ. Սեյս գտնում էր, որ արակներ անվան վերջին -եղ-ը մասնիկ է, որի հետ համաձայնելով, Գր. Ղափանցյանը ցույց է տալիս նոյն մասնիկով կազմված այլ անոններ ևս՝<sup>55</sup>: Սեյսը արալ- հիմքը կապում էր շումերների ստորերկրյա թագավորության Արալի անվան հետ: Մեզ ավելի հավանական է թվում արակներ անվան կապը շումերական երգերում հիշվող Արալիի հետ, որն, ամենայն հավանականությամբ, գտնվել է Տավրոսի լեռներում, որը մինչեւ 20-րդ դարի սկիզբը պահպանվել են մեռնող ու հառնող աստծո պաշտամունքը հիշեցնող հավատալիքներ՝<sup>56</sup>:

52. Ադոնց Ն., Յշվ., Էշխ., էջ 43: Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 390-391:
53. Պատմություն Անքափի հայոց, աշխատասիրեց և խմբագրեց Գ. Ա. Սարգսեան, հատոր Ա, Լու Աննելըս, 1953, էջ 74, (բաժինը գրել է Ե. Քասունին):
54. Քրիստոնեության շրջանում նրա մոտ գտնվող մատուրը վերանվանվել է Ս. Սարգսիս, իսկ աղյուսը՝ Ս. Սարգսիս-սու (Պատմություն Անքափի հայոց, էջ 75):
55. Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 10-12:
56. Շումերական երգերի Արալին տեղադրելով Հայկական Տավրոսով Եփրատի անցման շրջանում, ամենեւին չեմք բացառում, որ այն կարող էր գտնվել Վանա լճի արեւելքում հիշատակվող Արալեզ (Լեզբ) գյուղի և դաշտի տարածքում: Այդ տարածքում Արա Գեղեցիկի մասին հավատալիքները պահպանվել են միջնադարում (տես ծանոթ. 8), որոնց արձագանքները հասել են մինչեւ 20-րդ դար (տես Սրբանձոյանց Գ., Երկեր, հ. 1, Երեւան, 1978, էջ 52: Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 377-379):

Ամփոփելով ասվածը՝ տեսնում ենք, որ Արալին ու Շուբարին (Կուրարին) կարելի է տեղադրել Արատտայի տարածքում: Ինչ վերաբերում է Շուբարի (Կուրարի) տեղանվան, ինչպես նաև այլ տեղանունների ու դիցանունների Հայկական լեռնաշխարհում եւ Միջագետքում հանդիպելուն, ապա դա պետք է բացատրել ապագա շումերական քաղաքակրթության կրողների վերը հիշված զարդի հաճամանքով, որը կատարվել է Հայկական լեռնաշխարհի հարավից եւ Հյուսիսային Միջագետքից դեպի Հարավային Միջագետք<sup>57</sup>: Հավանաբար, նախքան այդ զարդին էլ Հայկական լեռնաշխարհի բնիկների եւ նրանց հարավային հարեւանների մոտ ատեղծվել է այն պատմությունը, որը պյոժեստային հիմք է հանդիսացել շումերական Դումուզի եւ Խամենա, հայկական Արա Գեղեցիկ եւ Շամիրամ դիցավեպերի համար: Երկու պատմությունների մեջ էլ Հայկական լեռնաշխարհը (Արատտա, Հայաստան) ներկայացնում է դրական գծերով (վեհանձն, հպատ, գեղեցիկ, ընտանեսեր, հավատարիմ) օժտված արական կերպարը, իսկ Միջագետքը (Շումեր, Ասորեստան) ներկայացնում է իգական կերպարը, որը գոռոզ է, այրասիրտ, վավաշոտ, իշխանատենչ եւ դառնում է իր սիրեցյալի մահվան պատճառը: Տվյալ դեպքում փոխառությունների մասին խոսք լինել չի

57. Նման կարգի նույնություններից կարելի է նշել Նիբուր (Արատտու) լեռան եւ շումերական Նիբուրու (Նիպուր) բաղադրի անունների նույնությունը: Ուշագրավ է, որ եւ լեռը, եւ բաղադր եղել են նույն նշանակությամբ աստվածների (Թեշուր եւ Էնիլ) պաշտամունքի կենտրոններ (համադրությունը Ս. Գ. Հմայակյանին է): Կարծիք է հայտնվել Սասունի (Շուբրիայի) Սիմ եւ Մարաթոնկ լեռների միջագետքյան Սիմ եւ Մարդոնկ դիցանունների հետ առնչվելու մասին (համադրությունը Ռ. Մ. Թորոսյանին է, տես Հմայակյան Ս. Գ., Վաճի բազավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 87): Նեմրուր լեռնանունը եւ նրա հետ կապված հայկական առասպելը (Պոտրովսкий Բ. Բ. Բնապա. Կամենные статуи в горах Армении, Л., 1939, с. 39) կապվում են Նինուրբա աստծո եւ նրա մասին Վանա լիի շրջակայինում գոյատեւած մի առասպելի հետ (Ղափանցյան Գր. Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 16): Միջագետքի բաղադրներից մեկի հովանավոր աստծո անունն էր Շարա. այդ անունով հայտնի է Հայկի բռներից մեկը՝ Շիրակի անվանադիրը: Շումեր անվան բացատրության հնարավոր տարբերակներից մեկն

կարող, քանզի այդ դեպքում փոխառող ժողովուրդն իր հներոսին կօժտեր դրական, իսկ հակառակորդին՝ բացասական գծերով, սակայն երկու պատմության մեջ էլ կերպարներն անփոփոխ են: Երկու հարեւան ժողովուրդների (իսկ հարեւան են եղել նանք Ք.ա. 6-րդ հազարամյակում և ավելի վաղ) առեղծված այս ավանդապատումը հնարավոր է, որ եղած լինի արտահայտությունը նրանց միջեւ գոյություն ունեցած միջնեղային ամուսնությունների<sup>58</sup>: Ք.ա. 3-րդ հազարամյակում այդ պատմության շումերական տարրերակը գրի է առնվել Միջազնուրում, իսկ հայկական տարրերակը նորաստեղծ հայկական գրով գրի առնվեց ավելի ուշ՝ Ք.հ. 5-րդ դարում, երբ պատմության թատերաբեմից վաղուց հնաւացել եւ մոդացության էին մատնվել Ծովմերն ու Արատուան, իսկ նրանց փոխարինել էին Ասորեստանն ու Հայաստանը:

Վերջում առանց մանրամասն հիմնավորման, կուգենայինք ընթերցողի ուշադրությանը ներկայացնել «Հայկ և Բել» դիցավեափի ակունքներին վերաբերող մեր ներադրությունը, որը դեռևս կարիք ունի հանգամանալի ուսումնասիրության ու հիմնավորման:

Ասովածաշնչի Ծննդոց գրքում Արեք (Ուրուկ) քաղաքի կառուցումը կապվում է Ներրովի անվան հետ. «Եւ Քուշը ծնեց Ներրովին. աս սկսեց երկրի վրա գորավոր լինել: Սա Եհովայի առաջ մի գորավոր որտորդ եղավ. նրա համար ասվում է՝ Ներրովի պես գորավոր որտորդ Ե-

---

այն կապում է Շուրարիի հետ: Կարծիք է հայտնվել նաեւ հայոց Վահազն աստծո եւ Գիլզամեշի շումերական անվան (Բիլզամեշ) ազգակցության մասին (Մուլդուսյան Զ., Հայկական աստվածային նախաստեղծ եռյակ.-ԼՀԳ, 1986, թիվ 6, էջ 71): Վերեւում խոսվեց Հայա աստվածության մասին: Զի բացառվում, որ այս համարությունների մեջ լինեն նաեւ պատհական նմանություններ, ուստի եւ բոլոր այս համարություններն ունեն լուրջ ուսումնասիրման եւ հիմնավորման կարիք:

58. Ուշագրավ է, որ Քրիստոնեության շրջանում ժողովրդական հավատալիքներում Արա Գեղեցիկին փոխարինած Սուրբ Սարգիսը գողանում էր երկու հարեւան ժողովուրդների՝ հովաների ու Վրացիների աղջիկներին (Ղափանցյան Գր., նշվ. աշխ., էջ 88): Մեր օրերում եզդիների հետ խառը բնակության վայրերում պատմում են որ Ս. Սարգսի փախցրած աղջիկը ազգությամբ եզդի է:

հովայի առաջ: Եւ նրա թագավորության սկիզբը Բարելոնը և Արեքը և Աքադը և Քաղաքնեն էր Սենապտ երկրուն: Այն երկրից դոդս եկավ Աստրը և շինեց Նինվեն և Ռորովիր և Քաղան քաղաքը» (Ծննդոց, 10, 8-11): «Ներրովիրը, Խորենացու հավաստմամբ (գիրք Ա, գլ. Ե), նոյն Բեկն է: Նա Հայաստան-Միջագետը հակամարտության մեջ Շերկայացնում է Միջագետը և ձգտում հպատակեցնել Հայաստանը, որ հաջողությամբ չի պակվում: Այս մոտիվը կարմիր թելի պես ձգվում է Հայկ և Բեկ, Հայա և Մարդուկ («Ակիտու տոնահանդես») ավանդապատումների և շումերա-արատուական հարաբերությունների մասին պատմող «Էնմերքարը և Արատուայի գերագույն քորմը» Վիպերգի պյուժներում. Էնմերքարը և ձգտում էր Արատուայի (Հայկական լեռնաշխարհ) հապտակեցմանը, ինչը սակայն, ձախողվեց: «Նա, ըստ «Շումերական արքայացանկի», եղել է պարտապատ Ռորուկի կառուցողը (հմմտ. «Ներրովիր՝ Արեքի»):

Ելնելով սյուժեի ընդհանրությունից և տեղայնացման (Հայատան-Միջագետը) նոյնությունից՝ ենթադրում ենք, որ Հայկ և Բեկ («Ներրովիր») ավանդապատման ակունքները գալիս են առնվազն Ք.ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսից: Ք.ա. 2-րդ հազարամյակում, կապված Բարելոնի բարձրացման հետ, ավանդության մեջ Ուրուկին (Արեք) փոխարինում է Բարելոնը, իսկ Միջագետը մարմնավորող դառնում է Բարելոնի գլխավոր աստված Բեկ-Մարդուկն՝ ընդդեմ Հայայի: Խորենացու գրի առած հայկական տարրերակում Բեկի (Մարդուկ, Ներրովիր) դեմ երնում է Հայկը (Հայա): Մեր կարծիքով Ք.ա. 3-րդ հազարամյակում Հայատան-Միջագետը առնչություններն արտահայտվել են Էնկի և Էնլիլ աստվածների մասին զրուցներում: Էնկին, որն աքաղական աղբյուրներում հայտնի է Հայա անունով, կապվել է Հայկական լեռնաշխարհի հետ և, հավանաբար, եղել է արատուացիների գերագույն աստվածը (տե՛ս «Արատուայի դիցարանը», ենթարածնում), իսկ Էնլիլը շումերների աստվածահայրն է: «Էնմերքարը և Արատուայի գերագույն քորմը» Վիպերգում աստվածներին փոխարինում են Հրանց պաշտամունքի բարձրագույն սպատավորները՝ գերագույն քրմերը: Հայկ և Բեկ - Էնկի և Էնլիլ դիցավեպերի հարաբերությունը համեմատենի է Արա Գեղեցկի և Չամիամ - Դումուզի և Ինաւնա ավանդագրույնների հարաբերության հետ: Էնկի և Էնլիլ աստվածների մասին պատմող զրուցները, սակայն, չենք բնենի այստեղ, այլ կթողնենք հետագային:

# ՊԱՀՏԱՄՈՒՆՔԸ ՀԱՎԱՏԱՎԻՔՆԵՐԸ ԵՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐԱՏՏԱՅՈՒՄ

«Արատուայի պետական կառուցվածքը և բրմուրյումը» բաժնում կխոսայի պետության մեջ այն մեծ դերի մասին, որն ունեցել են բրմուրը՝ աստվածների պաշտամունքի սպասավորները: Միայն գերազույն քրմի կողմից երկրի կառավարման փաստից կարելի է պատկերացնել Արատուայի կյանքում պաշտամունքային երեսովըների կարեսորությունը: Վիպերգում մի քանի անգամ հշվում է, որ Արատուայում կառավարվում են «գորնարերություններ», աղոթք ու պաշտամունք»<sup>1</sup>, որ նրա բոլոր տաճարներում (բնագրում «գանձնուներում») «երգվում են սովոր երգեր ու աղոթքներ»<sup>2</sup>. Ու՞մ էր ուղղված այդ պաշտամունքը, ո՞մ էին ձոնվում երգերն ու հոլվում աղոթքները, ո՞ր աստվածներին էին զրոնք մասուցվում: Այս հարցերի պատուախանը տաղու նպատակով ասորներ կանենք Արատուայի դիցարանը վերականգնելու փորձ, հշելով, սակայն, որ այն հիշյալ հարցերի վերջնական պատուախանը չէ:

## Արատուայի դիցարանը

Նախորդ էջերում ցոյց է տրվել, որ արատուայիների հովանավոր սոլոված Ռումուզին պատկանել է մի աստվածային ընտանիքի<sup>3</sup>, որը պաշտվել է Արտուայում և որի աստվածներից մի քանիսը մուտք են գործել շումերական պամերեռն՝<sup>4</sup>: Այդ անցման շնորհիվ էլ նրանք պայօն հայտնի են մեզ: Արատուական աստվածների մասին պատկերացում է տալիս շումերական «Երես իմ մայրը շլիներ» երգի նետելյալ հատվածը.

1. «Էնմերկար և ...», с. 211.

2. Նույն տեղում, էջ 208:

3. Տե՛ս «Շումեր-Արատուա հարաբերությունների արտահայտությունը դիցարամության մեջ» վերմագրի ներքո:

4. Հարեւամ ժողովրդի աստծո մօւտքը որեւէ ժողովրդի դիցարան հին աշ-

15. Գեշտինաննան քո քրոջից վաստ չէ:

Ինամնա, արժանապատվորեն խոսք փոխանակենք:

Ես իմբ Ուլու առածոց վաստ չեմ:

Նինձգալլա, խորհրդակցենք հանգիստ:

Էնկի աստվածը Զոևնից վաստ չէ:

20. Ինաննա, արժանապատվորեն խոսք փոխանակենք:

Տորտոր աստվածոմին նինձգալից վաստ չէ<sup>5</sup>:

Դումովիի ընտանիքից հայտնի են դառնում նրա հայրը (Էնկի), մայրը (Տորտոր) և քույրը (Գեշտինաննա): Էնկի աստծո անունը (Էն-կի) շումերերեն նշանակում է «երկրի քույր», «երկրի տիրակալ», բայց շումերական դիցարանում նա պաշտվել է իրեր ջրերի և իմաստության աստված: Միաժամանակ նրա պաշտամունքը սերտորեն կապված է եղել Հայկական լեռնաշխարհի հետ, իսկ աքաղական աղյուսակում նրան տրվել է Հայա անունը<sup>6</sup>, որը նոյնանում է լեռնաշխարհի բնիկ ժողովրդի՝ հնդեւրոպացի հայերի ինքնանվան հետ: Հավանաբար, իրեւ «երկրի տիրակալ» նա պաշտվել է Արատտայում և, անցնելով շումերական դիցարան, այնուեւ պահպանել է Շախմկին Գոմեկշիայի հետ կապված իր անունը: Այս, որ Էնկի-Հայան մտել է շումերա-աքաղական դիցարան գերազույն քառյակի մեջ, մտածել է տալիս, որ արատտականում նա պետք է եղած լինի գերազույն աստվածներից մեկը կամ զլիավոր գերազույն աստվածը: Վերոհիշյալ երգում Էնկին համադրվում է Ինաննայի հոր հետ. տվյալ դեպքում նրա հայրը լուսնի աստվածն է, բայց շումերական այլ աղյուսակում Ինաննան Շերկայանում է որպես եր-

---

խարիսում տարածված երեւույթ է (օրինակ՝ Արեսը հունական պանթեոնում, Միհրը հայկական պանթեոնում եւ այլն)<sup>7</sup> կապված երկու ժողովուրդների մերձավոր շվման հետ:

5. Այս հատվածի բննուրյունը՝ համապատասխան ծանոթագրություններով, տես «Շումեր-Արատտա հարաբերությունների արտահայտությունը՝ դիցարանուրյան մեջ» բաժնում:

6. Նոյն տեղում:

կընքի առողջ՝ Անի դուստր՝ Ամփոփերով կարելի է ասել, որ Արատուայի զյանապիր գերազոյն աստվածը կամ գերազոյն աստվածներից մեկը և դեղ է «Նորիրի տիրակար», ինաստության և շրերի աստված էնկին, որին աքադական աղբյուրներում տրված Հայա անոնը նոյնանում է հայ ժողովոյի ինքնանվան հետ:

Էնկիի կինը, որ համադրվում է Ուրուի և Ինանայի մոր՝ Նինգապ աստվածուհու հետ, Դումոզիի և Գեշտինանայի մայրն է:

Էնկիի որդի Դումոզիի անոնը շումերերենում նշանակում է «ինկական (հարազատ) որդի» (դումո-որդի, օհի-ինկական, հարազատ): Շումերական դիցարանում նա նովվության, մատոնու ու հասնող բնության աստվածն է (կապիան Ինանայի հետ): Ըստ «Շնամերապը և Արատուայի գերազոյն քրոմը» վիշտերզի Դումոզին արատուացիների նովանավոր աստվածն է, որոնց նա ընտրել է «մյուս մարդկանցից»<sup>7</sup>: Հիշյալ երգում Դումոզին համադրվում է Ուրու առողջ հետ, որն արեւի աստվածն է շումերական դիցարանում և Լոգալրանդայի թերամով կոչվում է «սեւազըրուի ժողովոյի հայր»<sup>8</sup> («սեւազլուի ժողովորդը» շումերների ինքնանվանումն է): Կարենի է ենթադրել, որ Դումոզին Արատուայում պաշտվել է իրեն արևի աստված և համարվել է արատուացիների նովանավորը («հնայրը»): Դումոզիի հետ է կապիան նրա քրոշ՝ Գեշտինանայի պաշտամունքը: Նրա անոնը շումերեն նշանակում է «Նորի համարողի վագք»: Նա համեմու է գալիս իրեն բարու և ինքնազոնաթերման մարմնավորում, որն ինքնական համաձայնում է իշնել ստորերկորյա թագավորություն՝ սիրելի եղբոր փոխարեն, և Ինանայի հակապատկերն է<sup>9</sup>: «Սրտի գաճատաներով» երգում Դումոզին նրան կոչում է «իմաստնոմի», «երգասեր», «հնայրմի» և «սեւանող»<sup>10</sup>: Հայվանա-

7. "Էներկար և ...", с. 218.

8. Kramer S.N. From the Tablets of Sumer, p. 237-238.

9. МНМ, т. 1, с. 300 (հոդվածը գրել է Վ. Կ. Աֆամասեւան):

10. ՀԱՊ, էջ 82:

բար, այս մակրիմերը կապված են Գեշտինաննայի պաշտամոնքի և ֆունկցիանների հետ:

Արատուայի դիցարանում առաջմ մեզ հայտնի է չորս աստված, այն էլ՝ շումերական անուններով: Բավարարվելով՝ այսքանով՝ այժմ տեսնենք, թե արատուական հավատապիճների ու սովորույթների մասին ինչ արձագանքներ են պահպանվել շումերական աղբյուններում:

### Հավատալիքներ եւ սովորույթներ

Հին ժամանակներում շատ ժողովուրդների մեջ տարածված է եղել արքայական իշխանության երկնային ծագման և արքաների աստվածներից նշանակված լինելու հավատապիճը: Բացառություն չի եղել նաև Արատուան. Արատուայի գերագույն քուրմ իրեն համարում է պատերազմի աստվածունոց նշանակված<sup>11</sup>: Ամեն մի երկիր, քաղաք և անգամ անձնավորություն ունեցել է իր հովանավոր աստվածությունը, որին շումերական գրավոր հոգարձանները կրչում են «գամա»: Հատ նոյն գերագույն քուրմի՝ նա է որոշել Արատուայի ճանապարհը.

#### 275. «Երր պատկեն Արատուայի՝

բարեգույք լաման սուրբ ծեսերի երկրի,

երկնային լուսն պատկի նման որոշեց ճանապարհն

Արատուայի,

#### 278. այնժամ ես իմ մեծության մասին հաստատ իմացա»<sup>12</sup>:

Բազմիցս ասվել է, որ Արատուային հովանավորում էր Դոմոզին: Արատուայի գերագույն քուրմը դժվարին պահին դիմում է իր կառավարչին, որը վիպերգում անուն շտմի<sup>13</sup>: Դժվար է ասել՝ կառավարիչը Դոմոզին է, թե՞ մի այլ աստված կամ նորին են արդյոք լաման ու Գեշտինաննան:

Տարածված պատկերացման համաձայն առատ թերքը, անքերիու-

11. Տես «Արատուայի պետական կարգն ու իրմությունը», ծանոթ. 2:

12. «Էհմերկար և ...», ս. 211-212.

13. Նույն տեղում, էջ 218:

բյու, ուազմական հաջողությունն ու անհաջողությունը եւ այլ բախ-ստրոց իրադարձություններ կապվում էին աստվածների բարեհաճո-րյան նետ<sup>14</sup>. Մեծ էր հավատը նաև աստվածների արձանների՝ կուռքե-րի նկատամամբ: Հին աշխարհի պատմությունը հարուստ է հայրածանակից նետո աստվածների կուռքերը գերեզու փաստերով, որի շնորհիվ, ըստ հավատալիքի, հայրողը պարտվողի երկրից տանում է Երա զորությունը: Նույն հավատալիքի արտահայտությունն է նաև Արատտայի տիրակալի պահանջը՝ հնագանդվել Արատտային եւ թույլ տալ Ինաննա աստվա-ծունուն փոխադրվել Արատտա<sup>15</sup>:

Ժառանգականության նետ կապված մի հետաքրքիր սովորույթ է հիշվում «Սրտի գանգատներով» երգու: Դեռքից հետապնդվելով՝ Դո-մուգին թարձնվում է քրոջ մոտ: Դեռքին չի հաջողվում Գեշտինանայից խմանալ եղրոր տեղը, եւ Դոմուգին մատնում է Երա ընկերը, որին հե-տեւում է Դոմուգի խոսքը.

153. «Քույրս իմ կյանքը փրկեց, ընկերս վերցրեց իմ կյանքը:

Քույրս որդուն փողոց կուղարկի, ամենքը կողշունն Երան,

155. Ընկերս որդուն փողոց կուղարկի, ոչ ոք ողջոյն չի տա  
Երան»<sup>16</sup>:

«Էնմերքարը եւ Արատտայի գերազոյն քույրմը» վիպերգի վերջում Ինաննան տոն է կազմակերպում ի պատիվ Դոմուգիի եւ հրամայում մի պառավի գնալ Արատտա ու վերցնել մի որեւէ աղջկա, ըստ երեսությին, իրեւ հարսնացու Դոմուգիի համար: Այդ հաստվածը խիստ վնասված է, բայց պահպանվել է հարսնացուի արտաքինին վերքերող երկու տող.

591. Առ աշքերը ծարիրով սեւացրեց,

592. սպիտակ զգեստ հազցրեց<sup>17</sup>

Սա մեր լունաշխարհում հարսնայաց հանդեսի մասին առաջին տեղեկությունն է: հարսնացուն հազնում էր սպիտակ, եւ Երա աշքերը Շերկում էին սև ծարիրով—

14. Sb'u օրինակ "Энмеркар и ...", էջ 218:

15. Kramer S.N. From the Tablets of Sumer, p. 232-234.

16. ՀԱՊ, էջ 88:

17. "Энмеркар и верховный жрец Аратты", с. 219.

# ԱՐԱՏՏԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԻՆ ՈՒ ՔՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Որեւէ պետության Շերքին կառուցվածքի մասին դժվար է պատկերացում կազմել միայն օտար աղբյուղների վրա հիմնվելով, երբ չկան սեփական սկզբնաղբյուրներ: Արատուայի հարցում գործը կրկնակի դըժվարանում է այն պատճառով, որ սկզբնաղբյուրները, բացի օտար լինելոց, նաև վիպական բնույթի են և մինչեւ գրի առնվելը, երկար ժամանակ մնալով բանավոր վիճակում, պետք է ենթարկված լինենին որոշ փոփոխությունների: Այնուամենայնիվ, վիպերգերում պահպանված հատուկնետ տվյալների հիման վրա ստորև կփորձննը մոտավոր պատկերացում տալ Արատուայի Շերքին կարգի վերաբերյալ:

Ըստ շումերական պատկերացումների, արքայական իշխանությունն իշեցված է երկնքից<sup>1</sup>, իսկ արքաները՝ նշանակված աստվածների կողմից: Վիպերգերից մեկում Արատուայի տիրակալը համարարում է, որ ինքը նշանակված է պատերազմի աստվածունու կողմից<sup>2</sup>: Միաժամանակ, կառավարող հարատությունը համարվում էր որեւէ աստծոց սերված: Որուկի առաջին հարատության արքաները համարվում էին արեւագուններ<sup>3</sup>: Վիպերգերը, սակայն ոչինչ չեն հաղորդում արատուական տիրակալների ծագման մասին:

Վիպերգերի համաձայն, Արատուայում և Շումերում դեկավարումն իրականացնում էին «Են» («զերագովն քորմ») տիտղոսը կրող կառավարիչները: Վիպերգերի քննությունից պարզվում է, որ գերազուն-

1. Крамер С.Н. История начинается в Шумере, с. 176.

2. 221. Ես զերագովն եռմ Եմ նշանակված սուրբ ծեռինվ,  
տիեզերի տիրուիին, զայխսնը երկնային արբայի,  
իննինը օրեմբների՝ ինամնան լուսեն,  
իսկապես ինձ բերեց Արատուա՝ սուրբ ծեսերի երկիր,

225. Երա դիմաց մեծ լեռան նման ինձ կանգնեցրեց լեռներում:

Տե՛ս «Էնմերկար և ...», с. 210.

3. Ուրուկի առաջին հարատության հիմնադիր Մեսինզաշերը համարվում էր արեւի որդին (Jacobsen Th. The Sumerian King List, p. 84 է):

բոլոր նախ և առաջ եղել է հոգեսոր առաջնորդ, հոգացի է տաճարների շինարարությունը և ինքն էլ բնակվել է սրբավայրում<sup>4</sup> (այսինքն՝ արքունիքը համարվել է սրբավայր): Նրա իշխանությունը տարածվել է նաև աշխարհիկ իշխանության որորուներում: Շումարական «էն»-երը կրում էին նաև «զոգալ» («մեծ մարդ») տիտղոսը և առաջնորդում գործին արշավանքների ընթացքում<sup>5</sup>: Արատուայի տիրակալները, սակայն չեն կրում «զոգալ» տիտղոս, իսկ արատուացիների հայտնի միակ արշավանքը դեկապոլս է ոչ թե գերագույն բոլորը, այլ մի բոլոր, որը կը բերել է «մաշմաշ» տիտղոսը<sup>6</sup> (այդ տիտղոսի հշանակությունը պարզված չէ. չի բացառվում, որ այն կապիկած լինի ուղղմական գործի հետ):

Առավել կարեւոր պետական հարցերը (պատերազմ հայուարարել, հաշտություն կնքել և այլն) Արատուայի գերագույն բոլոր որոշում էր ավագների ժողովի հետ խորհրդակցելով: Նման մի ժողով է նա հրավիրում վերոնիշյալ արշավանքից առաջ, որում ինչպես երեսում է «Էնմերքարը և Էնսուխեշդաննան» վիպերգից, նրա ձայնն ուներ վնայրոց հշանակություն: Գիգամեշին փառաբանող «Գիլիգամեշը ու Ազան» վիպերգում<sup>7</sup> ավագների ժողովից բացի, հիշվում է նաև երկրորդ՝ «քաղաքի տղամարդկանց ժողովը»: Ռիշագրավ է, որ նույն վիպերգում Գիգամեշի արած պատերազմի առաջնորդում է ավագների ժողովը, բայց այն հասկանության է արժանանում «քաղաքի տղամարդկանց ժողովում», որի որոշմամբ էլ Գիգամեշը պատերազմ է սկսում (վիպերգը

4. Դատելով շրմերական բնագրերից՝ Քրմերն ապրում էին «զիպարում», որը համարվում էր նաև Ինամնա աստվածունու կացարամը («Էնմերկար և վերօնակներ»), էջ 205, ծամ. 70: Պահպանի է Արատուայի գլուխոյն Քրմի կացարամի ավանումը.

442. Գերագույն Բուրմ Արատուայի, տեսմելով գայիսոնը,

443. ...ում, իր կացարամում լուս՝ Խմիմարքարում...  
Տե՛ս «Էնմերկար և ...», ս. 215:

5. Շումերական «էն»-ի ֆունկցիաների մասին հանգամանալիորեն տե՛ս Կանева И.Т., նշվ. աշխ., էջ 249-250:

6. Տե՛ս «Արատուայից Շումեր զնում էին զետով» բաժինը:

7. Kramer S.N. Gilgamesh and Agga-American Journal of Archaeology, LIII,

վերծանող Ա. Ն. Քրամերը կառավարման այս համակարգը կոչում է «առաջին երկարատ պաղամենու»<sup>8</sup>): Դժվար է ասել՝ գոյություն ունեցել է Արատուայում նման երկրորդ ժողով, թե ոչ, բայց գերագույն քրմին կից ավագների ժողովի (ծերակույտ կամ պետական խորհուրդ) գոյությունը փաստ է:

«Էնմերքարը և Արատուայի գերագույն քորմը» վիճերգը տեղեկություն է պահպանել Արատուայի արքունի շտեմարանի և արատուացի պաշտոնյաների՝ հականավաքների ու վերակացուների մասին: Արատուայի գերագույն քորմը Ռուբոկի տիրակալին առաջարկում է յանձնարժներ ու շինարարական քարերը, մետաղները փոխանակել հացանատիկի հետ, որը հարկանավաքների միջոցով շումերները պետք է հասցնեին Արատուայի արքունի շտեմարան.

Թո՞ղ նա հացանատիկ լցնի զամբյուղները, թո՞ղ դնի  
սայլերի վրա:

280. Այդ հացանատիկը նա թո՞ղ լեռները բարձրացնի,  
թո՞ղ կանգնեցնի հարկանավաքի մարդկանց մեջ:

Երբ հացանատիկով լցնի պարկերը,  
կկապի բեռնակիր էշերին,  
լեռնանցքային էշերի կողքին կկապի,

285. Եթե լցնի Արատուայի արքունի շտեմարանի մոտ...<sup>9</sup>

Արատուայի կառավարման գործում առաջնակարգ դեր է խաղացել քրմական դասը. երկրի տիրակալը եղել է գերագույն քորմը, քրմերը (հավանաբար՝ քրմապետերը) մասնակցել են ավագների ժողովին, մեզ հայտնի միակ արշավանքը զյուսպորել է «մաշմաշ» քորմը: Վիպերգերից ոչ մեկում արատուացի աշխարհիկ իշխանակոր չի հիշվում և անգամ տպավորություն է ստեղծվում, թե երկրի կառավարումն ամբողջությամբ գտնվել է քրմական դասի ձեռքին:

Եւ վերջում մի փաստի մասին, որն առայժմ բացատրություն չի գտել: Ծովերացի դեսպանի համար Արատուայի գերագույն քորմը համարվում է «էնսի».

436. Արատուա զնացող սուրբանդակը

թոշնի նման...լեռներում, որպես ճանճ՝ բնուաթափակած

1949, р. 1-18; "Гильгамеш и Ага", перевод, транскрипции и комментарии И.Т.

Каневои - ВДИ, 1964 N3, с. 260-267.

8. Крамер С.Н. История начинается в Шумере, с. 41-45.

9. "Энмеркар и ...", с. 212.

ձկան նման...մոտեցավ Արատուայից:

Որդախորքյամբ մունեղով Արատուայի արքումիք,

**440.** մոտեցավ իր էնսիին,

հրամանը, որ նա տանում էր, կատարում է<sup>10</sup>:

«Էնսիին» տիտղոս է, որի կրողը, նանդիսանալով համայնքի նոգեստր առաջնորդը, Շերկայացրել է համայնքն աստվածների առաջ, դեկապարել տաճարային և այլ շինարարությունը, իսկ ավելի ուշ ստանձնել է ավելի լայն իրավունքները<sup>11</sup>. Մի այլ տեղում էնսիրքարը համարվում է Արատուայի գերազույն քրմի հայրը.

177. «Քո հայրը՝ իմ տերը, քեզ մոտ ինձ ուղարկեց,

178. գերազույն քուրմը Ուրուկի, գերազույն քուրմը Կուլարայի<sup>12</sup> քեզ մոտ ինձ ուղարկեց»<sup>13</sup>:

«Հայրը» այսուն չի կարող Արատուայի վասարություն նշանակել, քանի որ նոյն վիպերգից ակնհայտ է, որ Արատուան անկախ էր և Ուրուկի գերազույն քրմի շամքեր՝ հպատակեցներու հրան, ապարդյուն էին դրան եկել: Իսկ «Էնսիրքարը և Էնսուխընշանան» վիպերգում արատուայի «մաշմաշ» քրմի պարտվելուց հետո Արատուայի գերազույն քուրմը, որ մինչ այդ ձգտում էր հպատակեցներ Ծովմերը, ճանաշում է Ուրուկի գերազույն քրմի առաջնությունն իր նկատմամբ՝ հրան կոչելով «մեծ եղբայր», բայց ո՞չ հայր՝<sup>14</sup>: Միաժամանակ շումերներն ունեին իրենց հոգեստր առաջնորդները և անհասկանալի են, թե ինչու պետք է Արատուայի գերազույն քուրմը շումերացոյ համար լիներ «Էնսի»: Այս առիթով հետաքրքիր է Գետրգ Զանոյանի կարծիքը<sup>15</sup>, ըստ որի պետք է ենթադրել, որ Ուրուկում և Արատուայում կառավարողները միենալուն հարստության Շերկայացոցիշներն են եղել: Այս հարցը, սակայն, կարու է հետագա խորը ոտունասիրության:

10. "Энмеркар и ...", էջ 215: Վերակացուների մասին տես նույն տեղում, էջ 218:

11. Дьяконов И.М. Общественный и государственный строй..., с. 142.

12. Կուլարան Ուրուկ Քաղաքի մի մասն է, ուր, հավանաբար, գտնվել են Քաղաքի պաշտամունքային տաճարները:

13. "Энмеркар и ...", с. 209.

14. Kramer S.N. From the Tablets of Sumer, p. 232-234.

15. Այս կարծիքը նա մեզ հայտնել է քանավոր զրույցի ժամանակ, նույն

# ԱՐԱՏՏԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿԱՅԻ ՀԱՄԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արատտայի պետական կարգի մասին խոսելիս ասվեց, որ դյուցազնավեպում հիշատակվում է պաշտոնյաների երկու խոմք, որոնք անմիջապես կապված են տնտեսության հետ. դրանք են հարկահավաքներն ու վերակացուները: «Ենթարքարը և Արատտայի գերագոյն քուրմը» վիճերգում Արատտայի տնտեսության մասին պահպանվել են կարեւոր այլ տեղեկություններ եւս:

Արատտան լեռնային երկիր էր: Նրա տնտեսության մեջ առաջնակարգ դեր է խաղացել անասնապահությունը, որի լավագոյն վկայությունն է արատտացիների հովվության աստված Դումուզիի ընտրյալ ժողովուրդ լինելը<sup>1</sup>: Կարեւոր է եղել նաև երկրագործության նշանակությունը: Ըստ վերոհիշյալ վիճերգի Արատտայում անձրեններից հետո անում էր ցորեն ու սիսեն<sup>2</sup>: Այս տեղեկությունը խոտում է ոռոգման համակարգի ոչ շատ զարգացած լինելու մասին, որի պառառով երկիրն ունեցել է երկրագործական մշակույթների պակաս. այն լրացնելու համար արատտացիները հացանատիկ են ներմուծել հարթավայրային Շումերից՝ փոխարենն այնուեղ արտահանելով մետաղներ ու բանկարժեք քարեր<sup>3</sup>: Նրանք մետաղները փոխանակում էին նաև «ծառերի պտուղների», բայց գինու հետ<sup>4</sup>, թեպես նույն վիճերգում նշվում է, որ Արատտա-

---

հարցի առքիվ հետաքրքիր է վիճերգի վատ պահպանված մի հատված.

498. Այնժամ .... եղել է

...ապրել են իշխանական տներ,

.....հաստատված:

501. Նրանց ասվածը կա....., նրա միտքը կա.....

Տե՛ս "Էհմերկար և ...", c. 217.

1. Տե՛ս «Շումեր-Արատտա հարաբերությունների արտահայտությունը դիցարամության մեջ» վերնազրի տակ:
2. "Էհմերկար և ...", c. 218.
3. Նույն տեղում, էջ 213, 219-220:
4. Նույն տեղում, էջ 219-220:

յում, ի պատիվ Ռումոգիի, Ինաննան «ուղ երկրում ծառեր աճնցրեց»<sup>5</sup>.

Հայկական լեռնաշխարհը հայտնի է եղել համբային հարստություններով, որոնց մասին հիշատակություններ կան շումերական աղբյուրներում: «Էնմերքարը և Արատուայի գերազոյն քուրմը» վիպերգը տեղեկացնում է Արատուայում ուկո, արծարի, բրոնզի, կապարի, լաշվարդի ու ասրդիոնի հանքերի ու մշակման մասին<sup>6</sup>: Իսկ վիպերգի վերջում պատմվում է, որ սպառնալիքներով ողինցվող բանագնացություններից հետո (Ս. Ն. Քրտմերն այն անվանում է պատմությանը հայտնի «առաջին նոգերանական պատերազմ») երկու երկրների միջև հաշտորյուն կնքվեց, որից հետո շումերներն Արատուա էին քերում ցորեն և այլ մշակույթներ, իսկ արատուացիները Շումեր էին տանում ուկի, արծար, լաշվարդ և ասրդիոն<sup>7</sup>: Սա միակ տեղեկությունն է Արատուայի՝ այլ երկրի հետ ունեցած ապրանքափոխանակային հարաբերությունների մասին: Կարեւոր է նշել նաև, որ Արատուայում գործ է ածվել չափ ու կշոր միավոր: «Էնմարդարը և Էնսումքեշդաննան» վիպերգում պատմվում է, որ Շումերի դեմ արշավանք կազմակերպելու համար Արատուայի տիրակալը «մաշմաշ» բրոնզ տայիս է հինգ մինա ուկի, հինգ մինա արծար և այլ ամբողջածեղաւ պիտույքներ<sup>8</sup>: Մինա չափի միավորը տարածված է եղել Առաջավոր Ասիայի հին երկրներում (հայկ. աղբյուրներում մնաս):

Բացի մետաղներից ու բամկարծներ քարերից Հայկական լեռնաշխարհից հարավ էր տարվում նաև շինարարական հումք՝ «վեռնային քարեր»: Ըստ «Էնմարդարը և Արատուայի գերազոյն քուրմը» վիպերգի, Ռումուկի հշանավոր Էաննա տաճարը կառուցվել է Արատուայից ուղարկված քարով<sup>9</sup>: Հայկական լեռնաշխարհից Եփրատով Միջազետք հոկայական քարարեկորի տեղափոխման մասին տեղեկություն է պահպանվել

##### 5. Նույն տեղում, էջ 218-220:

6. Նույն տեղում, էջ 205, 208, 218:

7. Նույն տեղում, էջ 205:

8. Kramer S.N. From the Tablets., p.232-234.

9. Վիպերգի 372-375 տաղերը պատմում են, որ ցորենը ստանալուց հետո արատուացիները համաձայնեցին տալ միայն սարդիան եւ ուղարկել իրենց վարպետներին՝ Շումերում տաճարներ կառուցելու համար: Բայց այդ պայմանը չի գոհացնում Արատուայի տիրակալին ("Էհմերկար և ...", c. 214).

Դիոդոս Սիկիիացու «Պատմական գրադարան» երկու<sup>10</sup>:

Շումերները պահանջում էին, որ արատուացի վարպետներն իրենց երկում կառուցեն տաճաներ<sup>11</sup>, որին նրանք համաձայնեցին միայն հացահատիկ ստանալուց հետո<sup>12</sup>: Արատուացում հիշվող արքունիքի, գերազույն քրմի «լուս կացարանի», շտեմարանի, «գանձուների», ինչպես նաև արատուացի ճարտարապետ-շինարարների մասին տեղեկություններից պետք է ենթադրել Արատուացում տաճարաշինության և ճարտարապետության այլ ճյուղերի զարգացման բաձր մակարդակ:

Եւ վերջում մի բացառիկ տեղեկության մասին: Հայտնի է, որ տնտեսության մեջ կարեւոր դեր են խաղացել կենդանիները, որոնք օգտագործվել են որպես քաշող ուժ և փոխադրամիջոց: Վիպերգի համաձայն շումերները որպես փոխադրամիջոց օգտագործել են էշերին<sup>13</sup>: Նրանք էշերին օգտագործել են նաև ուազմական արշավանքների ժամանակ և հեծյալներին կոչել են «էշերի կողերը սեղմողներ (խթողներ)»<sup>14</sup>: Վիպերգերից ակնհայտ է, որ այդ շրջանում (Ք.ա. 28-27-րդ դարեր) շումերները ձի չեն օգտագործել: Նույնը չի կարելի ասել արատուացիների մասին: Երանք, ի տարրերություն շումերների, ապրանքների փոխադրումն իրականում էին ձիերի միջոցով<sup>15</sup>: Պետք է ենթադրել, որ ձիերն օգտագործվել են նաև ուազմական գործում: Նշենք, որ սա ձիերի առաջին հիշատակությունն է սեպագիր բնագրերում և հիշատակվող ձիերը սանձվել են Հայոց լեռնաշխարհում:

10. Տե՛ս «Շումերից Արատուա զնում էին գետով» բաժնում:

11. «Էնմերկար և ...», էջ 208: Այս պահանջը վիպերգում կրկնվում է բազմից:

12. «Էնմերկար և ...», ս. 214.

13. 331. Երբ կապեց բեռնակիր էշերին,

լեռնանցքային էշերի կողմին կապեց,

տիրակալը՝ գերազույն բուրմը Կուլաբայի,

գերազույն բուրմն Ուրուկի, գերազույն բուրմը Կուլաբայի,

335. Արատուայի ճանապարհով ցորեն ուղարկեց:

Տե՛ս «Էնմերկար և ...», ս. 213.

14. «Գիլգամեշ և Արա», ս. 264.

15. «Էնմերկար և ...», ս. 208.

## ԱՐԱՏՏԱՅՑՈՒՄ ԳՐԻ ԳԽՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ամեն մի պետոքյան գոյոքյում և ճարադրում է գրի գործածոքյան առկայություն, լինի այն սեփական, թե օտար: Գործածվել է արդյո՞ք Արատուայում որևէ գրային համակարգ:

Ք.ա. 4-րդ հազարամյակի 2-րդ կեսին շումերները ատեղնեցին պատկերագրային (հիերոգլիֆ) համակարգ, իսկ Ք.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսին, ուղղելով պատկերագրերի գծերը և հատման կետերը սեպիկներով փոխարինելով, ատեղնեցին սեպագրերը: Այս կարետրագույն նվաճումն իր արձագանքն է գտնել շումերական դյուցագնավեպում, որի հիմքում ընկած են նոյն այդ ժամանակաշրջանի իրադարձությունները: Այն վերագրվել է Էնմերքարին և կապվել դիվանագիտական հարաբերություններում ծագած անհրաժեշտության հետ.

503. Դժվարին դարձան բառերը դեսպանի համար, և երբ

Հկարողացավ կրկնել դրամք,  
գերագույն քորմը Կուրուրայի ձեռք տվեց կավին և խոսքն  
աղյուսի տեսքով սահմանեց:

505. Մինչ այդ օրը չկար կավի վրա նշված խոսք,

նիմա, ո՞ւ վ Ռիթու, նիրավի դարձավ այդպես:

507. Գերագույն քորմը Կուրուրայի սահմանեց խոսքն

աղյուսատեսք,

նիրավի, (դա) այդպես կատարվեց<sup>1</sup>:

Հատվածից այն տպավորությունն է ստացվում, թե Էնմերքարը առաջին գրերի առեղծորդն է<sup>2</sup>: Սակայն վյապերդի հնուազա ընթացքից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է սեպագրին.

540. Գերագույն քորմն Արատուայի նայեց կավին.

ասված խոսքերը սեպեր էին դարձել, տեսքը

(Երանց)..... 3

1. "Էնմերքար և ...", c. 217:

2. Ստանալով նման տպավորություն՝ Ի. Տ. Կամենան այն բացատրում է վիպերգի հեղինակի համար Էնմերքարի ապրած ժամանակաշրջանը չափանց հեռու թվալու հանգամանքով (Կանևա Ի.Տ. Շումերսկий ..., c. 246-247):

3. "Էնմերքար և ...", c. 218.

Էնթրքարի կողմից սեպագրի առեղջմամ պառհատը երկար խոսքը մտապահելու դժվարությունն էր, որը վիպերգում շեշտվում է բազմիցը<sup>4</sup>. Ըստ վիպերգի, այդ համգամանքը Էնթրքարից առաջ հաշվի էր առել Արատուայի գերագույն քուրմը.

#### 455. Արատուայի գերագույն քուրմը սովորանդակին հաճանեց բառերը լուս առյուած տեսքով<sup>5</sup>:

Սա տեղի է ոմեցել սեպագրի առեղջումից առաջ և պետք է ենթադրել, որ Արատուայի գերագույն քուրմը գրել է պատկերագրերով: Նշանակում է՝ Ք.ա. Յ-րդ հազարամյակի 1-ին կեսին Արատուայում գրի գործածությունն անձանուր երեսով չէր. պետության գոյությունը հավաստվում է գրի գործածության փաստով:

Գրի գործածության հարցի պարզումը իր հետ նոր հարց է առաջ բերում. Արատուայում գործածված գիրը սեփական էր, թե՛ արատուացիներն օգտվում էին օտար գրերից:

Արեւմտյան Հայաստանը Թուրքիայի կողմից բռնագրավված լինելու հետեւանքով շատ քիչ է ուստմասիրված լեռնաշխարհի այդ հատվածը: Բայց քանի որ ողջ Հայկական լեռնաշխարհը Ք.ա. Յ-րդ հազարամյակում գտնվել է նոյն մշակութային գոտում և զարգացման միևնույն աստիճանում (այդ մասին՝ հաջորդ բաժնում), տեսնելով Արեւվելյան Հայաստանում սեփական գրի գործածությունը՝ կարող ենք ենթադրել նրա գոյությունը նաև Արեւմտյան Հայաստանում:

Քարի դարի ժամանակաշրջանի վերջում (Նոր քարի դար) առաջ եկավ պատկերների և պայմանական նշանների միջոցով գաղափարներն արտահայտելու պահանջ, որն էլ արտահայտվեց ժայռապատկերների ի հայտ գալով: Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանում գտնված ժայռապատկերները<sup>6</sup>, որոնք հայտնի դարձան վերջին

4. Նույն տեղում, էջ 214, 218:

5. Նույն տեղում, էջ 216:

6. Հյուսիս-արևելյան Հայաստանի ժայռապատկերների մասին տես Բարսեղյան Լ. Ա., Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության..-ՊԲՀ, 1966, թիվ 3, էջ 147-159, Մարտիրոսյան Հ. Ա., Խորայելյան Հ. Ռ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971, Կարախանյան Գ. Հ., Սաֆյան Պ. Դ., Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970,

ստանամյակների ընթացքում, թվագրվում են Ք.ա. 6-րդ հազարամյակից մինչև Ք.ա. 1-ին հազարամյակի կեսերով<sup>7</sup>: Ուստինասիրելով Արագածի, Գեղանա, Վարդենիսի, Սյունիքի լեռներից հայտնաբերված ժայռապատկերները՝ և Ա. Մարտիրոսյանը նրանցում հանդիպող պատկերագրերը համեմատեն Վանի թագավորության հինգուգլիքների<sup>8</sup> և նայ միջնադարյան մատուցագրության մեջ հիշառությամբ նշանագրերի<sup>9</sup> հետ և ցուց տվեց դրանց ազգակցությունն ու «արմատով խակ հայատանյան երևույթ» լինելը<sup>10</sup>: Հայկական լեռնաշխարհում պատկերագրությունը, հանդես գալով նոր քարի դարում, լիովին ձևավորվել է պղնձերքարեդարյան-վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանում (Ք.ա. 5-3-րդ հազարամյակներ):<sup>11</sup>

Այսպիսով, շտմերական դյուցազնավեպի վկայությունը և նոյն ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում պատկերագրի գործածության փասորը կասկած չեն թողնում, որ Արատուա երկիրն ունեցել է սեփական գիր:

Սարդարյան Ա.Հ., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Ե., 1967, էջ 113-122: Ժայռապատկերների հարուստ (բայց չիրատարակված) հավաքածու ունի Ս. Պետրոսյանը: Այսուհետեւրծ, Հայաստանի նշված տարածքում դեռևս մնում են չուսումնասիրված ու չիրատարակված ժայռապատկերներ:

7. Մարտիրոսյան Հ. Ա., Ժայռապատկերների դասակարգման մի բանի նախնական տվյալներ.- ԼՀԳ, 1970, թիվ 8, էջ 70:

8. Բարսեgen Լ.Ա. Об урартской иероглифической письменности, ԼՀԳ, 1967, թիվ 2, էջ 85-90:

9. Միջնադարյան մատուցերում հիշատակվող նշանագրերի ամենամեծ ցուցակը կազմել է Հր. Աճառյանը (Աճառյան Հր., Հայոց գլերը, Ե., 1984, հայելված): Տե՛ս նաև Արքահամյան Ա. Գ., Հայոց գիր եւ գրչության, Ե., 1973, 236-243 էջերում զետեղված ցուցակը:

10. Հ. Ա. Մարտիրոսյանի այս հարցին նվիրված ուսումնասիրություններն ամփոփված են «Հայաստանի նախնադարյան նշանագրերը եւ նրանց ուրարտա-հայկական կրկնակները» (Ե., 1973) եւ, համրամատչելի տարբերակով, «Գիտությունն սկսվում է նախնադարյան» (Ե., 1978) գրքերում:

11. Մարտիրոսյան Հ. Ա., Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ.-ՊԲՀ, 1969, թիվ 3, էջ 183:

# ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԾԻՆԱՐՁԸ Ք.Ա. 3-ՐԴ ՀԱԳԱՐԱՄՅԱԿՈՒՄ ԸՍ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱՆԵՐԻ

Նախքան մեր ոստմնասիրության արդյունքներն ամփոփելը անհրաժեշտ ենք համարում ընդհանուր գծերով Աերկայացնել Հայկական լեռնաշխարհի Ք.ա. 3-րդ հազարամյակի մշակույթը, որի զարգացման աստիճանն էլ ավելի է հավատի դարձնում նշված տարածքում ու ժամանակաշրջանում պետության գոյության հնագիտներից Գորդոն Չայլդը, ոստմնասիրելով Հին Արևելքի հնագիտական հյուրը, եկավ այն եզրակացության, որ Հայկական լեռնաշխարհի մշակույթն իր պատկանելի հնորդյամբ ու արժանիքներով կարող է մրցել Հարավային Միջազգեսրի և Նեղոսի հովտի հնագույն մշակույթների նետ<sup>1</sup>:

Ք.ա. 4-րդ հազարամյակի վերջից Հայկական լեռնաշխարհը թէվակոխում է զարգացման վաղքրոնզեղարյան ժամանակաշրջան<sup>2</sup>, որը տեսում է շուրջ մեկ հազարամյակ<sup>3</sup>: Այս ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում առկա են նատակեցության և տնտեսության ընդհանուր ձևեր՝ երկրագործությունը, անասնապահությունը, ինչպես նաև օժանդակ ճյուղեր որարդությունն ու ձկնորսությունը: Զարգանում

1. Հայ ժողովրդի պատմություն, հ.1., Ե., 1871, էջ 125:

2. Նախկինում այդ ժամանակաշրջանը համարվում էր պղնձեֆարեդարյան ժամանակաշրջանի մի մասը, բայց այդ շրջանին բնորոշ մետաղը իրերի բազմազանության եւ մկնելեային բրանգի լայն կիրառման պատճառով այն վերամվանվեց վաղքրոնզեղարյան (Խեցեն Ա.Ա. Կավազ և Դրեվնի Վոստօք և Պատմություններ 4-րդ համար, Ե. 1963, ս. 3-14):

3. Հայկական լեռնաշխարհի վաղ բրանգի դարաշրջանը սկսում է Բյուց-բեփերի 1ր շերտից՝ Ք.ա. մոտ 32-31-րդ դարերից (այդ շերտի վերին՝ 2-րդ շերտը բվազրվում է Ք.ա.  $2820 \pm 90$  թթ, տես Արտեմьев Ա.Ա., Буомо С.В., Дрожженин В.М., Романова Е.И. Результаты определения абсолютного возраста ряда археологических и геологических образцов по радиоуглероду (C14).-СА, 1961, №2, с. 11).

Այն վերջանում է Շենզավիթի 4-րդ շերտով, որը ուղղիությանը վերլուծության արդյունքներով բվազրվում է Ք.ա.

են մանածագործությունը, կաշեգործությունը, բարի ու փայտի մշակությունը, բնակարանաշինությունը, այգեգործությունը<sup>4</sup>: Հասնելով զարգացման բարձր աստիճանի՝ տնայնագործությունից անջատվում եւ առանձին արտադրանքունք են դառնում մետաղագործությունն ու խեցեգործությունը:

Հայկական լեռնաշխարհը մետաղագործության զարգացման վաղ փուլերում կարեւոր դեր է խաղացել ինչպես Կովկասի, այնպես էլ Առաջավոր Ասիայի երկրներին մետաղ մատակարարելու գործում<sup>5</sup>: Հատկապես նշանավոր են եղել Հայկական Տավուսի լեռները: Լեռնաշխարհի զանազան մետաղներով հարուստ լինելու մասին բազմաթիվ տեղեկություններ կան հայ մատենագրության մեջ<sup>6</sup>: Անդրադառնալով Ք.ա. 3-րդ հազարամյակում մետաղագործության կարեւոր ճյուղերից զինագործությանը, անհրաժեշտ է հշել, որ այդ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի հնավայրերից գտնված կրթառավոր սեպական կացիները, լայնաշերդ դաշույնները և փետրավոր հիգակների գեղարդ-

---

2020 + 80 թթ (Սարդարյան Ս. Հ., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Ե., 1987, էջ 182):

Հստ Զ. Բարսեղի, Հայաստանի վաղ բրոնզի դարը պետք է բվազրել Ք.ա. 31-20-րդ դարերով / Burney Ch. Eastern Anatolia in the Chalcolitic and Early Bronze Age. - AS, YIII, 1958, p. 167. /, իսկ Զ. Մելարքը, համեմատելով Արևմտյան Հայաստանի հնավայրերի մշակույթը Սիրիայի, Պաղեստինի, Միջազգետի վաղդինաստիական եւ եզիստոսի 3-4-րդ դիմաստիաների ժամանակաշրջանների մշակույթների հետ, այն բվազրում է Ք.ա. 3200-2200 / 2100 թթ / Mellaert J. Anatolian Chronology in the Early and Middle Bronze age. - AS, YII, 1957, p. 73. /

4. Թվարկված արհեստների ու տնտեսության ձեւերի մասին մանրամասն տես Խանզադյան Է. Վ., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, Ե., 1987 գրքում:

5. Իսսեհ Ա.Ա. Կավկազ և Դревний Восток ..., с. 5 - 6

Շումերները չունենալով պղնձի հանքավայրեր, այն ներմուծել են Ամանոսի լեռներից, Փոքր Ասիայից ու Հայկական լեռնաշխարհից / Landsberger B. Assyrische Handelsaktion in Kleinasien aus dem dritten Jahrtausend, Leipzig 1925, S 21 - 25. /

6. Փակտոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 83: Ղազար Փարպեցի,

Ըստը բազմաթիվ գուգահեռներ ունեն հրանի, Փոքր Ասիայի, Կովկասի և հատկապես Միջազգետքի հնավայրերում: Բացի գենքերից, Հայաստանից գտնվել են նաև դրանց ձուման բազմաթիվ կաղապարներ, որոնք վկայում են դրանց տեղական արտադրության մասին<sup>7</sup>:

Հայաստանը դատնում է սեր փայլեցրած, երկրաշափական նախշերով ու գեղազարդ ոճով խեցեղենի հայրենիքը, որը միաժամանակ, հանդիսանում է հայաստանյան մշակույթի տարրերակիշ հատկանիշ: այդ տեսակի խեցեղեն է հանդիպում լեռնաշխարհի վաղքրոնզեարյան գրեթե բոլոր հնավայրերում, որոնց թիվը անցնում է 300-ից (հնավայրերի հման խորոշության որևէ այլ տարածքում հայտնի չէ):<sup>8</sup>

Աշխատանքի գործիքները միանման են, լեռնաշխարհում գերիշխում է ճատարապետական կառուցմերի նույն տեսակը՝ հարակից բառակուսի շենքերով և հում աղյուսն պատերով կրող կացարանները:<sup>9</sup>

---

Պատմություն հայոց, բարզմ. եւ ծանոթ. Բ. Ուլուբարյանի, Ե., 1982, էջ 22-23: Մովսէս Կաղանիակատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Բըննական բնագիրը եւ Աերածությունը Վ. Ալոաբելամի, Ե., 1983, էջ 9, 166: Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 81, 93, 97, 108, 108:

7. Мартиросян А.А. Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, с. 25 - 33

8. Խանգաղյան Է. Վ., Օշկ. աշխ., էջ 87.

Հայկական լեռնաշխարհի վաղքրոնզեարյան մշակույթի հետեւ են գտնվել Կիլիկիայի (Մերսին), Ասորիի (Ամուկ), Պաղեստինի (Քիրքեր-Կերակ, Բեր-Շան, Թարարա-Լի-Ակրա) հնավայրերում / Jirku A. Einige Kleinfunde aus Palastina und Syrien - Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, N 7, XIII, S. 165 - 172 /: Հյուսիսում այդ մշակույթի հետեւը համում են միշեւ Կուրան (Մայկով, Նովոսվորոնոյե) եւ Զեղենա-Ինգուշերիայի (Լուգովյե, Սերժեն-Յուրտ) տարածմերը Կրոնոս Ե.Ի. Դревнейшая культура Кавказа

и кавказская этническая общность. - СА, 1964, N 1, с. 26 - 43

Մշակույթի նման տարածվածությունը բացատրված է մշակութային ազդեցությամբ կամ Հայկական լեռնաշխարհից կատարված արտազարդերով:

9. Բնակարանների այս տեսակը Հայաստանում հայտնի է մինչվաղքրոնզեարյան՝ պղնձեբարեդարյան ժամանակաշրջանի մշակույթային շերտե-

Կենցաղային իրերից բացի լայն տարածում են ոմեցել պաշտամոնքային համակարգայան իրերը՝ եռոտոնի պատվանդաններ, բարձրադիր, լայն շորտերով, եզան ու խոյի տեսքով բազմատեսակ հենակներ, որոնք հայկական լեռնաշխարհի մշակութային գոտու դորս հայտնի չեն<sup>10</sup>:

Պաշտամոնքային ու կենցաղային իրերի, աշախատանքային գործիքների ու ճարտարապետական կառուցների միակերպությունն, անշոշտ, խոտում է միասնական մշակույթի, ինչպես նաև այդ մշակույթը կրողների միջև գոյություն ոմեցած ազգակցական կապի մասին<sup>11</sup>:

Հայաստանի վաղբրոնգեդարյան մշակույթը տարածքային առողմական Ք.ա.3-րդ հազարամյակի առաջին կեսին արեւելքում ընդգրկել է Ղարաբաղի լեռները<sup>12</sup>, հյուսիս-արեւելքում թուելքի (Թրիալեթի) շրջանը<sup>13</sup>, հյուսիս-արեւելքում սահման է ոմեցել Պոնտական և Ամստիտավյոսի լեռները<sup>14</sup>, հարավում ընդգրկել է Հայկական Տավրոսի լեռները, իսկ հարավ-արեւելքում Ուրմիա լճի ավազանը<sup>15</sup>: Ռուս-Հայակարդներն առանձնացնում են վերոնիշյալ մշակույթի մեջ (Արա-

---

թից (Շենգավիթի 1-ինից, Միլու-թեփեից, Քյուլ-թեփեի 1-ինից, Բարձ-Դերվիշի 2-րդից, Շոմու-թեփեից, Թոյրա-թեփեի եւ այլն) եւ կապվում է Միջագետի եւ արեւելամիջերկրածովյան վաղ մշակույթի հետ (Խանզադյան է. Վ., նշվ. նշխ., էջ 29):

10. Խանզադյան է. Վ., նշվ. աշխ., էջ 81:
11. Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի մշակութային միասնությունը նկատվում է սկսած Ք.ա. 6-5-րդ հազարամյակներից (Սարդարյան Ս. Հ., նշվ. աշխ., էջ 252-253, Խանզադյան է. Վ., նշվ. աշխ. էջ 88):
12. Կառարես Կ.Խ. Պատմական մեջ առաջարկությունները հայության մասին (Կառարես Կ.Խ. Պատմական մեջ առաջարկությունները հայության մասին, 1956, էջ 165-179).

13. Ժամանակին ընդունված Բ. Ա. Կուֆտիմի «Կուր-արախսյան էնելիթի»՝ որպես իմանուրույն մշակույթի մասին տեսակետը մերժեց Զ. Բարսեղը, միաժամանակ ցույց տալով, որ այդ մշակույթի ծագման շրջանը Հայկական լեռնաշխարհն է (հեղինակի մոտ՝ Արեւելյան Անտոլիա), իսկ Թրիալեթին (Թուելք) եւ Ուրմիա լճի ավազանը՝ տվյալ մշակութային գոտու ծայրամասերը /Burney Ch., նշվ. աշխ., էջ 165-166/:
14. Սարդարյան Ս. Հ., նշվ. աշխ., էջ 207:

15. Ուրմիա լճի ավազանում հայտնի են երկու վաղբրոնգեդարյան հնավայ-

բատյան դաշտ) **16** կամ երկու (Արարայան դաշտ և Խարբերդի ու Մալարիայի շրջան) կենտրոն<sup>17</sup>:

Խճագես տեսնում ենք, հնագիտական հյութը նոյնություն է ցուցաբերում ոչ միայն Հայկական Տավուսի և Վանա լճի շրջաններում (որ վիպերգերի քննությամբ տեղադրել ենք Արատտա երկիրը), այլև Ուրմիա լճի ավազանում (Ք.ա. 8-րդ դարում այնտեղ հիշատակվում է Արատտա անոնով գետ) և ողջ Հայկական լեռնաշխարհում: Մյուս կողմից, «Արատտա երկիր» ասելով պիտի հասկացված լիներ որեւէ շափանիշով միավորված տարածքաշրջան: Աշխարհագրական և մշակույթային շափանիշները տվյալ դեպքում ոչ միայն չեն բացառում, այլ լրացնում են միմյանց և, կարելի է ենթադրել, որ «Արատտա երկիր» անվամբ շումերները նկատի են ունեցել հնագիտական հյութի հիման վրա հստակ տեղորոշվող ու հիմնականում աշխարհագրական ամբողջություն կազմող Հայկական լեռնաշխարհի Ք.ա. 3-րդ հազարամյակի մշակութային գոտին, իսկ արատտացիները են կոչվել լեռնաշխարհի մշակույթը կերտողներն ու կորողները:

---

բեր՝ լից արեւելք գտնվող Ցանցի-թեփեն և արեւմուտինում՝ Գեոյ-թեփեն: Հայաստանի վաղ բրոնզին համապատասխանում է Գեոյ-թեփեի "K" շերտը, որը բվագրվում է Ք.ա. 3100-1950/1900 թթ: Երկու հնավայրից էլ հայտնի են շենգավիրյան տիպի կլոր կացարաններ՝ հարակից բառակուսի շենքերով ու հում աղյուսե պատերով, որոնք, ինչպես վերը նշվեց, Հայկական լեռնաշխարհում ունեն տեղական ավանդույթներ: Հնավայրերի խեցեղենը նույնպես համապատասխանում է հայաստանյան սեւ փայլեցրած, երկրաչափական նախշերով գունազարդ խեցեղենին: Բավական շատ գուգահեններ կան Արարատյան դաշտի, էրզրումի շրջանի, Վաս և Ուրմիա լերի ավազանների հնավայրերի միջև (Սարդարյան Ս. Հ., Աշվ. աշխ., էջ 208-209, 212: Խանզադյան Է. Վ., Աշվ. աշխ., 76-88: Burney Ch., Աշվ. աշխ., էջ 165-169, նոյնի Excavations at Yanik Tepe / North - West Iran /, "Iraq", v. XXIII, v. 2, 1961, p. 138 - 153; Melkett J. Anatolian Chronology, p. 3 - 5):

16. Խանզադյան Է. Վ., Աշվ. աշխ., էջ 86-88: Սարդարյան Ս. Հ., Աշվ. աշխ., էջ 213, Burney Ch., Աշվ. աշխ., էջ 165-166:

17. Burney Ch., Աշվ. աշխ. էջ 165-166, 168:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ծովմերական գրական հուշարձանների մեջ առանձնահատող տեղ է գրավում ինը վիպերգից բաղկացած դյուցազնավեպը՝ հնագոյնը իր ժամրի մեջ։ Այն փառաբանում է շումերական ներտաներ Էնմերքարի, Լոգալրանդայի և Գիլգամեշի գործերն ու պիրանքները։ Ըստ «Ծովմերական արքայացաննելի» հրանք, համապատասխանաբար, Ուրուկի առաջին հարստության երկրորդ, երրորդ և հինգերորդ տիրակալները են։ Վիպերգերի հիմքում ընկած իրադարձությունները տեղի են տեսել Ք.ա. 28-27-րդ դարերում։

Դյուցազնավեպի վիպերգերից հինգում հիշատակվում է Արատուա երկրը։ Այս աշխատությունը նվիրված է Արատուա երկրի տեղադրության, անվան և այլ հարցերի պարզաբանմանը։ Նախկինում Արատուան տեղադրվել է Աֆրամաստանի, Իրանի և Հայկական լեռնաշխարհի տարածքում։ Աշխատության հետինակը Արատուան տեղադրում է Հայկական լեռնաշխարհում, քանի որ։

ա. «Էնմերքարը և Էնսումքեշդանան» վիպերգի համաձայն Արատուայից Ծովմեր գնում էին «միրուկի գետով»։ Ուրուկով հոսած միակ գետը Եփրատն է։ Արատուա-Ծովմեր շրային ճանապարհը չէր կարող անցնել Պարսից ծոցով, այլապես թնագրում կիշատակվեր այն (առվորաբար՝ «Արեւածագի ծով» կամ «Հավերծ աղմկող ծով» անունով) և Ծովմերից Արատուա են կցնային շրային ճանապարհով, առկայն շրային ճանապարհ միակողմանի էր։ Ուրուկից հյուսիս՝ մինչեւ Հայկական Տավլուի լեռներն ամենաբարձր կետը չի անցնում 1000 մետրից, իսկ Արատուան վիպերգում հիշատակվում է որպես բարձր լեռնային երկիր։ Նշանակում է՝ Արատուան գտնվել է Հայկական Տավլուի շրջանում։ Այդ շրջանից Եփրատով դեպի Միջազգետը շրային միակողմանի ճանապարհի մասին հիշատակում է հայու Հերոդոտոսը։

բ. Ծովմերից Արատուա տանող ցամաքային ճանապարհներից մեկը, համաձայն «Լոգալրանդան և Խոտուում լեռը» վիպերգի, անցնում էր Խոտուումից խոտիների երկրի անոնն և և տեղադրվում է Վանա լճից հարավ-արևելքը։ Արատուա երկրի տեղորոշման նարատակով՝ շարտմակերով Ծովմեր-Խոտուում գիծը, դուս ենք զայիս Վանա լճի ավազան։ Կրկին Հայկական լեռնաշխարհ։

գ. «Էնմերքարը և Արատուայի գերազոյն քորմը» վիպերգում Արատուան կոչվում է «սուրբ օրեքների երկիր»։ «Գիլգամեշը և անման-

Երի երկիրը» վիպերգում «անմահների երկիր» գնալու համար որպես ճանապարհացուց արևի աստվածը Գիյզամեշին տալիս է «ողեափի Արատուա ճանապարհը ցուց տվող» յոր մոգական էակ, որից հետեւում է, որ «անմահների երկիրը» Արատուան է: Աքադական «Գիյզամեշ» դյուցազնավեպում Գիյզամեշը հասնում է շրմեղեղից հետո անմահություն ստացածների երկիր («անմահների երկիր»), որի ճանապարհին հայրահարում է Մաշու լեռները: Օքնեղեղից փրկված Ռունափիշտիմը պատմում է, որ երբ նրա նավը կանգ առավ Նիցիր լեռան վրա, և նա խնկարկում ու զրհաբերություն կատարեց, աստվածները ժողովի հավաքվեցին այդտեղ և որոշեցին անմահություն չնորմել շրմեղեղից փրկվածներին, իսկ մարդկությանը՝ կյանք: Ք.ա. 24:23-րդ դդ. թվագրվող շումերա-աքադական մի քարտեզի վրա պահպանվել է «Աստվածների ժողովի լեռ (երկիր)» տեղանունը և այն համապատասխանում է Եփրատի ու Տիգրիսի ակունքների շրջանում գտնվող լեռնային երկրին՝ Հայաստանին: Նշենք, որ Աստվածաշնչում եա շրմեղեղից փրկվածների նավը կանգ է առել Հայկական լեռնաշխարհում «Արարատ/η լեռների վրա»: Իսկ «անմահների երկիր» ճանապարհին հանդիպող Մաշու լեռները համադրելի են հոմական և հայկական ադրյուններում հանդիպող Մասիս կամ Մասին լեռների հետ: Այսպիսով, շումերական, աքադական և հին երրայական ադրյունների տեղեկությունների համադրումը ցուց է տալիս, որ «առվր օրենքների» և «անմահների» երկիր Արատուան, շրմեղեղից փրկվածներին ապաստան տված Նիցիր լեռը, Արարատ/η լեռները և «Ասավածների ժողովի լեռը» գտնվում են Եփրատի ու Տիգրիսին ծնունդ տվող լեռներկրում Հայկական լեռնաշխարհում:

Արատուան այլ տարածքներում տեղադրողները քերում են հիմնականում երեք փաստարկ, որոնք հետինակի կարծիքով, հիմնավոր կովանենք չեն Արատուա երկիր տեղադրության համար: Դրանք են.

ա. Ծովմերից Արատուա մեկնող դեսպանի Սուզային և Անշան երկրին (Էլամ, հարավ-արեւամույան Իրան) «խոնարհվելը» «Էնմերքարը և Արատուայի գերազուն ցուրմը» վիպերգում, ինչը հետինակի կարծիքով, կապվել է ոչ թե ճանապարհի ուղղության, այլ Ուրուկի հովանավոր Խնաննա աստվածունու պաշտամունքի հետ: Հետինակն իր այդ կարծիքի հաստատումն է համարում նոյն վիպերգում հիշվող Խնաննայի պաշտամունքի տաճարի անունը՝ «Անշանի տուն», բացի այդ, Խնաննան Լուսաբեր (Վեներա) մողորակի՝ «արեւածագի աստղի» աստվածունին էր, և Ծովմերից դեսպանի արեւելք տարածվող էլամական լեռները Ծովմերում

պետք է կապվեին նրա պաշտամոնքի հետ: Ի դեպ, դեսպանն Արատուա էր զնում նենց Խճաննայի խորհրդով:

բ. Լաջվարդ (լազորիս) թանկարժեք քարի հիշատակությունը, որի պատճառով Արատուան տեղադրվել է լաջվարդի հանքերով հարուստ կամ նրա տարածման ուղիների վրա գտնվող երկրամասերում: Լաջվարդ և լաջվարդին նման թանկարժեք քարեր ու նրանց հանքեր են հիշատակվում նաև Հայաստանում, ուստի և լաջվարդի հիշատակությունը չի հակասում նեղինակի տեսակետին:

գ. Ք.ա. 714 թվին Սարգոն Բ-ի դեպի Մանա և Վանի թագավորություն կատարած արշավանքի ընթացքում Ուրմիա լճի ավազանում Արատուա անոնով գետի հիշատակումը: Գետի և երկրի անոնների հովանությունը կարող է պատահական լինել. երկիրը և գետը հիշատակվում են երկու հազարամյակի հետավորությամբ: Չի բացառվում, որ Արատուա երկիրն ընդգրկած լինի նաև Ուրմիա լճի ավազանը. Ք.ա. 3-րդ հազարամյակում այն Վանա լճի ավազանի և Հայկական Տավրոսի հետ մտել է Հայկական լեռնաշխարհի մշակութային գոտու մեջ: Հնարավոր է նաև, որ «Արատուա» անվան հայտնվելն այդ շրջանում լինի Արատուայից Ուրմիա լճի ավազան բնակչության մի հատվածի արտագաղյօթ հետեւաք:

Հայաստան-Միջագետք բազմադարյան փոխարարերությունները հետքեր են լողել դիցարանության մեջ՝ ծնունդ տալով դիցարանությունների, որոնց մեջ սուանձնանում է հայկական Արա Գեղեցիկ և Շամիրամ դիցավետը: Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի (Ծովական Արատուայի) փոխարարերությունների արտահայտությունն է նաև շումերական Ռումոզի և Խճաննա աստվածագոյզի պատմությունը: Վերոհիշյալ երկու դիցարանությունների մեջ էլ Հայկական լեռնաշխարհը (Արատուա, Հայաստան) ներկայացնում է դրական գծերով օժտված արական կերպարը, իսկ Միջագետքը (Ծովական, Ասորեստան)՝ իգական կերպարը՝ օժտված բացասական գծերով: Հետինակի կարծիքով, այս երկու պատմություններին սյուժեսային հիմք և սկզբնադրյուր է հանդիսանում նախքան շումերների նախնիների գաղյուր Ք.ա. 6-րդ հազարամյակում՝ Հայկական լեռնաշխարհում և Հյուսիսային Միջագետքում ստեղծված մի ավանդություն, որում, հավանաբար, արտացոլվել է միջցեղային ամուսնության ստվորություրը: Այդ պատմության շումերական տարրերակը՝ Ռումոզի-Խճաննա աստվածագոյզի, իսկ ավելի ոչ հայկական տարրերակը՝ Արա Գեղեցիկի և Շամիրամի պատմությունն է:

«Արատուա» անոնը շումերեն չի բացատրվում: Քանի որ Արատուան տեղադրվում է Հայկական լեռնաշխարհում և մտել է հնդեւրոպական Շախանայրենիքի տարածքաշրջանի մեջ, կարելի է ենթադրել երկրի բնակիչների և ճրանց երկրանվաճ հնդեւրոպական ծագում: Թ. Գամկրելիին և Վ. Խվանովը հնարավոր են համարում Արատուա անվան ծագումը հնդեւրոպական «գետ, ջրեր» արմատից: Հեղինակին ավելի համոզիչ է թվում և Մարտիրոսյանի բացատրությունը, որի համաձայն այդ անվան հիմքում ընկած է հնդեւրոպական «սուրբ օրենք» արմատը: Ըստ հեղինակի նույն արմատից են ծագում Ռուարտո, Արարատող և այլ աշխարհագրական անունները:

Արատուայում առաջնակարգ դեր էր խաղում քրմական դասը: Երկրի ճակատագրին վերաբերող կարեւոր հարցերի լուծման համար գումարվել է ավագների ժողով: Պետական տնտեսության կառավարման գործում թիշ հշանակություն չեն ունեցել վերակացումներն ու հարկահանները: Արատուայում հիշվում է արքունի շտեմարան: Տնտեսության զարգացման գործում կարեւոր է եղել ձիերի ընտելացումն ու օգտագործումը (ձիերի առաջին հիշատակումը սեպագիր բնագրերում) և ապրանքափոխանակային հարաբերությունները. արատուացիներն արտահանում էին մետաղներ, շինարարական և թանկարժեք քարեր ու ներմուծում երկրագործական մշակույթներ, գիճի և այլն:

Ամեն մի ժողովուրդ ունեցել է իր դիցարանը, ճրանց հետ կապված հավատալիքները: Արատուացիների հովանավոր աստվածը եղել է Դումուզին (հմմտ. հայկական Արա Գենեցիկի հետ), ճրա ջույրը, որի անոնը հշանակել է «Երկնային խաղողի վազ», հանդես է գալիս իրեւ բարու մարմնավորում և կրում «իմաստնոմի», «երգասեր», «հմայունի» և «տեսանող» մակերիճները: Հայտնի են նաև Դումուզիի հայրն ու մայրը: Հայրը շումերական աղյուրներում հանդես է գալիս որպես ջորերի ու իմաստության աստված, ճրա պաշտամունքը կապվում է Հայկական լեռնաշխարհի հետ, իսկ աքաղական աղյուրները ճրան կոչում են Հայ՝ մի անոն, որ նույնանում է լեռնաշխարհի բնիկների՝ հնդեւրոպացի հայերի հնքնանվան հետ:

Հետաքրքիր են դավաճանի որդուն շողջումներու, հարսանյաց ծեսի ժամանակ հարսնացուին սպիտակ զգեստ հազցնելու և աշքերը ծարիրով սեւացնելու սովորույթներն արատուացիների մոտ: Նրանց հավատալիքների համաձայն՝ ամեն բան կախված էր աստվածների բարեհանությունից և ամեն մի երկիր, քաղաք և անձ ուներ իր գերբնական հովանավորը:

Արատուայի մասին վիպերգերի պահպանած կարեւորագույն տեղեկություններից մեկը Արատուայում զրի գործածության վկայությունն է: Այն եւ Ք.ա. 3-րդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհում ինքնուրուց պատկերագրի գործածության փաստը բերում են մեկ եզրակացության՝ Արատուան ունեցել է սևիական զիր:

Ք.ա. 3-րդ հազարամյակում հնագիտական նյութը նոյնություն է ցուցաբերում ողջ Հայկական լեռնաշխարհի և որոշ հարակից շրջանների տարածում: Այդ ժամանակաշրջանի հնավայրերի թիվը լեռնաշխարհում 300-ից ավելի է, և երանց բարձր գարգացման հաստած մշակույթն իր արժանիքներով համեմատելի է Միջագետքի ու Եզիպոտուի հնագույն մշակույթների հետ: Այդ մշակույթի հետքերը հյուսիսում համեմում են մինչեւ Կորճան և Զեշենա-Խօռշերիա, իսկ հարավում Սիրիա և Պաղեստին: Լեռնաշխարհում պաշտամունքային ու կենցաղային իրերի, աշխատանքային գործիքների ու նարտարապետական կառուցների միակերպությունը վկայում են հրանում ինքնուրուց ու միասնական մշակույթի և այդ մշակույթի կրողների ազգակցության մասին, որը զայխ է դեռևս Ք.ա. 6-5-րդ հազարամյակներից:

Կարելի է ենթադրել, որ շումերական արյուրների «Արատուա» անոնը սրբի է հնագիտական նյութի հիման վրա հասուակ տեղորոշվող և աշխարհագրական ամրողություն կազմող Հայկական լեռնաշխարհի Ք.ա. 3-րդ հազարամյակի մշակուքային գոտուն: Հօգուս այս ենթադրության է խոսում այն փաստը, որ միջագետքյան սկզբնաշրջություններում Հայկական լեռնաշխարհը, սովորաբար, հանդես է զայխ մեկ հավաքական անվամբ՝ Վերին երկիր, Նախիր, Ուրարտու:

## ՀԱՄԱՌԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀԳ-Լրաբեր հասարակական գիտությունների

ՀԱՊ-Հին Արեւելքի պաթղիա, Ե., 1982

ՊԲՀ-Պատմա-բանասիրական հանդես

AŠ-Anatolian Studies

JSC-Journal of Cuneiform Studies

JNES-Journal of New Eastern Studies

АВИИУ - Дьяконов И.М. Ассирио-вавилонские источники по истории Урарту. -

ВДИ - Вестник древней истории

ВДИ, 1951, NN 2-4

КСИА - Краткие сообщения института археологии АН СССР

СА - Советская археология

МНМ - Мифы народов мира

## Summary

ARTAK MOVSISIAN

### THE ANCIENT STATE IN ARMENIA:

#### A R A T T A

(28-27 centuries B.C.)

The Sumerian epos, one of the oldest in the world, consists of nine epic songs based on the historical events of the 28-27<sup>th</sup> centuries B.C. Five of them mention the Aratta land, and present study is devoted to the problems of its location, denomination, origins, state structure, economic and cultural life etc.

In recent times the Aratta land was located by researchers on the territory of Afghanistan or Iran or the Armenian upland. But by the author's view Aratta is to be located in the Armenian Upland as far as:

a) according to the epic song "Enmerkar and Ensuhkesdanna" the road from Aratta to Sumer was flowing by "the river of Uruk". The only river crossing Uruk was Euphrates. The Aratta-Sumer road couldn't have been running through the Persian Gulf, otherwise the Gulf would be reflected on the text (usually the Sumerians referred to the Persian Gulf as to "the Sea of Sunrise" or "the Ever-roaring Sea"). Reciprocally the road from Sumer to Aratta would also be the water one. Nevertheless, it was known as one-way road. To the north from Uruk up to the mountains of Armenian Taurus the highest peak doesn't exceed 1000 metres, while in the epos the Aratta land is mentioned as a mountainous country. Consequently Aratta should be located in the area of the Armenian Taurus from where the one-way river road by Euphrates was beginning up to Mesopotamia as witnessed by Herodotus.

b) according to the epic song "Lugalbanda and the Hurrum Mount" one of the land-roads from Sumer was passing through Hurrum. Hurrum was the name of the Hurrian land and it was located to the south-east of the Van lake. To come upon the Aratta land moving in the direction of Sumer-Hurrum we pass through the basin of the Van lake, that means again the Armenian Upland.

c) in the epic song "Enmerkar and the Lord of Aratta" this land is recorded as "the land of sacred laws/rituals". In the song "Gilgamesh and the Land of Living" the god of the sun Utu, helping Gilgamesh to find "the Land of Living" ("The Land of Immortals") presents him seven magic creatures (amulets) "which would show the way to Aratta". Thus we may draw a conclusion that Aratta represents "the Land of Living".

In the Akkadian epos of Gilgamesh the hero reaches the land of people, who were granted immortality after the Deluge ("the Land of Immortals") and on

his way to it he overcomes the Masu mountains. Utnapishtim, a survivor of the Deluge, tells how his boat pulled in to the top of the Nisir mount. When he incensed up and made sacrifices, Gods hold a council there and decided to grant immortality to the survivors of the flood and also to present life to the rest of humanity. On a Sumerian-Akkadian map dated as contemporary to Sargon of Akkad (24-23 ce. B.C.), there is a geographical name preserved as "Mountain of Gods' Council". And it must be corresponded to the mountainous land which has given birth to the Euphrates and Tigris, otherwise to Armenia. In the Bible the survivors' boat had also pulled in to the Armenian Upland, "to the Ararat/d mountains". And as to the Masu mountains which were placed on the way to "the Land of Living", they can be compared with Masius or Masion mountains recorded in Greek and Armenian sources as desposed to the south of Armenian Taurus. Generalising all above mentioned and comparing the information from Sumerian, Akkadian and Hebrew sources, we may conclude that "the Land of Sacred Laws" and "the Land of Living" Aratta, the mount Nisir, mountains Ararat/d and "the Mountain of Gods' Council" must have been located in the Armenian Upland. From the author's point of view those who locate Aratta in other places lack cogent arguments and convincing proofs for the desposition of Aratta. The name of Aratta has no ethimology in Sumerian language. Since it was desposed in the Armenian Uphund and belonged to the Indo-European premotherland, one can presume that its inhabitants were Indo-European by origin, and the name of the land has also Indo-European roots. Th. Gamkrelidze and V. Ivanov consider that the name "Aratta" has an Indo-European origin and descents from the appropriate root "Waters, River". H. Martirosian's opinion seems more plausible to the author, according to which the origin of the name is Indo-European and means "Sacred Laws" (compare Aratta's epithet "the Land of Sacred Laws"). The author considers that the same root turns up in the names Urartu, Ararat/d, Kardu.

The age-long relationship between Armenia and Mesopotamia are traceable in mythology, giving birth to various epic tales and legends. In the present study the author tries to show that the Sumerian epic tale "Dumuzi and Inanna" and the Armenian "Ara the Beautiful and Shamiram" have the same conceptional and fabulous sources, that is a tale created in Armenia and Northern Mesopotamia in the 6-th millenium B. C., before the migration of Sumerian ancestors. In the tale the tradition of intertribe marriages is reflected. On the basis of Sumerian sources the author has made a preliminary attempt to reconstruct the inherited part of the Arattian mythology. There is also an analysis of traditions and beliefs of Arattians.

Despite the poor factual material the state structure and economy of Aratta are elucidated as much as possible. There are serious arguments to believe that Aratta had its own alphabet. An archeological survey of the 3-rd millenium Armenia is enclosed.

## ДРЕВНЕЙШЕЕ ГОСУДАРСТВО В АРМЕНИИ. АРАТТА (28-27-ые вв. до р.Х.)

Древнейший в мире шумерский героический эпос состоит из девяти эпических песен, в основе которых лежат исторические события 28-27-ых вв. до р. Х. В пяти из них упоминается страна Аратта, проблеме местоположения которой, установлению этимологии ее названия, а также вопросам государственной структуры, хозяйственной и духовной жизни данной страны посвящена настоящая работа. До сих пор Аратта располагалась на территориях Афганистана, Ирана и Армянского нагорья. Автор данной работы помещает Аратту в Армянском нагорье исходя из следующего:

а) Согласно эпической песне "Энмеркар и Энсухкешданна" из Аратты в Шумер на кораблях поплыли по "реке Урука". Единственная река, протекающая через Урук, Евфрат. Дорога Аратта-Шумер не могла пролегать через Персидский залив, иначе в тексте упоминался бы залив (Персидский залив шумерами обычно назывался "Море восхода солнца" или "Вечно шумящее море") и из Шумера в Аратту тоже поплыли бы по морскому пути, но дорога была односторонней. Севернее Урука до гор Армянского Тавра наивысшая точка не превосходит высоты 1000м., а в эпосе Аратта упоминается как высокогорная страна. Следовательно, Аратта должна находиться в районе Армянского Тавра, откуда начинался односторонний речной путь по Евфрату до Месопотамии, о чем свидетельствует и Геродот.

б) Согласно песне "Лугалбанда и гора Хуррум" одна из сухопутных дорог из Шумера в Аратту проходила через Хуррум. Хуррум - название страны хурритов, которая находилась на юго-востоке от озера Ван. Чтобы найти страну Аратта, продвигаясь по направлению Шумер-Хуррум, выходим в бассейн озера Ван - вновь на Армянское нагорье.

в) В песне "Энмеркар и верховный жрец Аратты" Аратта названа "страной святых обрядов/законов". В песне "Гильгамеш и страна бессмертных", чтобы найти "страну бессмертных" бог солнца Уту подарил Гильгамешу семь магических амулетов "к Аратте путь указывающие", из чего следует, что Аратта есть "страна бессмертных". В аккадском эпосе "Гильгамеш" главный герой достигает страны, где живут люди, получившие после потопа бессмертие ("страна бессмертных"), по дороге к которой преодолевает горы Машу. Переживший потоп Утнапиштим

рассказывает, что, когда его ковчег остановился на горе Нисир (Ницир) и он возжег благовония и принес жертву богам, боги собрались на горе и решили подарить бессмертие пережившим потоп. На шумеро-аккадской карте мира, которая датируется временем Саргона Аккадского (24-23-ые вв. до р.Х.), та горная область, откуда берут начало Евфрат и Тигр (т.е. Западная Армения) названа "горой (страной) собрания богов". Согласно Библии ковчег спасавшихся от потопа остановился в Армении ("на горах Аракат/да"). А горы Машу, встретившиеся по дороге к "стране бессмертных", идентичны горам Масиус или Масион (зарегистрированным в греческих и армянских источниках), расположенным южнее Армянского Тавра. Таким образом, сопоставление сведений шумерских, аккадских и древнееврейских источников показывает, что "страна святых обрядов/законов" и "страна бессмертных" Аратта, горы Нисир, горы Аракат/да и "гора (страна) собрания богов" располагаются в Армянском нагорье.

Автор считает, что факты, приведенные прежними исследователями для определения местоположения страны Аратта на иных территориях, не являются аргументированным основанием для решения данного вопроса.

Название страны Аратта не имеет объяснения на шумерском языке. Поскольку Аратта помещается в Армянском нагорье и заходит в регион прародины индоевропейцев, можно полагать, что ее жители являются индоевропейцами по происхождению и название страны также имеет индоевропейское происхождение. Т. Гамкрелидзе и Вяч. Иванов считают возможным происхождение названия "Аратта" от индоевропейского корня "вода, река". Не отрица эту версию, автор более вероятным считает точку зрения Р. Мартиросянья, согласно которой в основе названия лежит индоевропейский корень "святой закон" (ср. эпитет Аратты - "Страна святых обрядов/законов"). По мнению автора данной работы тот же корень имеется в названиях Урарту, Аракат/д, Карду и других географических именах. Многовековые отношения между Арменией и Месопотамией оставили следы в мифических сказаниях этого региона. В работе сделана попытка показать, что шумерское сказание "Думузи и Инанна" и армянское "Ара Гегецик(Прекрасный) и Шамирам" имеют единий сюжетно - концептуальный первоисточник-предание, созданное в Армении и Северной Месопотамии до переселения предков шумеров в 6-ом тыс. до р.Х. По всей вероятности в нем получил отражение обычай межплеменных бракосочетаний. На основе шумерских первоисточников в работе сделана предварительная попытка восстановить мифологию. Книга также содержит в себе верования и обычаи жителей Аратты.

В пределах возможности рассмотрены вопросы государственной и хозяйственной структуры страны Аратта. Имеются серьезные основания для предположения о существовании письменности в Аратте. В конце работы дается общий археологический обзор Армении 3-го тыс. до р.Х.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Առաջարան</b>	-----	<b>3</b>
Սկզբնաղբյուրներ եւ ժամանակագրություն	-----	<b>5</b>
Արատտա երկրի տեղադրությունը	-----	<b>10</b>
Արատտամ՝ շումերների աշխերով	-----	<b>24</b>
Արատտա, Ուրարտու, Արարատ/հ եւ այլ անունների մասին	-----	<b>29</b>
<b>Շումեր-Արատտա հարաբերությունների</b>	-----	<b>33</b>
արտահայտությունը դիցաբանության մեջ	-----	<b>33</b>
Պաշտամումը, հավատալիքները եւ սովորույթները Արատտայում	-----	<b>48</b>
Արատտայի պետական կառուցվածքն ու Բրմությունը	-----	<b>53</b>
Արատտայի տնտեսությունն ու ապրամբափոխանակային հարաբերությունները	-----	<b>57</b>
Արատտայում զրի գոյության հարցը	-----	<b>60</b>
Հայկական լեռնաշխարհը Ք. ա. 3-րդ հազարամյակում	-----	<b>63</b>
ըստ հնագիտության տվյալների	-----	<b>68</b>
Համառոտագրությունների ցանկ	-----	<b>72</b>
<b>Summary</b>	-----	<b>73</b>
<b>Резюме</b>	-----	<b>75</b>

**«ԴԵՊԻ ԵՐԿԻՐ»**  
Մատենաշարով լույս են տեսել

**ԱՐԱԾ**  
(Մահվամ իիսնամյակի առթիվ)

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

**«ԳԵՏՍԱՀԵՆ»**

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ  
**«Ի՞՞Զ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ,  
ՃԱՌՈՒԹՈՒՄ»**

ԳՀՈՐԴ ԽՈՒԴԻՆԵԱՆ  
«Հ.Յ.Դ. ԱՌԱՋԻՆ  
ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ»

РУБЕН.  
**“Организация А. Р.  
Дашнакцутюн”**

ԽՋДЕ.  
**“Открытые письма  
армянской интелигенции”**

«ԴԵՊԻ ԵՐԿԻՐ»

Մատենաշարով լուս կտեսնեն

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ»

(Անհայտ գրողի օրագիրը)

ԴԻՎԱՆ

«ՆԱԽԱԴԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԻՆՔԱԼՊԱՀՏՊԱՆՈՒԹՅԱՆ»

ՆՐԴԵՀ

«ԽՈՐՀՐԴԱՆՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

СИМОН ВРАЦЯН

“Армения между большевистским  
молотом и турецкой наковальней”


ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԻԱՆ  
Հնագույն պետությունը Հայաստանում  
**A. R. A. S S U.**

ARTAK MOVSISIAN  
The ancient state in Armenia:  
**ARATTA**

АРТАК МОВСИСЯН  
Древнейшее государство в Армении:  
**АРАТТА**

Առողջապահ է տպագրության 20.08.92 թ.: Զափոր՝ 60 x 84 1/16:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպագրական 5 մամով = 4,65 պայմ. տպ. մամովի:  
Տպաքանակ՝ 5000: Պատվեր՝ 267: Գինը՝ պայմանագրային:

«Արքայի Վարանդեան» հ/պ Ճեռնարկություն,  
Երևան, Շոպորնի փողոց. թիվ 21:



VI-2.042

9(17.925)

J-91

b2.